ՏԵՏԵՍԱ-ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գ. Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-2002

Գ. Ս. ՔԱԼԱՍԱՐՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար

Խմբագրությամբ ակադեմիկոս Ա. Թ. ՄԿՐՏՉՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ՏՆՏԵՍԱ-ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ-2002

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար նախատեսված այս գիրքը պարունակում է 120 հարց ու պատասխան պետության և իրավունքի տեսություն առարկայի դասընթացից: Հարցերն ու նրանց պատասխանները համակարգված են այնպես, որ զգալիորեն հեշտացնում են ուսումնական նյութի ընկալումը և նախապատրաստումը ընթացիկ և ավարտական քննություններին:

Գիրքը գրված է պետության և իրավունքի տեսություն առարկայի ուսումնական ծրագրի համապատասխան: Հաշվի են առնված վերջին տարիներին տեղի ունեցած արմատական քաղաքական և պետաիրավական փոփոխությունները: Գրքի բովանդակությունը հարստացված է ուսումնական ծրագրերով նախկինում չնախատեսված, բայց այժմ տեսաբանական և գործնական նշանակություն ստացած թեմաներով: Դրանց թվում են. «Անցումային տիպի պետությունը և իրավունքը», «Իշխանության տարանջատման տեսությունը», «Հասարակական հարաբերությունները և մարդու կամքի ազատությունը», «Համեմատական իրավագիտություն» թեմաները:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐՑ 1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՆ

Պետության և իրավունքի տեսությունը (ՊԻՏ) – հասարակական-իրավական գիտություն է, որն ուսումնասիրում է հասարակության կյանքի և հասարակական հարաբերությունների պետաիրավական կողմը:

ՊԻՏ-ը միասնական գիտություն է: Դա բացատրվում է պետության և իրավունքի միաժամանակ ծագումով, նրանց փոխկապվածությամբ ու փոխներգործությամբ: Պետությունը չի կարող գոյություն ունենալ առանց իրավունքի, իսկ իրավունքը՝ առանց պետության: Այդ երկու սոցիալ-քաղաքական երևույթները անբաժանելի են, քանի որ իրավունքի միջոցով են սահմանվում պետության ձևը, կառուցվածքը, պետական ապարատի մարմինների ֆունկցիաները և իրավասությունները, իսկ առանց պետության և նրա կողմից ընդունվող իրավազոր կարգադրագրերի իրավունքը չի կարող կարգավորել հասարակական հարաբերությունները և իրականացնել իր կարգավորիչ ու պահպանական ֆունկցիաները:

Ինչպես բոլոր գիտությունները, այնպես էլ ՊԻՏ-ը ունի իր առարկան, այսինքն՝ ուսումնասիրվող հասարակական երևույթների և նրանցում գործող օրինաչափությունների որոշակի շրջանակը: ՊԻՏ-ի առարկան է Պետությունը և իրավունքը, դրանց ծագման ու զարգացման մասին ուսմունքները, պետության և իրավունքի տիպաբանությունը, իրավական նորմերն ու նորմատիվ-իրավական ակտերը, օրենսդրության համակարգման և վերլուծման ձևերն ու եղանակները և այլն: Այլ կերպ ասած, ՊԻՏ-ը ուսումնասիրում է պետաիրավական համակարգում գործող ընդհանուր

օրինաչափությունները և ընդհանրացնում է պետության ու իրավունքի զարգացման փորձը:

ՀԱՐՑ 2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եթե գիտության առարկան ցույց է տալիս, թե ինչ է ուսումնասիրում տվյալ գիտությունը, ապա դրա մեթոդաբանությունը ցույց է տալիս, թե ինչ սկզբունքների հիման վրա և ինչ գիտական միջոցներով ու եղանակներով է դա արվում: ՊԻՏ-ի կարևորագույն սկզբունքներն են ***պատմականությունը, բազմակողմայնությունն ու բազմակարծությունը***: Պետաիրավական երևույթների ուսումնասիրման և լուսաբանման համար ՊԻՏ-ը օգտագործում է մի շարք տրամաբանական հնարքներ, որոնց միագումարությունը կազմում է ՊԻՏ-ի մեթոդաբանությունը:

ՊԻՏ-ի ընդհանուր- գիտական մեթոդը ներառում է իր մեջ ուսումնասիրվող հասարակական երևույթների և առարկաների ***նկարագրությունը, դասակարգումը, բացատրությունը***, և ուսումնասիրության արդյունքի գիտական ***քննադատությունը***: Նկարագրությունում տրվում են գիտական տերմինների և հասկացությունների ձևակերպումը: Դասակարգման միջոցով ուսումնասիրվող օբյեկտները խմբավորվում են ըստ տեսակների և տիպերի: Բացատրության (պարզաբանման) միջոցով լուսաբանվում է ուսումնասիրվող առարկայի բովանդակությունը: Քննադատությունը կայանում է տարբեր գիտական դպրոցների և առանձին գիտնականների հայացքների արտահայտման մեջ, որը թույլ է տալիս սուբյեկտիվ կարծիքների բախման և գիտական վիճաբանությունների միջոցով հասնել օբյեկտիվ ճշմարտությանը կամ մոտենալ դրան:

ՊԻՏ-ում կիրառվում են նաև ընդհանուր տրամաբանական մեթոդներ.

ա) հիպոթեզ՝ գիտական ենթադրություն,

բ) անալիզ՝ երբ ուսումնասիրման օբյեկտը մասնատվում և հետազոտվում է մաս-մաս,

գ) սինթեզ՝ երբ մաս-մաս հետազոտված առարկան համադրվում և ներկայացվում է մեկ օբյեկտում (երևույթում),

դ) դեդուկցիա՝ երբ նոր գիտական դրույթը դուրս է բերվում նախորդ գիտելիքից,

ե) ինդուկցիա՝ երբ նախասկզբնական գիտելիքներից դուրս են բերվում ընդհանրացումներ:

ՊԻՏ-ում առանձնահատուկ տեղ է գրավում պետության և իրավունքի զարգացման միտումների ճանաչողության համար շատ կարևոր դեր խաղացող ***համեմատական իրավագիտության*** մեթոդը, որի միջոցով ուսումնասիրվում են տարբեր պետությունների սոցիալ-քաղաքական ինստիտուտները և համաշխարհային իրավական համակարգերը:

ՀԱՐՑ 3. ԻՐԱՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԱՅԴ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Իրավական գիտությունները կարելի է համախմբել երեք գիտական ուղղություններում՝ ***պատմա-տեսական, ճյուղային*** և ***կիրառական:***

Պատմա-տեսական գիտությունների խմբի մեջ են մտնում ՊԻՏ-ը, պետության և իրավունքի պատմությունը, քաղաքական և իրավական ուսմունքների պատմությունը, համեմատական իրավունքը և հռոմեական իրավունքը:

Ճյուղային իրավական գիտությունների թվին են պատկանում պետական (սահմանադրական), քաղաքացիական և քաղաքացիական դատավարության, քրեական և քրեական դատավարության, վարչական, աշխատանքային, ընտանեկան, ողղիչ աշխատանքային և մի շարք այլ ճյուղային իրավական գիտություններ:

Կիրառական իրավական գիտություններ են քրեագիտությունը, քրեաբանությունը, դատական հոգեբուժությունը, դատական բժշկությունը, դատական հոգեբանությունը, դատական հաշվապահությունը, դատական վիճակագրությունը:

Ճյուղային իրավական գիտություններն ունեն իրենց սեփական տեսու-

թյունը, որում ուսումնասիրվում է տվյալ ճյուղային գիտության անմիջական առարկայի օրինաչափություններն ու առանձնահատկությունները: Ճյուղային իրավական գիտությունների նկատմամբ ՊԻՏ-ը հանդես է գալիս որպես ընդհանուր և մաքուր տեսաբանական գիտություն: Նրա առաջատար տեղն ու դերը իրավական գիտությունների համակարգում կայանում է բոլոր ճյուղային իրավական գիտությունների համար ընդհանուր սկզբունքների և պետաիրավական համակարգերում գործող օբյեկտիվ օրինաչափությունների պարզաբանման մեջ, ինչը հիմք է հանդիսանում այլ գիտությունների ավելի արդյունավետ իմացության համար:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ: ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ԱԳՆԱԺԱՄԸ, ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ

ՀԱՐՑ 4. ԻՆՉ Է ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այն հարցը, թե ինչ է հասարակությունը և ինչ պատճառներով է այն առաջացել՝ միանշանակ ու վերջնական գիտական լուծում չի ստացել: Ուստի ստորև տրվում է հասարակության սահմանումներից մեկը, որն ամբողջովին չի արտահայտում «հասարակություն» երևույթի բարդ էությունը: Ըստ Մարքսի, օրինակ, հասարակությունը «մարդկանց փոխգործողության արդյունք է»: Մատերիալիստական ուսմունքների դասականները համարում են, որ այդ արդյունքն ստացվում է արտադրության և արտադրական հարաբերությունների ծագման ու զարգացման ընթացքում: Հասարակության մասին գիտությունը, անցյալի և այսօրվա մտածողներն առանձնացնում են «հասարակություն» երևույթի մի շարք հիմնական հատկանիշներ, որոնք բավարար չափով պարզաբանում են այդ բարդ սոցիալական երևույթի բովանդակությունը:

1. Հասարակությունը ծագել է բնությունից և կազմում է նրա բաղկացուցիչ մասը: Մեզ անհայտ պատճառներով մարդն ի սկզբանե օժտված է եղել այնպիսի կենսաբանական հատկություններով, որոնք նրան աստիճանաբար դուրս են մղել կենդանական աշխարհից, վերածելով մարդուն որակապես յուրահատուկ սոցիալական էակի:

2. Բնական կենսաբանական գործոնները կարող էին միայն հիմք հանդիսանալ մարդու ձևավորման համար: Մարդու և հասարակության

մասին գիտությունների գրեթե բոլոր նշանավոր ներկայացուցիչները համամիտ են, որ մարդու ձևավորման գործում վճռական դեր է խաղացել ***աշխատանքը:***

Պահանջվել է հարյուր հազարավոր տարիներ, որպեսզի մարդը փայտի և քարի օգտագործումից անցնի աշխատանքի գործիքների պատրաստմանը: Այս պատմական սահմանագծից սկսվում է մարդկային հասարակությունը, որի հետագա զարգացման ընթացքում փոխվում է ինքը մարդը:

3. Աշխատանքի միջոցով հասարակությունը վերափոխում և կերպարափոխում է բնությունը՝ իր պահանջմունքներին ու նպատակներին համապատասխան: Երկարատև էվոլյուցիայի և աշխատանքի շնորհիվ կատարելագործվում է մարդու ֆիզիկական կառուցվածքը, մարմնի ներքին օրգանները, հատկապես ձեռքերն ու ուղեղը, զարգանում է մարդու գիտակցությունն ու լեզուն: Այդ բոլորի հետևանքով մարդն սկսում է հայտնաբերել բնության հատկություններն ու օրենքները և օգտագործել դրանք հասարակության օգտի համար:

Այդ կապակցությամբ Էնգելսը գրում է. «Նախ աշխատանքը, իսկ այնուհետև ու դրա հետ միասին հասկանալի խոսքը դարձան այն երկու գլխավոր խթանները, որոնց շնորհիվ կապիկի ուղեղը աստիճանաբար վերածվեց մարդկային ուղեղի, որը, չնայած իր նմանությանը կապիկի ուղեղին, անհամեմատ գերազանցում է նրան ծավալով և կատարելությամբ: Իսկ ուղեղի հետագա զարգացման հետ զուգընթաց ընթանում էր նրա ամենամոտիկ գործիքների՝ զգայարանների հետագա զարգացումը»:

4. Կենդանիները նույնպես գտնվում են որոշակի փոխհարաբերությունների մեջ բնության հետ, սակայն այդ փոխհարաբերությունները կրում են սպառողական բնույթ: Կենդանիների կյանքն ամբողջովին կախված է բնության քմահաճույքներից, և նրանք օգտվում են բնության պատրաստի նյութերից, չեն կարող փոփոխություններ մտցնել իրենց գոյատևման պայմանների մեջ: Մարդիկ, նախ հարմարվում են բնական պայմաններին, ապա իրենք են կերտում իրենց ճակատագիրը՝ հասարակական արտադրության միջոցով, ստեղծելով կյանքի համար անհրաժեշտ միջոցներ, որոնք պատրաստի ձևով բացակայում են բնության մեջ: Մարդիկ իրենց ստեղծագործական աշխատանքով էական փոփոխություններ են մտցնում բնության

մեջ, կերպարափոխում են նրա արտաքին տեսքը և սխալ չէր լինի ասել, որ ստեղծում են երկրորդ բնությունը:

5. Հասարակության սոցիալական էությունը կայանում է նրանում, որ մարդկանց աշխատանքային գործունեությունը կրում է հասարակական բնույթ: Առանձին անհատները կամ մարդկանց փոքր միավորումները երբեք չեն կարող ստեղծել այն, ինչն ստեղծել և շարունակում է ստեղծագործել հասարակությունը: Այսպիսով, հասարակությունը մարդկանց համատեղ արտադրության արդյունք է, որը հանդես է գալիս որպես որոշակի տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և այլ հարաբերությունների ամբողջություն:

ՀԱՐՑ 5. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՈՐԾՈՂ ՕԲՅԵԿՏԻՎ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հավերժ և անսահման աշխարհին ապրում է իր օրենքներով: Հասարակությունում, որպես բնության մի մասնիկի, նույնպես գործում են օբյեկտիվ օրինաչափություններ, որոնցով պայմանավորված են նրանում տեղի ունեցող պրոգրեսիվ (առաջընթացային) կամ ռեգրեսիվ (ետընթացային) զարգացումները:

Ի տարբերություն երկրային միջավայրի օրենքներից, երբ կենդանիները ղեկավարվում են բնազդներով, իսկ բնությունում գործում են տարերային թվացող ուժերը, որոնք իրականում ենթարկվում են բնության օբյեկտիվ օրենքներին, միայն հասարակությունում են գործում գիտակցությամբ և կամքով օժտված ու կազմակերպված մարդիկ, որոնք իրենց առջև դնում են նպատակներ և ստեղծագործական աշխատանքով իրականացնում են դրանք:

Եթե բնության ընդհանուր օրենքները անմիջականորեն չեն շոշափում հասարակության սոցիալական շերտերի (դասակարգերի, դասերի և այլն) շահերը, ապա հասարակությունում, ընդհակառակը, այդ շահերը կարող

են պահպանվել հասարակության հակադիր ուժերի (սոցիալական խմբերի) պայքարի միջոցով, որը կարող է ընթանալ տարբեր եղանակներով: Հասարակությունում գործող այս օրինաչափությունում արտացոլվում է բնության մեջ գործող հակադրությունների միասնության և պայքարի հավիտենական օրենքը:

Հասարակական օրենքների առանձնահատկություններից մեկը կայանում է նրանում, որ դրանք գործում են որոշակի պատմական ժամանակահատվածում, որից հետո իրենց տեղը զիջում են նոր օրենքների, որոնք անհրաժեշտորեն ծագում են հասարակության մեջ տեղի ունեցող անընդհատական տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ փոփոխությունների հիման վրա, որոնք արտահայտվում են էվոլյուցիոն բարեփոխումներում կամ հեղափոխական (թռիչքածև) վերափոխումներում: Բնության ընդհանուր օրենքները մշտական են և չեն ենթարկվում փոփոխությունների անսահման ժամանակի մեջ:

ՀԱՐՑ 6. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Երկրագնդի մայրցամաքներում ծագած հասարակությունները միանման չեն և ունեն իրենց տարբերակիչ հատկանիշները, որոնք պայմանավորված են տարբեր ռասայական, ազգային, կենսաբանական առանձնահատկություններով, աշխարհագրական դիրքով, բնակլիմայական պայմաններով և բազմաթիվ այլ գործոններով: Սակայն անցյալի և այսօրվա հասարակության մասին գիտություններն առանձնացնում են մի շարք ընդհանուր հատկանիշներ, որոնք բնորոշ են բոլոր հասարակություններին: Թվարկենք դրանցից հիմնականները:

1. Հասարակությունը գիտակցությամբ օժտված և կամային գործողություններ կատարող ու ստեղծագործող մարդկանց ամբողջություն է: Առանձին անհատների միավորումը հասարակության մեջ տեղի է ունենում միայն ընդհանուր (հասարակական) շահերի հիման վրա:

2. Հասարակությունը կարող է գոյատևել համընդհանուր և համապարտադիր վարքի կանոնների (իրավունքի և այլ սոցիալական նորմերի)

և կանոնակարգված հասարակական ուժի՝ պետական իշխանության հիման վրա:

3. Ինքնանորացման և զարգացման դադարեցման դեպքում հասարակությունը որպես կենսաբանական օրգանիզմ մահանում է կամ փոխարինվում է մեկ այլ որակի հասարակությամբ:

4. Հասարակությունում միաժամանակ գործում են անհատական և հասարակական շահեր, որոնք պատկանում են հասարակության մեջ գործող օբյեկտիվ օրինաչափությունների թվին: Հասարակությունը չի կարող գոյություն ունենալ առանց հասարակական և անհատական շահերի համատեղման: Գլխավորն այստեղ կայանում է նրանում, թե որ շահերն են գերակայում այս կամ այն հասարակությունում: Պատմական տիպի շահագործական հասարակություններում (ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական) գերակայում է մասնավոր սեփականության վրա հենվող անհատական շահը, իսկ սոցիալիստական (կոմունիստական) տիպի հասարակություններում առավելությունը տրվում է հանրային սեփականության գերակայության վրա հենվող հանրային շահերին:

«Իդեալական» հասարակությունը, որի մասին երազել ու գրել են Պլատոնը, Արիստոտելը, Կամպանելլան, Օուենը, Սեն-Սիմոնը, Ֆուրյեն և հնադարի ու միջնադարի այլ մտածողներ, հնարավոր է միայն հասարակական և անհատական շահերի ներդաշնակ զուգակցության հիման վրա:

ՀԱՐՑ 7. ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ (ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ) ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ

Հասարակության առաջին. պատմական ձևը նախնադարյան համայնքն է, որին նախորդել են 2-3 միլիոն տարի տևողությամբ վայրենության ու բարբարոսության դարաշրջանները: Ըստ մարդաբանությունում և հասարակության մասին գիտություններում արտահայտվող կարծիքների, ժամանակակից մարդու ուղեղը ձևավորվել է պոլեոլիթի դարաշրջանում, որն էլ նախնադարյան համայնքային հասարակարգի ձևավորման ժամանակահատվածն է համարվում:

Տասնյակ հազարավոր տարիներ առաջ դրվում է մարդկային նյութա-

կան և հոգեկան կուլտուրայի սկիզբը, մարդիկ աստիճանաբար ցրվում են գրեթե ամբողջ աշխարհով մեկ և սկսում են յուրացնել ***«երկիր»*** մոլորակի կյանքի համար պիտանի տարածքները:

Նախնադարյան հասարակության սկզբնաբջիջն է կազմում սկզբում մայրական, իսկ այնուհետև հայրական տոհմը՝ հիմնված արյունակցական կապերի, հանրային սեփականության, աշխատանքի ընդհանրության և նյութական արժեքների հավասարության սկզբունքով բաշխման վրա: Դա, իհարկե, չէր բացառում ավելին ունենալու «ուժեղի իրավունքը»: Մարդու աշխատանքային գործունեությունը սկզբում կայանում էր գոյության համար միջոցներ հայթայթելում: Հետո փայտն ու անմշակ քարը փոխարինվում են աշխատանքի առաջին գործիքներով՝ քարե կացնով ու դանակով և այլ հասարակ, բայց մշակված գործիքներով: Այնուհետև ստեղծվում են նիզակը, նետն ու աղեղը:

Նախնադարյան հասարակությանը ծանոթ չէին մասնավոր սեփականությունը, մարդկանց բաժանումը դասակարգերի և մարդու շահագործումը մարդու կողմից: Իշխանական ֆունկցիաները կատարում էր տոհմի ժողովի կողմից ընտրված տոհմավագը, որը ոչ մի արտոնություններով օժտված չէր և միայն առաջինն էր համարվում հավասարների մեջ: Մարդկանց վարքն ու հասարակական հարաբերությունները կարգավորվում էին ***սովորույթներով***, որոնց գիտուններն էին տոհմավագներն ու քրմերը:

Նախնադարյան մարդը, որը լիովին կախված էր բնությունից, չէր կարող ճիշտ պատկերացում կազմել ոչ միայն բնության, այլ նաև իր սեփական բնության վերաբերյալ, ինչն աղբյուր է հանդիսանում առասպելաբանության և կրոնական պատկերացումների ծագման համար:

Արտադրության զարգացման ընթացքում արյունակից տոհմերը համախմբվում են ավելի մեծ համայնքներում և կազմում են ***ցեղեր***: Ցեղերում իշխանությունը, որն անջատված չէր հասարակությունից, իրականացնում էր ցեղային խորհուրդը, որը կազմված էր տոհմավագներից և զորավարներից:

Տասնյակ հազարամյակներ տոհմը մնում էր որպես ինքնակառավարման միավոր, մինչև որ արտադրական ուժերի ավելի արագ զարգացումը չբերեց աշխատանքի հասարակական բաժանման, արհեստագործության

ծագման, ապրանքափոխանակության, գյուղական համայնքների և արհեստագործության ու առևտրի կենտրոնների (քաղաքների) առաջացմանը: Այդ բոլոր գործոնները նպաստեցին մասնավոր սեփականության ու սոցիալ-տնտեսական անհավասարության ծագմանը առաջին անտագոնիստական դասակարգերի առաջացմանը (ստրուկների և շահագործող ստրկատերերի): Այսպիսով նախնադարյան հասարակարգը փոխարինվեց որակապես այլ բնույթի հասարակությամբ և հասարակարգով՝ ստրկատիրությամբ:

ՀԱՐՑ 8. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ԱԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Պետության ծագման գործընթացն աշխարհի ժողովուրդների մոտ սկսվել և ավարտվել է պատմական տարբեր դարաշրջաններում: Նույնիսկ մեր օրերին Աֆրիկայի և Ասիայի մայրցամաքներում կան բնիկներ, որոնք ապրում են տոհմային համայնքում և չեն ցանկանում դուրս գալ այդ վիճակից:

Նախնադարյան հասարակարգի որոշակի փուլում տեղի է ունենում հասարակական աշխատանքի բաժանում, որի հետևանքով հողագործությունը և անասնապահությունը դառնում են գյուղատնտեսության առանձին ճյուղեր: Հողագործական ցեղերն անցնում են նստակյաց կյանքի աշխատանքի բերքաբեր հովիտներում և մեծ ու փոքր գետերի ավազաններում: Անասնապահական ցեղերը քոչվոր կյանք են վարում իրենց երկրների բարձրադիր գոտիներում:

Կավագործության և ջուլհակության զարգացումը, այնուհետև մետաղների հայտնագործումն ու մշակումը խթանում է արհեստագործության զարգացումը և աշխատանքի մետաղե գործիքների և զենքերի արտադրությունը: Այս բոլորի արդյունքում մարդիկ հնարավորություն են ստանում արտադրել իրենց պահանջմունքներից ավելի նյութական արժեքներ, որոնք դուրս են բերվում փոխանակման և վաճառքի: Արտադրողների և սպառողների միջև միջնորդի դերը կատարում են վաճառականներն ու առևտրականները, ձևավորվում է վաճառականների խավը:

Որպես առևտրի և արհեստագործության կենտրոններ առաջանում են քաղաքները: Բնակչությունն աճում է, իսկ հասարակական հարաբերությունները բարդանում են:

Նախնադարյան մարդկանց բնորոշ համագործակցության հարաբերությունները հետզհետե փոխարինվում են տիրապետության և ենթակայության հարաբերություններով: Համայնքային հասարակության ընդերքում արդեն ծագած ապրանքային արտադրությունը մարդկանց ցույց է տալիս, որ կարելի է շահույթ ստանալ ոչ միայն անձնական աշխատանքով, այլ նաև ուրիշների աշխատանքի շահագործման միջոցով: Ահա այստեղից էլ ծագում է մասնավոր սեփականությունը: Աշխատանքի շահագործման արդյունքում նյութական արժեքները կուտակվում են առանձին ընտանիքների ձեռքում, առաջին հերթին տոհմավագների, ցեղապետների, զորավարների և նրանց մերձավորների, որոնցից էլ ձևավորվում է ազնվականությունը: Այսպիսով, մարդու շահագործումը մարդու կողմից մասնավոր սեփականության սկիզբն է նշանավորում, իսկ մասնավոր սեփականության պատճառով հասարակությունը բաժանվում է շահագործող և շահագործվող դասակարգերի և դասերի, ծագում է սոցիալական անհավասարությունը:

Անհավասարությունը նախնադարյան հասարակությունում ***բնական*** էր: Սոցիալական անհավասարությունը ծագում և աճում է մարդկային գիտակցության ու մտքի զարգացման հետ զուգընթաց: «Առաջինը, ով ցանկապատելով որոշակի հողակտոր, ասաց ***սա իմն է՝*** քաղաքացիական հասարակության իսկական հիմնադիրն է» (Ժան Ժակ Ռուսո):

Սեփականության գաղափարը չէր կարող միանգամից ծագել մարդու գիտակցությունում, այն կարող էր ծագել միայն մարդու աշխատանքային գործունեության շնորհիվ: Սեփականությունը դուրս է բերում մարդկանց բնական վիճակից, բայց դրանից հետո սկսվեցին սեփականության համար մղվող պատերազմները, հանցագործությունները, բազմատեսակ սոցիալական ցնցումները, որոնք այսօր էլ շարունակվում են աշխարհում:

Անզուսպ շահամոլությունը, ամեն գնով հարստանալու կիրքը, ոչ այնքան բնական պահանջմունքները բավարարելու, որքան ուրիշներից վեր կանգնելու համար, մղում է մարդկանց չարագործությունների, միմյանց

վնաս հասցնելու:

Նախնադարյան համայնքային հասարակության ճգնաժամը սրվում է, երբ նահապետական կոչվող ուժեղ ընտանիքները այլևս չեն բավարարվում տոհմային կարգերով, դուրս են գալիս տոհմից, կազմում են գյուղական համայնքներ և վարում են ինքնուրույն տնտեսություն: Համագործակցելով ուրիշ տոհմերից հեռացած ընտանիքների հետ, նահապետական ընտանիքները նաև բարեկամանում են փոխադարձ ամուսնությունների միջոցով: Դա բերում է ***արյունակցական կապերի խզման և տոհմի քայքայմանը:***

Պետության առաջացմանը նպաստում են բազմաթիվ այլ երևույթներ: Պատերազմները դառնում են կողոպուտի, ուրիշների հողի և գույքի յուրացման, մարդկանց ստրկացման միջոց: Ռազմագերիներին այլևս չեն սպանում, ինչպես նախկինում, այլ վերածում են անվճար աշխատուժի՝ ստրուկների: Մարդկանց աշխատանքը, առևտուրը, ազատությունը, իրավունքներն ու կյանքը կախվածության մեջ են հայտնվում տնտեսապես գերիշխող ազնվականությունից և զինված ուժից: Ուժի դիկտատուրան է գերիշխում փլուզվող նախնադարյան հասարակությունում:

Ընդհանուր աշխատանքների (ամրոցներ, ճանապարհներ, քաղաքացիական շինություններ և այլն) կազմակերպման, նվաճված տարածքների ժողովուրդներից տուրքեր և հարկեր բռնագանձելու, այդ ժողովուրդներին ու ստրուկներին հնազանդության մեջ պահելու, խռովություններն ու ապստամբությունները ճնշելու և նման այլ խնդիրներ լուծելու համար, ինչպես նաև բարդացած հասարակական հարաբերությունների կարգավորման նպատակով տնտեսապես գերիշխող դասակարգն ստեղծում է հասարակության ղեկավարման մեխանիզմ՝ **ՊԵՏՈՒԹՅՈՒՆ**:

Պետությունն առաջին հերթին ծառայում է իշխող դասակարգին, արտահայտում է նրա շահերն ու կամքը և դիմում է ցանկացած միջոցների այդ դասակարգի իշխանության պահպանության ու պաշտպանության համար:

ՀԱՐՑ 9. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ՀԱՏԿԱՆԻՇԸ

Նախնադարյան համայնքային հասարակարգում մարդիկ գտնվում էին բնական վիճակում, գոյություն չունեին պետությունն ու իրավունքը, մասնավոր սեփականությունն ու դասակարգերը, որոնք առաջանում են այդ հասարակարգի ճգնաժամային փուլում: Համայնքում գործում էր իշխանության ամենապրիմիտիվ ձևը՝ համայնքի ժողովն ընտրում էր տոհմավագ, որը սովորույթների հիման վրա կարգավորում էր համայնքի անդամների վարքը և նրանց մեջ ծագող հարաբերությունները, մնալով նրանցից մեկը: Այդ պրիմիտիվ իշխանությունը գործում էր հասարակության ներսում և ***բաժանված չէր նրանից***: Ծագելով մարդկության հասունության որոշակի փուլում, պետությունը դառնում է հասարակության ղեկավարման բարդ համակարգ, իսկ պետական իշխանությունն անջատվում է հասարակությունից, ***նրանից վեր է կանգնում և քաղաքական բնույթ է ստանում:***

ՀԱՐՑ 10. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Պետության հետ միասին ծագում է նաև իրավունքը: Տոհմա-ցեղային հասարակությունում գործող բանավոր սովորույթներն ու կրոնական ավանդույթները չէին կարող բավարարել զարգացող հասարակության աճող պահանջները մարդկանց վարքի և փոխհարաբերությունների կարգավորման հարցում: Իշխող ստրկատիրական դասակարգի նախաձեռնությամբ նրա շահերին չհամապատասխանող լիբերալ բնույթի սովորույթներն ուղղակի վերացվում են, մյուսները ձևափոխվում և հարմարեցվում են առաջին պատմական տիպի պետության և հասարակության պայմաններին ու պահանջներին, ստեղծվում են իշխող դասակարգի կամքն ու շահերն արտահայտող նոր չգրված սովորույթներ:

Գրի և գրականության ծագումից հետո սովորույթները գրի են առնվում, ստեղծվում են տարբեր ժողովուրդների և պետությունների մեջ գործող սովորույթների ժողովածուներ: ***Այսպես ծագում է սովորույթների իրավունքը,*** որն իրավունք է կոչվում առաջին հերթին իր գրավոր ձևի շնորհիվ:

Պետության և հասարակական հարաբերությունների զարգացման հաջորդ փուլում, երբ սովորույթների իրավունքով հնարավոր չէր կարգավորել բարդացող հարաբերությունները պետականորեն կազմակերպված հասարակությունում, պետությունն ինքն է սահմանում և հրապարակում վարքի կանոններ՝ իրավունքի նորմեր, որոնք ամրագրվում են համընդհանուր և համապարտադիր բնույթ կրող ***օրենքներում***: Օրենսդրական գործունեությունը դառնում է պետության կարևոր ֆունկցիաներից մեկը: Այդ իրավունքը պատկանում է պետությանը և ոչ մի այլ հասարակական կազմակերպության հետ չի կիսվում: Այսպես ծագում է ***իրավունքը ժամանակակից ըմբռնմամբ:***

Մարդկության հնագույն օրենքներից կարելի է հիշատակել Բաբելոնի ***Համմուրապու*** օրենքները (18-րդ դ. մթա), Դրակոնտի, Լիկուրգի, Սոլոնի օրենքները հնադարյան Հունաստանում (1-ին հազարամյակ մթա), Հնադարյան Հնդկաստանի Մանուի օրենքները, Հռոմեական 12 աղյուսակների օրենքները և այլն:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՐՑ 11. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՅԼԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պետության և իրավունքի ծագման պատճառների մասին դարերի խորքից եկող ուսմունքները տարբեր կարծիքներ են բովանդակում այդ հարցի վերաբերյալ և քննադատորեն են արտահայտվում միմյանց նկատմամբ: Տարբեր գիտական դպրոցների մտածողների տարաձայնություններն առաջին հերթին վերաբերում են պետության և իրավունքի առաջացման սկզբնապատճառներին: Ոմանք համարում են, որ պետությունն ու իրավունքը ծագել են աստծու կամքով, մյուսները պետության սկզբնապատճառն ու մոդելը տեսնում են ընտանիքում և գյուղական համայնքում, երրորդները վերագրում են մարդու բնածին ձգտմանը դեպի արդարությունն ու համերաշխությունը և այլն:

Նման և այլ բազմակարծությունը կարելի է բնական համարել, քանի որ մարդկային հասարակության մասին գիտություններում զգալի տեղ են գրավում մարդկային մտքի սուբյեկտիվ հայացքները, որոնք հաճախ չեն համատեղվում հասարակության մեջ գործող օբյեկտիվ օրինաչափությունների հետ, իսկ ճշմարտությանը հասնել կարելի է տարբեր կարծիքների բախման միջոցով:

Պետության և իրավունքի ծագման պատճառների բարդ խնդիրը թերևս կարող է լուծում ստանալ առանձին ուսմունքների գաղափարների անալիզի, նրանց էության ռացիոնալ հատիկների անջատման և դրանց ինտեգրացման (առանձին մասերի ամբողջացման) միջոցով: Այդ նպատակին հասնելու և անձնական կարծիք ձևավորելու համար առավել նպատակահարմար է ուսումնասիրել աստվածաբանական, նահապետական, պայմանագրային, օրգանական, բռնության և սոցիալիստական տեսությունների էությունը: Դա հնարավոր է, եթե ուսանողները առնվազն ուսումնասիրեն հաջորդ վեց հարցերում մատնանշված աշխատությունները:

ՀԱՐՑ 12. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնեական, մուսուլմանական և այլ եկեղեցիների սպասավոր աստվածաբանները դարեր շարունակ փորձում են հիմնավորել պետության և իրավունքի աստվածային ծագումը, ղեկավարվելով Աստվածաշնչի, Ղուրանի և «սուրբ» համարվող այլ կրոնական աղբյուրների դավանաբանության վրա: Օրինակ, հայտնի բիբլիական ասքը, որ չկա իշխանություն աստծուց չտված, իսկ աշխարհիկ իշխանությունը աստծու կամքով է հաստատված, եկեղեցին և աստվածաբանները դարձրել են անառարկելի դոգմա և համառորեն շարունակում են արմատավորել այն հավատացյալների գիտակցությունում:

Պետության ստեղծումը աստվածաբանությունը նմանեցնում է աշխարհի ստեղծման բիբլիական առասպելին, իսկ թագավորների (տիրակալների) գործողությունները համեմատում է աստծու գործելակերպի հետ, որն իր ստեղծած աշխարհի կառավարմանն անցնելուց առաջ ***քաոսի*** (բնական վիճակի) մեջ մտցնում է կազմակերպվածություն ու ներդաշնակություն: Այդպես էլ առաջին թագավորները սկզբում սարքավորում են պետությունը և դրանից հետո անցնում են կառավարման:

Աստվածաբանները համարում են, քանի որ աստծու ստեղծած աշխարհում (տիեզերքում) անհավասարություն է տիրում, ապա այն պետք է պահպանվի նաև երկրային կյանքում: Այստեղից էլ նրանք արդարացնում են սոցիալական անհավասարությունը, պարտավորեցնում են հավատացյալներին ենթարկվել իշխանավորներին, հաշտվել իրենց ճակատագրի հետ, անտրտունջ կրել աստծու տված խաչը, քանի որ անհավասարությունը ***աստծու օրենք*** է:

Իրավունքի հարցում աստվածաբանությունը գտնում է, որ գոյություն ունի աստվածային ***հավիտենական օրենք***, որն արձանագրված է Աստ-

վածաշնչում (մուսուլմանների համար՝ Ղուրանում և այլն): Աստվածաբանների կարծիքով, բնական իրավունքը ոչ այլ ինչ է, քան հավիտենական օրենքների արտացոլումը մարդկանց գիտակցությունում, որոնք պարտադրում են ձգտել ինքնապահպանման, ընտանիք և սերունդ ունենալու, հեռու մնալու չարից, գնալ ճշմարտության ու արդարության ճանապարհով: Ինչ վերաբերում է մարդկային (պոզիտիվ, նյութական) իրավունքին, ապա նրանց համոզմամբ մարդու գրած օրենքներում պետք է կոնկրետացվեն և իրականացվեն բնական իրավունքի պահանջները:

Միջին դարերում Արևմտյան Եվրոպայում փիլիսոփայության մեջ առաջատար տեղ է գրավում կաթոլիկական եկեղեցու գաղափարախոսությունը՝ կաթոլիկական աստվածաբանությունը, որի ամենաականավոր ներկայացուցիչն է համարվում 13-րդ դարի փիլիսոփա-սխոլաստ Թոմա Աքվինեցին (Աքվինատը), որին եկեղեցին դասել է սրբերի շարքին, նրան շնորհել է «հրեշտակային դոկտոր» տիտղոսը, իսկ մահից հետո, վեց դար անց (1879 թ.), Հռոմի Պապ Լևոն-13-րդը Թոմա Աքվինեցու սխոլաստիկական ուսմունքը հայտարարել է «կաթոլիցիզմի միակ ճշմարիտ փիլիսոփայություն»:

Միջին դարերում «սխոլաստիկա» անվանումն էր կրում Արևմտյան Եվրոպայում գերիշխող և դպրոցներում դասավանդվող փիլիսոփայությունը, որը ծառայում էր մեծ հեղինակություն և իշխանություն ունեցող կաթոլիկական եկեղեցու դավանաբանությանը: Աստվածաբան-սխոլաստները ձգտում էին ֆորմալ-տրամաբանական դատողություններով կաթոլիկական դավանաբանության դոգմատները համակերպել հեթանոսական դարաշրջանի փիլիսոփայական մտքի և միջնադարի բնական գիտությունների հայտնագործությունների հետ, որոնք հաճախ ճչացող հակասության մեջ էին հայտնվում աստվածաբանության և եկեղեցու դոգմատների հետ: Չբավարարվելով դրանով, եկեղեցին իր ներսում ստեղծել էր ինկվիզիցիոն (հավատաքննության) դատարաններ և դաժան խոշտանգումների միջոցով ստիպում էր մարդկային մտքի հանճարներին հրաժարվել իրենց հայացքներից:

Իր բազմաթիվ աշխատություններում «հրեշտակային դոկտորը» զգալի տեղ է հատկացնում պետության, պետական իշխանության և իրավունքի

հարցերին, որոնց մասին խոսք է գնում «Տիրակալների կառավարման մասին», «Աստվածաբանության գումարը» և այլ ստեղծագործություններում:

Հիմնովին ուսումնասիրելով Արիստոտելի գրական ժառանգությունը, Աքվինատը փորձում է հեթանոսական հնադարի հզոր մտածող Արիստոտելի հասարակական-քաղաքական և բնագիտական հայացքները հարմարեցնել կաթոլիցիզմի դավանաբանությանը, դրանով իսկ ամրապնդել կաթոլիցիզմի դիրքերը, քանի որ Արիստոտելի տեսակետները գիտության տարբեր բնագավառներում մեծ հեղինակություն էին վայելում:

Պետականության նպատակը Աքվինատը տեսնում էր «ընդհանուր բարօրության» արժանապատիվ և բանական կյանքի պայմանների ստեղծման մեջ: Իշխանությունը նա համարում էր տիրակալության և ենթակայության (հպատակության) հարաբերություններ, երբ տիրակալի կամքը պարտադիր է համարվում հպատակների ստորադասության համար: Ըստ Աքվինատի, այդ կարգը սահմանված է աստծու կողմից, ուստի այն ***բարիք*** է: Դրա հետ միասին փիլիսոփան չի բացառում, որ իշխանությունը կարող է այլասերվել կամ ապօրինի կերպով յուրացվել: Եթե իշխանությունն օգտագործվում է «ընդհանուր բարօրության» դեմ, իսկ տիրակալը չարաշահելով աստծուց բխող իշխանությունը կամ բռնությամբ զավթելով այն, ծնշում է ժողովրդին անտանելի հարկերով ու տուրքերով, մատնում է նրան թշվառության, ապա այդպիսի իշխանությունը զրկվում է աստծու հովանավորությունից և ենթակա է վերացման: Աքվինատի կարծիքով, հպատակներն իրավունք ունեն դիմադրելու բռնակալներին, որոնք գործում են աստծու օրենքին ու կամքին հակառակ, իրավունք ունեն ապստամբելու և տապալելու նրանց, եթե նման ծայրահեղ միջոցի կիրառումը հավանության է արժանանում պապության ու եկեղեցու կողմից:

ՀԱՐՑ 13. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Նահապետական տեսության հիմնադիրն է համարվում Հնադարյան Հունաստանի մեծագույն փիլիսոփա և բազմակողմանի գիտնական

ԱՐԻՍՏՈՏԵԼԸ (384-322 թթ. մթա), որի բազմաթիվ աշխատություններում հանրագումարի են բերված հնադարի հոգիների ձեռք բերած գրեթե բոլոր գիտելիքները: Պետությանը, իրավունքին և սոցիալ-քաղաքական այլ հարցերին է նվիրված նրա ***«Պոլիտիկա»*** ստեղծագործությունը:

Ըստ Արիստոտելի, նախնադարյան հասարակարգի քայքայման ընթացքում նահապետական ուժեղ ընտանիքներն անջատվում են տոհմերից, ստեղծում են գյուղական համայնքներ և վարում են ինքնուրույն տնտեսություն, իսկ ընտանիքի մոդելով և գյուղական համայնքների հիման վրա ծագում է պետությունը: Սեփականությունը նա համարում է ընտանիքի, հետևաբար նաև պետության տնտեսական հիմքը, քանի որ առանց առաջին անհրաժեշտության առարկաների հնարավոր չէ ոչ միայն լավ ապրել, այլև ապրել ընդհանրապես:

Արիստոտելը «Պոլիտիկայում» գրում է, որ յուրաքանչյուր պետություն հասարակության բնական զարգացման արդյունք է, և աշխարհի ստեղծողը ամենևին էլ աստված չէ: Այդ առումով պետությունը նա նմանեցնում է բնությունից ծագած հասարակության սկզբնական բջիջին՝ ընտանիքին, իսկ մարդուն համարում է քաղաքական էակ: «Եթե անհատն ընդունակ չէ մտնել շփման մեջ կամ իրեն համարում է ինքնաբավական էակ, ոչ մեկի կարիքը չի զգում, նա արդեն պետության մասնիկ չի կազմում, նա կենդանի կամ աստվածություն է»: Շարունակելով այդ միտքը, Արիստոտելը գրում է, որ բնությունը մարդկանց մեջ սերմանել է ձգտումը դեպի իր նմանները, ընտանիք և հասարակություն կազմելը, համատեղ գործունեությունը: Այդ բոլորը հնարավոր է դառնում պետության մեջ, որում մարդը ձևակերպվում է վերջնականապես և դառնում ամենակատարյալ էակը, իսկ պետությունից և իրավունքից դուրս ապրողը խղճուկ տեղ է գրավում աշխարհում:

Ըստ Արիստոտելի, ընտանիքը կրում է իր մեջ երեք տեսակի հարաբերություններ, որոնք բնորոշ են նաև պետությանը (նկատի ունենալով իր ժամանակի ստրկատիրական պետությունը). ա) տիրոջ և ստրուկների միջև, որում գերիշխում է տերը, իսկ ստրուկները լիովին իրավազուրկ են, բ) ամուսնու և կնոջ հարաբերությունները, որում գերիշխում է ավելի ուժեղ ամուսինը, գ) հոր և զավակների հարաբերությունները, ուր իշխում է հոր կամքը: Գիտնականի կարծիքով, տիրոջ և ստրուկի հարաբերությունները

բնական ծագում չունեն, այլ սահմանված են մարդկային օրենքով, հետևաբար հակասում են արդարության սկզբունքին և լի են սուր հակասություններով: Ընտանեկան մյուս երկու տեսակի հարաբերություններում գործող իշխանության և հպատակության սկզբունքը Արիստոտելը համարում է ոչ միայն բնական, այլ նաև անհրաժեշտ և օգտակար:

Հռչակավոր հռոմեական պետական գործիչ, փայլուն հռետոր և մտածող ***Մարկ Տուլլի Ցիցերոնը*** (106 - 43 մթա) պետության ծագման պատճառների հարցում Արիստոտելի ամենանշանավոր հետևորդներից էր: Պետության ծագման հիմնական պատճառը նա նույնպես տեսնում էր ոչ այնքան մարդկանց թուլության ու վախի մեջ (նման կարծիք էին հայտնում որիշ մտածողներ), որքան մարդկանց միասին լինելու և գործելու պահանջմունքում: Միաժամանակ նա խիստ քննադատում էր այն ժամանակ լայն տարածում ստացած Էպիկուրի և նրա պայմանագրային տեսության կողմնակիցների հայացքները:

Ցիցերոնն այն մտածողներից էր, որոնք գտնում էին, որ պետությունն աստիճանաբար և բնական ճանապարհով, առանց աստվածների միջամտության, ծագել է հասարակության սկզբնաբջջից՝ ընտանիքից, և հստակորեն մատնանշում է պետության ծագման պատճառային կապը սեփականության հետ, ասելով, որ պետության ծագման հիմնական պատճառը սեփականության պահպանությունն էր:

Հռոմեացի մտածողը պետությունը համարում էր ոչ միայն ընդհանուր շահերի կազմակերպություն, այլ նաև որպես իրավական կառուցվածք, որում օրենքը պետք է ամենից վեր լինի: Այսպիսով, Ցիցերոնը կանգնած է պետության հասկացության իրավաբանականացման ակունքում, ունեցել է շատ հետևորդներ այդ հարցում, ընդհուպ մինչև «իրավական պետության» տեսության ժամանակակից գիտական դպրոցների ներկայացուցիչները, որոնց համար Ցիցերոնի գաղափարները մնացել են թարմ: Մասնավորապես, նրա դրույթները պետության կառավարման ձևերի և բնական իրավունքի մասին այսօր էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Պետության, իրավունքի և պետա-իրավական բնույթի բազմաթիվ այլ հարցերին են նվիրված «Պետության մասին», «Օրենքների մասին», «Պարտականությունների մասին» Ցիցերոնի արժեքավոր աշխատությունները:

ՀԱՐՑ 14 . ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրային տեսության ծագումն ու զարգացումը

Պայմանագրային (Հասարակական դաշինքի) տեսությունն ունի վաղեմի պատմություն: Նրա առանձին տարրերը մշակված են եղել անտիկ աշխարհի փիլիսոփաների կողմից, սակայն դասական ձևավորում և տեսք է ստացել 17-18-րդ դարերում՝ բուրժուական հեղափոխությունների ժամանակ Արևմտյան Եվրոպայում:

Պայմանագրային տեսության հիմնադիրն է համարվում ***Էպիկուրը***՝ անտիկ աշխարհի մեծագույն մտածող-մատերիալիստ Դեմոկրիտի ատոմիստական ուսմունքի շարունակողը:

Էպիկուրի կարծիքով, բնությունը զարգանում է իր սեփական օրենքներով, առանց աստվածների որևէ միջամտության: Ըստ նրա, աստվածները ոչ մի առնչություն չունեն նաև պետության և իրավունքի ստեղծմանը: Պետության ծագումը Էպիկուրը բացատրում է մարդկանց միջև անորոշ տեղում և անորոշ ժամանակ կայացած համաձայնությամբ՝ ***պայմանագրով***: Ըստ նրա ուսմունքի, պետության նպատակն է եղել ընդհանուր շահը, ամբողջ հասարակության օգուտը, փոխադարձ անվտանգության և արտաքին թշնամուց համատեղ պաշտպանվելը, արդարության վրա հիմնված բարեկեցիկ և արժանապատիվ կյանքը:

«Արդարությունը, որ բխում է բնությունից,- ասում է Էպիկուրը,- դա պայմանագիր է օգտակարի վերաբերյալ՝ միմյանց վնաս չպատճառելու և վնաս չստանալու նպատակով»: Սակայն Էպիկուրի արդարությունը ունիվերսալ չէ, այլ ամեն մի տեղի և ժամանակի համար կա իր արդարությունը: Այդ բոլոր փոփոխական արդարություններն ունեն մի ընդհանուր հատկանիշ՝ նրանք բոլորը համաձայնագրեր են ընդհանուր օգուտի վերաբերյալ:

Հետաքրքիր և ոչ ստանդարտ մտքեր է արտահայտել Էպիկուրը օրենքի վերաբերյալ: Օրենքը նա համարում է որպես միջոց «իմաստուններին» (էթիկապես կատարյալ մարդկանց) «ամբոխից» պաշտպանելու համար:

«Օրենքները,- ասում է նա,- ստեղծվում են իմաստունների համար, ոչ թե այն բանի համար, որ նրանք չկատարեն չարը, այլ այն բանի համար, որ նրանց հանդեպ չկատարվի չարը»: Պետության քաղաքական ռեժիմի հարցում Էպիկուրը կողմնակից էր չափավոր դեմոկրատիայի, երբ օրենքի գերիշխանությունը համատեղվում է անհատի հնարավոր առավելագույն ազատության և ինքնակառավարման հետ:

Էպիկուրն ապրել է Աթենքում, 307 թ. մթա, այնտեղ ստեղծել է մեծ հեղինակություն վայելող իր փիլիսոփայական-գիտական դպրոցը՝ «Էպիկուրի այգին»: Անտիկ փիլիսոփայության գրողների ամենաբեղմնավորներից մեկն է, սակայն նրա ստեղծագործությունները չեն հասել մեզ: Պահպանվել են միայն երեք նամակ, որոնցում շարադրված են նրա ուսմունքի հիմնադրույթները: Դրանք են. «Էպիկուրը ողջունում է Հերոդոտոսին», «Էպիկուրը ողջունում է Պիֆոկոլին», «Էպիկուրը ողջունում է Մանեկեին»: Պահպանվել են նաև նրա 40 աֆորիզմները, որոնք հայտնի են «Գլխավոր մտքեր» անվան տակ:

Պայմանագրային տեսության դպրոցի առավել նշանավոր ներկայացուցիչներն էին ուշ միջնադարի և նոր ժամանակի մտածողներ Հ. Հրոցին, Ջ. Լոկկը, Դ. Դիդրոն, Պ. Հոլբախը, Ա. Ռադիշչևը և Ժան Ժակ Ռուսսոն, որի «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՄԱՍԻՆ» աշխատությունում ամփոփված է պայմանագրային տեսության բովանդակությունը:

Գրեթե բոլոր վերոնշված մտածողները պետության ստեղծման գլխավոր պատճառը տեսնում էին սեփականությունում և դրա պահպանության կազմակերպման անհրաժեշտությունում: Սակայն նրանք տարակարծիք էին նրանում, թե ով և ինչու է ստեղծել պետությունն ընդհանրապես: Օրինակ, ռուս դեմոկրատ Ռադիշչևը համարում էր, որ պետությունն ստեղծվել է բոլոր մարդկանց համաձայնությամբ, որոնք կազմում էին տվյալ պետությունը, իսկ Ռուսսոյի կարծիքով՝ հարուստների խորամանկ ծրագրերով և նրանց միջև համաձայնության շնորհիվ: Իսկ ժողովրդին նրանք (հարուստները) ասացին, գրում է Ռուսսոն, եկեք միմյանց չհալածենք, այլ բոլորիս ուժերը համախմբենք մի ընդհանուր իշխանությունում, որը կկառավարի մեր անունից իմաստուն և արդար օրենքներով, կպահպանի բոլորի և առանձին անհատի օրինական շահերը ու կկազմակերպի երկրի

պաշտպանությունն արտաքին թշնամուց: Այսպես է եղել կամ պետք է լինել պետության և օրենքների ծագումը, որոնք ավելացրին անհավասարությունը, նոր ուժ ու եռանդ հաղորդեցին հարուստներին (իշխող դասակարգին), ամրապնդեցին ու հավերժացրին սեփականությունը. եզրափակում է Ռուսսոն:

Իհարկե, հարուստների մշակված ծրագրով, եթե համաձայնենք Ռուսսոյի կարծիքի հետ, պետությունն առաջին հերթին պետք է սպասարկեր հարուստների (ստրկատիրական դասակարգի) կայիքները, էլ ավելի բարենպաստ պայմաններ ստեղծեր հարստանալու համար և դրանից հետո միայն մտածեր ընդհանուր շահերի մասին:

Ի՞նչ է Հասարակական դաշինքը

Այդ և շատ այլ հարցերի պատասխանը կարելի է ստանալ ամբողջովին Ռուսսոյի «Հասարակական դաշինքի մասին կամ քաղաքական իրավունքի սկզբունքները» աշխատությունում, որը պայմանագրային տեսության զարգացման գագաթնակետն է: Այստեղ կշոշափվեն միայն մի քանի կարևոր հարցեր:

1. Ըստ Ռուսսոյի՝ պետությունը հնարավոր էր միայն ընդհանուր շահերի հիման վրա: Հասարակական դաշինքը պետություն կազմող բոլոր մարդկանց համաձայնությունն է պետությունում համախմբվելու. Երբ համաձայնության անդամներն իրենց անձը, կամքն ու ուժերը ենթակայեցնում են ընդհանուր կամքին՝ պետությանը, որի արդյունքում հասարակության «ամեն մի անդամ վերածվում է ընդհանուրի անբաժանելի մասի»:

2. Պետությունը Ռուսսոյի կողմից դիտվում է որպես «պայմանական անձ», որի գոյատևումը կախված է նրա անդամների միությունից: Այդ անձի գլխավոր խնդիրը ինքնապահպանությունն ու ընդհանուր օգուտն է, որը պետք է արտահայտվի մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորումով, եթե ոչ հավասար նյութական պայմաններ ստեղծելով, ապա գոնե բարեկեցիկ ու արժանապատիվ ապրելու համար պայմաններ ստեղծելով:

Այդ խնդրի լուծումը Ռուսսոն տեսնում էր բնական իրավունքի պահանջներին համապատասխանող օրենսդրությունում:

3. Իր գրքում Ռուսսոն առաջ է քաշում ժողովրդաիշխանության և ժողովրդական կառավարման գաղափարը, ասելով, որ «միայն ընդհանուր կամքը կարող է ղեկավարել պետության ուժերը, նրա նպատակներին համապատասխան»: Ժողովրդի սուվերենությունը (ինքնիշխանությունը) ոչ ոք չի կարող ոչ օտարել, ոչ էլ արհեստականորեն բաժանել: Երկուսից մեկը, գրում է Ռուսսոն, կա՛մ կամքը համընդհանուր է, կա՛մ այն բացակայում է, կա՛մ դա ամբողջ ժողովրդի կամքն է, կա՛մ նրա մի մասի (իշխող դասակարգի): Այստեղից կարևոր հետևություն է արվում: Առաջին դեպքում, երբ կամքը համընդհանուր է՝ դա սուվերենի ակտ է, այսինքն՝ օրենք է: Երկրորդ դեպքում դա միայն մասնավոր կամք է, որն օրենք չի կարող համարվել: Այստեղ Ռուսսոն ուզում է ասել, որ ժողովրդի կողմից չընդունված իրավական ակտերը կարող են միայն կառավարման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտեր լինել, ամենաշատը՝ դեկրետ:

Քանի որ օրենքը միայն ընդհանուրի կամքն է, ապա սուվերենը (ժողովուրդը) օրենք կարող է ընդունել, երբ ներկա են բոլորը: Ռուսսոյի այդ հայտարարությունը ճիշտ չէր լինի բառացիորեն հասկանալ: Եթե անտիկ աշխարհի դեմոկրատական քաղաք-պետություններում դա հնարավոր էր, երբ օրենքներ էին ընդունում ազատ քաղաքացիների ժողովները, ապա միջին դարերում և առավել ևս մեր ժամանակներում դա հնարավոր չէ: Հետևաբար, ճիշտ կլիներ ենթադրել, որ Ռուսսոն նկատի է ունեցել ժողովրդի ներկայության այլ ձևեր, օրինակ՝ հանրաքվեն:

4. Ռուսսոն խիստ բացասական կարծիքի էր ներկայացուցչական մարմինների նկատմամբ: Նա ասում էր, որ ներկայացուցչության գաղափարը ժամանակակից է, բայց հակասում է մարդու բնությանը: Այն ֆեոդալական անարդարացի, մարդուն նսեմացնող ու պատվազրկող հասարակարգի հայտնագործություն է, որի հեղինակները նորից հարուստներն են: Ռուսսոն այդ կապակցությամբ գրում է, որ «նույնիսկ հնադարի հանրապետություններում և միապետություններում ժողովուրդը երբեք չի ունեցել ներկայացուցիչներ և նույնիսկ այդ խոսքը հայտնի չի եղել նրանց»: Բացի բնակչության աճից, նա նշում է ներկայացուցչության ծագման այլ պատճառներ՝ «հայրենասիրության սառեցումը, մասնավոր շահերի փայլատակումները, պետության մեծ չափերը, զավթողականությունը և կառավարու-

թյան չարաշահումները», այսօրվա տերմինոլոգիայով ասած՝ կոռուպցիան: Խոսելով պատգամավորների դերի մասին, Ռուսսոն ասում է, որ «ժողովրդական պատգամավորները, ըստ էության, չեն կարող ժողովրդի ներկայացուցիչներ լինել, նրանք միայն նրա կոմիսարներն են»: Յուրաքանչյուր օրենք, որը վավերացված չէ ժողովրդի կողմից, անգործուն է, «դա նույնիսկ օրենք չէ»: Ներկայացուցչությունը նա անբնական, արհեստական երևույթ է համարում:

Օրինակ բերելով Անգլիան և անգլիացիներին, Ռուսսոն ասում է, որ Անգլիայի ժողովուրդն իրեն համարում է ազատ, սակայն «Նա դառնորեն սխալվում է: Նա ազատ է միայն պառլամենտի անդամների ընտրության ժամանակ: Հենց որ նրանք ընտրված են, նա դառնում է ստրուկ՝ ոչինչ...»: Սա է Ռուսսոյի վերդիկտը, ոչ միայն անգլիական, այլև բոլոր երկրների ներկայացուցչական ինստիտուտների նկատմամբ:

5. Բռնակալությանը դիմադրելու ժողովրդի իրավունքի մասին Ռուսսոն գրում է, որ թագավորները միշտ «ցանկանում են լինել անսահմանափակ», իսկ նրանց անձնական շահը կայանում է նախևառաջ նրանում, «որպեսզի ժողովուրդը լինի թույլ, չքավորության մեջ և երբեք չկարողանա դիմադրել նրանց»: Իհարկե, եթե ենթադրենք, որ հպատակները ճակատագրով դատապարտված են միշտ լինելու հնազանդ, ապա թագավորը կուզենար, որ ժողովուրդը հզոր լիներ, քանի որ այդ հզորությունը, լինելով նրա սեփականությունը, թագավորին կդարձնի սպառնալից հարևանների համար: Սակայն իրականում տիրակալների և ժողովրդի շահերը չեն համատեղվում: Առաջինները ձգտում են իրենց ձեռքում կենտրոնացնել հնարավորին չափ մեծ իշխանություն, ինչը մեծացնում է տարածությունը նրանց իշխանության և ժողովրդի միջև, «ներքին կապի պակաս է զգացվում» կամ այդ կապերը խզվում են ամբողջովին:

Վերջինը տեղի է ունենում, երբ պետության քաղաքական ռեժիմում ի հայտ են գալիս ժողովրդի իրավունքների և ազատությունների նկատմամբ բացահայտ արհամարհանք ու բռնակալության նշաններ: Նման դեպքում, համաձայն Հասարակական դաշինքի պայմանների, Ռուսսոյի կարծիքով, ժողովուրդը բռնակալությանը դիմադրելու իրավունք ունի և պետք է դիմադրի:

Պայմանագրային տեսության քննախոսություն

Ակնհայտ է, որ Ռուսսոյի հայացքներում մատերիալիստական մտածողության հետ միասին առկա են իդեալիստական և ուտոպիստական տարրեր: Պետք է նաև նկատի ունենալ, որ «Հասարակական դաշինքում» խոսքը գնում է ոչ թե պետության մասին ընդհանրապես, այլ՝ առաջին պետությունների ծագման պատճառի մասին, որը, ըստ Ռուսսոյի և պայմանագրային տեսության այլ կողմնակիցների համոզմամբ, Հասարակական դաշինքն է: Այդ դաշինքն այսօր էլ գործում է, քանի որ այն անժամկետ է, բայց նրանով նախատեսված նպատակները դեռևս հեռու են իրականություն դառնալուց:

Պայմանագրային տեսության դրույթների նկատմամբ եղել են բազմաթիվ առարկություններ, նույնիսկ այդ տեսությունը մշակած մտածողների միջև: Այդ տարաձայնությունները վերաբերում են, հատկապես, պետությանը նախորդած հասարակության բնական վիճակի, բացարձակ միապետության, նրա տեղի ու դերի մասին, պայմանագրային տեսության հակապատմականության ու մեխանիկականության և այլ հարցերի:

Տ. ԳՈԲԲՍԻ կարծիքով, բնական վիճակը անսահմանափակ անձնական ազատության աշխարհ է, որը վերածվում է անարխիայի, երբ յուրաքանչյուրը «ամեն ինչի իրավունք ունի»: Այդ ամեն ինչի իրավունքը, որի տակ պետք է հասկանալ մարդու իրավունքները, մարդու բացասական հատկանիշների շնորհիվ՝ էգոիզմի, շահամոլության, ագահության, վախի, պատվախնդրության, ժլատության և այլն, իրականացվում է «Մարդը մարդու համար գայլ է» և «Բոլորի պատերազմ բոլորի դեմ» սկզբունքներով:

ՋՈՆ ԼՈԿԿԻ կողմից նախնադարյան բնական վիճակը, ընդհակառակը, բնութագրվում է որպես ***իդիլիա***՝ անվրդով կյանք և ազատություն, մարդկանց հավասարության և միմյանցից անկախության թագավորություն:

Գոբբսը բացարձակ միապետության ինստիտուտը համարում է որպես «պետության բացարձակ իշխանություն», իսկ միապետին՝ որպես արդարության և բնական իրավունքների միակ երաշխավոր: Այլ դիրք է գրավում այդ հարցում ԼՈԿԿԸ: Նա կտրականապես դեմ է բացարձակ միապետությանը: «Միանգամայն ակնհայտ է,- գրում է Լոկկը,- որ բացարձակ միապետությունը, որին ոմանք համարում են աշխարհի

կառավարման միակ ձևը, իրականում անհամատեղելի է քաղաքացիական հասարակության հետ և, հետևաբար, չի կարող ընդհանրապես լինել քաղաքացիական հասարակության կառավարման ձև»:

Որպեսզի պահպանված լինեն մարդու իրավունքներն ու ազատությունները, պետությունը պետք է լինի միայն կամավորության հիմունքներով միավորված մարդկանց միասնական «քաղաքական հասարակություն»: «Հենց դա էլ,- գրում է Լոկկը,- այն պայմանագիրն է, որը գոյություն ունի կամ պետք է գոյություն ունենա անհատների միջև, որոնք ընդունվում են պետության մեջ կամ ստեղծում են այն»:

Պայմանագրային տեսությունը քննադատների կողմից հակապատմական է համարվում նրա մեթոդաբանությունում պատմականության սկըզբունքի բացակայության պատճառով: Եվ իրոք, պետությանն ու իրավունքին վերաբերող կանխադրույթները ներկայացված են վերացական ձևով՝ ժամանակից և տարածությունից դուրս: Վիճաբանությունների առիթ է տվել այն դրույթը, երբ պետությունը ներկայացվում է որպես հասարակության բոլոր անդամների համաձայնության արդյունք՝ հարուստների և չքավորների, իշխանավորների և թշվառների: Այս հարցում երևի իրավացի է Ռուսսոն, երբ ասում է, որ պետությունն ստեղծվել է հարուստների կողմից մշակված խորամանկ ծրագրի հիման վրա և նրանց նախաձեռնությամբ:

Պայմանագրային տեսության մեխանիկականությունը գտնում են նրանում, որ պետության ծագումը դիտվում է որպես միանգամյա իրավաբանական ակտ, այլ ոչ թե էվոլյուցիոն գործընթաց: Նման քննադատական կարծիքը արդարացի դժվար թե կարելի է համարել, քանի որ Հասարակական դաշինքի տեսության կողմնակից մտածողները միշտ շեշտում են դաշինքի քաղաքական բնույթը:

Բուրժուական հեղափոխությունների ժամանակ պայմանագրային տեսությունն ունեցել է ոչ միայն ակադեմիական, այլև գործնական նշանակություն: Այն լայնորեն օգտագործվել է ֆեոդալիզմի դեմ պայքարում, քաղաքական և գաղափարական հիմք է հանդիսացել հեղափոխական շարժումների արդարացման, ժողովրդավարության, օրինականության, սահմանադրականության, իրավական հավասարության հռչակման և հաստատման համար:

Ինչ վերաբերում է մեր ժամանակին, ապա պայմանագրային տեսության հեղինակությունը չի նվազել: Նրա դրույթներից շատերը շարունակում են կատարել որոշակի գաղափարական, քաղաքական և գործնական դեր: Խոսքը գնում է այնպիսի հարցերի մասին, ինչպիսին են իշխանության յուրացումը մի անձի կամ մի խումբ անձանց կողմից, մարդու իրավունքների և ազատությունների ու կարգավիճակի բնագավառները, օրենքի և իրավունքի հարաբերակցությունը և այլն:

Այսպիսով, ծագելով հասարակական դաշինքից, պետությունն իրականացնում է մարդկության անցումը անկազմակերպ բնական վիճակից դեպի քաղաքացիական հասարակություն: Հասարակական դաշինքը չի զրկում մարդկանց իրենց անօտարելի իրավունքներից և ազատություններից, որոնք միայն մասամբ են հաղորդվում պետությանը՝ բոլոր քաղաքացիների կամքն ու ուժերը համախմբելու և հասարակության ընդհանուր շահերը պահպանելու նպատակով: Պետությունը հիմնվում է ժողովրդի կողմից, որին էլ պատկանում է գերագույն իշխանությունը, իսկ պետությունն իր ինքնիշխանությունը իրականացնում է հասարակական դաշինքով նախատեսված լիազորությունների շրջանակում: Ժամանակակից իրավաբանականացված ժողովրդավարական հռչակված պետություններում պետական իշխանության մարմինների լիազորությունները սահմանվում են պետության հիմնական օրենքով՝ սահմանադրությամբ, որն ընդունվում է ժողովրդի կողմից հանրաքվեի միջոցով, իր մեջ կրում է ընդհանուր կամքի արտահայտությունը, հետևաբար՝ սահմանադրությունն իրավաբանորեն ձևակերպված Հասարակական դաշինք է: Այդ դաշինքի մազաչափ ոտնահարումը, առավել ևս բռնատիրության որևէ ձևի հաստատման փորձերը կամ իշխանության յուրացումը մի անձի կամ մի խումբ անձանց կողմից, Հասարակական դաշինքի տեսության այսօրվա հետևորդները նույնպես որակավորում են որպես Հասարակական դաշինքի խախտում: Այսօր էլ ժողովուրդը չի կորցրել բռնակալությանը դիմադրելու, օրինազանց պետական իշխանության լիազորությունների կասեցման և նոր իշխանություն նշանակելու իր իրավունքը:

ՀԱՐՑ 15. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Պետության և մարդու օրգանիզմի համանմանության գաղափարը ներկա է Հնադարյան Հունաստանի մեծագույն փիլիսոփա, օբյեկտիվ իդեալիզմի հիմնադիր ՊԼԱՏՈՆԻ երկխոսության ձևով գրված աշխատություններում: Այդ գաղափարների հետագա զարգացման արդյունքում ծագում է պետության մասին ՕՐԳԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ:

Օրգանական տեսությունը պետությունը համեմատում է մարդու օրգանիզմի հետ և նրան վերագրում է ինքնուրույն կամք և գիտակցություն, որը հիմնովին տարբերվում է մարդու կամքից և գիտակցությունից և հավաքական ու ինտեգրացված միտք է ներկայացնում:

Համաձայն օրգանական տեսության՝ պետությունը բնության ուժերի գործողության արդյունք է: Բնությունը ստեղծել է մարդուն և մարդու ֆիզիկական և հոգեկան հատկությունների մոդելով՝ ***պետությունը:***

Դասական ձևակերպում ստացած օրգանական տեսության հիմնադիրն է անգլիացի փիլիսոփա ՀԵՐԲԵՐՏ ՍՊԵՆՍԵՐԸ (1820-1903)՝ մինչիմպերիալիստական կապիտալիզմի խոշորագույն գաղափարախոսը, սահուն և աստիճանական էվոլյուցիոն զարգացման ուսմունքի և «Հավասարակշռության» տեսության հեղինակը, որոնք ուղղված էին դասակարգային պայքարի և հեղափոխականության դեմ:

Սպենսերը մարդկային հասարակությունը ներկայացնում է որպես հավասարակշռության ձգտող կենդանի օրգանիզմ, իսկ հավասարակշռության խախտումների պատճառները տեսնում է դասակարգային պայքարում, հեղափոխություններում և այլ սոցիալական ցնցումներում, որոնք որակավորվում են որպես այդ կենդանի օրգանիզմի հիվանդություններ:

Սպենսերի օրգանական տեսությունը լայն տարածում է ստանում և հեղինակություն է ձեռք բերում 19-րդ դարի երկրորդ կեսում, երբ բուռն զարգացում են ապրում կենսաբանությունն ու կենդանաբանությունը: Օրգանական տեսությունը քաղաքական ուսմունք է, որի հիմքում ընկած է

պետության և կենսաբանական օրգանիզմի միջև համանմանության գաղափարը: Պետությունը, ապացուցում է Սպենսերը, օրգանիզմ է, որի մասերն ունեն կենդանի էակի (մարդու) օրգանների ֆունկցիաների նման ֆունկցիաներ: Ինչպես որ կենդանի օրգանիզմի մասերը կատարում են միայն իրենց բնորոշ գործողություններ, ապահովելով ամբողջ օրգանիզմի կենսագործունեությունը, այնպես էլ պետության մարմինները, կատարելով նրանց հատուկ ֆունկցիաներ, ապահովում են ամբողջ հասարակության կենսագործունեությունը:

Ըստ Սպենսերի, պետությունը, կենդանի օրգանիզմի նման, ծնվում, բազմանում, զարգանում, հասնում է հասունության տարիքին, այնուհետև ֆիզիկական և հոգեկան ուժերի անկում է ապրում, ծերանում և վախճանվում է, թողնելով իրենից հետո նոր սերունդ: Դժվար չէ կռահել, որ Սպենսերն այստեղ, կամա թե ակամա, ապացուցել է պատմական տիպի պետությունների հաջորդականության օբյեկտիվ օրինաչափությունը:

Պետության մարմինների մասնագիտացումը տեղի է ունենում անհատների հրահանգավորման և միավորման միջոցով՝ մարմիններում, որոնցից յուրաքանչյուրը կատարում է միայն իրեն բնորոշ ֆունկցիաներ: Դրա արդյունքում ձևավորվում է պետության «քաղաքական մարմնի» օրգանների համակարգը:

Այդ համակարգում յուրաքանչյուր օրգան կատարում է իր դերը, ինչպես մարդու օրգանները: Տնտեսական օրգանները և նրանցում աշխատողները նույնացվում են կենդանի օրգանիզմի արյունատար համակարգի հետ, որի միջոցով սնվում են օրգանիզմի կենդանի բջիջները: Կառավարությունը համեմատվում է մարդու նյարդա-մկանային ապարատի հետ, որը, ինչպես կառավարությունը, կատարում է կարգադրիչ ու կարգավորիչ ֆունկցիաներ: Եվ այսպես, համանմանության և տրամաբանական դատողությունների միջոցով կարելի է համեմատել կենդանի օրգանիզմի և պետական օրգանիզմի մասերի ֆունկցիաները:

Սպենսերիզմը հաշվի չառնելով պետության ծագման սոցիալական պատճառները (սեփականության և անտագոնիստական դասակարգերի առաջացումը), պետության ծագման միակ պատճառը տեսնում է կենդանի

օրգանիզմի կառուցվածքում և նրանում գործող կենսաբանական ֆունկցիաներում, որոնցից առավել կարևորն են համարվում գոյության համար պայքարի, բնական ընտրության և ուժեղի սպրեգատնականության օրինաչափությունները:

Սպենսերի ռեակցիոն հետևություններից մեկը կայանում է նրանում, որ նա պետությունը տարբեր հասարակությունների պայքարի պատերազմների և բռնության արդյունք է համարում, որոնցում, նրա կարծիքով, արտահայտվում է կյանքի միջոցների և տարածության համար պայքարի բնական օրենքը: Ավելին, Սպենսերը ապացուցում է, որ մշտական պատերազմները, որոնք մղվել ու մղվում են մեր օրերին, ավելի կատարյալ պետական օրգանիզմի ստեղծման անհրաժեշտ պայմաններից է:

Սպենսերը տարբերում էր երկու տիպի պետություններ՝

- պրիմիտիվ կամ ռազմականացված, գիշատիչ,
- բարձրագույն տիպի կամ ինդուստրիալ պետություն:

Պրիմիտիվ պետությունն իր ավտորիտար քաղաքական ռեժիմով հենվում է ռազմական ուժի վրա, իսկ նրա հիմնական զբաղումնքը պատերազմն է, որի կարիքներին է ենթակայեցված ամբողջ հասարակությունը: Ռեղեների լվացման հիմնական միջոցը պրիմիտիվ պետությունում կրոնն է:

Սպենսերի կարծիքով՝ միայն տնտեսական առաջընթացային զարգացումը կարող է բերել պրիմիտիվ պետության փոխարինմանը ինդուստրիալ տիպի պետությամբ՝ հիմնված խաղաղության, ազատության, պայմանագրի և կոոպերացիայի վրա: Այդ պետության գլխավոր նպատակն է դառնում ոչ թե պատերազմը, այլ՝ մարդկանց բարիքը:

Կապիտալիզմի ակնառու գաղափարախոս Սպենսերը, է հարկե, ինդուստրիալ պետություն ասելով հասկանում էր կապիտալիստական պետությունը, որը նա ամեն կերպ իդեալականացնում էր: Արտահայտելով լիբերալ բուրժուազիայի հայացքները պետության և հասարակության հարաբերակցության վերաբերյալ, նա կապիտալիստական պետության գլխավոր խնդիրը տեսնում էր մարդու իրավունքների պահպանությունում և հասարակական տնտեսական գործունեությանը չմիջամտելում:

Հասարակության սահուն էվոլյուցիոն առաջընթացի անհրաժեշտ

պայմանները Սպենսերը տեսնում էր հետևյալում.

- պետության չեզոք դերում հասարակության տնտեսության գործունեությունում և այդ գործունեությանը չմիջամտելում,
- ազատ մրցակցությունում և մասնավոր ձեռնարկատիրությունում,
- մասնավոր նախաձեռնությունում և նրա խրախուսման մեջ սոցիալ-տնտեսական, կուլտուրայի, գիտության և այլ բնագավառներում:

Քննախոսության կարգով կարելի է ասել, որ սպենսերիզմը 19-րդ դարի երկրորդ կեսի ամենամոդայական և ընդհանուր ճանաչում ունեցող ուսմունքն էր եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում և նույնիսկ Ռուսաստանում:

20-րդ դարի սկզբից Սպենսերի օրգանական տեսության ռեակցիոն կողմերն օգտագործվում են իմպերիալիստական ագրեսիվ պատերազմները արդարացնող ուսմունքների կողմից, մասնավորապես դանիացի պրոֆեսոր Չելլենի գեոպոլիտիկայի, համաձայն որի պետության կենսագործունեությունը, որպես կենսաբանական օրգանիզմի, պայմանավորված է մի շարք բնական կոմպլեքսներով՝ բնական ընտրությամբ, ուժեղի կենսունակությամբ, տարածության համար պայքարով և «ուժեղի իրավունքով»:

Գեոպոլիտիկայից (աշխարհաքաղաքականությունից) ծնունդ է առել «կենսական շահերի պաշտպանության» դոկտրինան ԱՄՆ-ում, որի վրա ներկայումս հենվում են այդ գերիզոր երկրի քաղաքականությունը, որը թույլ է տալիս ԱՄՆ-ի վարչակազմին ռազմական, քաղաքական, տնտեսական և այլ տեսակի էքսպանսիաներ կազմակերպել որոշ պետությունների դեմ, միջազգային ժանդարմի դեր կատարել և այդ բոլորն արդարացնել ԱՄՆ-ի կենսական շահերով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: *1855-1896 թվականներին Սպենսերը գրել է իր հետևյալ աշխատությունները. «Հիմնական սկզբունքները», «Կենսաբանության հիմունքները», «Հոգեբանության հիմունքները», «Սոցիոլոգիայի հիմունքները», «Էթիկայի հիմունքները»:*

ՀԱՐՑ 16. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բռնության հիմնաքարային գաղափարը կայանում է նրանում, որ պետությունը և իրավունքը ծագում են ուժի գործադրումից, պատերազմներից և զավթողականությունից:

Այդ տեսության սադմնային տարրերը կարելի է հայտնաբերել անտիկ փիլիսոփայությունում, մասնավորապես, սոփեստների հայացքներում (5-րդ դ. մ.թ.ա.): Նրանց կարծիքով, առաջին պետություններն ստեղծվել են հարուստների շահերի պաշտպանության նպատակով, իսկ իրավունքը՝ որպես չունևոր ժողովրդի ինազանդեցման միջոց: Նրանք ասում էին, որ պետության ստեղծման սկզբնական նպատակը եղել է հարուստներին զսպելն ու սանձահարելը, սակայն հարուստները ամեն ինչ արեցին, որպեսզի վերացվեն նրանց համար նախատեսվող «անբնական կապանքները և վերականգնվի բնական օրենքը», համաձայն որի թույլը պետք է ենթարկվի ուժեղին:

Սոփեստներն ասում էին, որ հասարակական հարաբերությունների բոլոր բնագավառներում գերիշխում է նրա կամքը, ում ձեռքում է գտնվում ուժն ու իշխանությունը: «Արդարությունն ու արդարացին,- ասում էր սոփեստ Թրազիմախը,- որիշների բարիքն է...», քանի որ «արդարացի մարդը ամենուրեք քիչ է շահում, քան անարդարացին»: Ինչպես պետությունը, այնպես էլ իրավունքը նրանք համարում էին կոպիտ ուժի հետևանք: Սոփեստ Հիպպիան այդ կապակցությամբ ասում էր. «Օրենքը... լինելով մարդկանց բռնակալ, հաճախ գործում է բռնի և ընդհանրը հակառակ»:

Բռնության տեսության վերելքը սկսվ.մ է միջնադարում, երբ այն մեծ հեղինակություն է ձեռք բերում և հաջողությամբ պայքարում է պետության և իրավունքի մասին աստվածաբանական գաղափարների և եկեղեցու դոգմատների դեմ: Սակայն իր վերջնական դասական ձևավորումը բռնության տեսությունը ստանում է 19-րդ դարի երկրորդ կեսում: Այդ նորացված ուժի տեսության կողմնակիցներն ու առավել նշանավոր գաղափարախոսներն էին գերմանացիներ, մեխանիկայի պրոֆեսոր, փիլիսոփա և տնտեսագետ Եվգենի Դյուհրինգը (1833-1921), սոցիալ-դեմոկրատներ Կարլ Կաուտսկին (1854-1938) և Էդուարդ Բերնշտեյնը (1850-1932), իսկ տեսության հիմնադիրն է համարվում իրավագիտության պրոֆեսոր Լյուդվիգ Գումպլովիչը (1838-1909), որի հայացքները կլինեն մեր քննարկման առարկան: Ինչ վերաբերում է մյուսներին, ապա առաջարկում ենք ընթերցել Ֆ. Էնգելսի «Անտի-Դյուրինգ» (Դյուրինգի դեմ) աշխատությունը, որում, բացի մարքսիզմի երեք բաղկացուցիչ մասերի հիմնավորումից, շոշափվում են պետության ու իրավունքին վերաբերող հարցեր: Կ. Կաուտսկին և Ը. Բերնշտեյնը գերմանական սոցիալ-դեմոկրատիայի նշանավոր գործիչներից էին և մարքսիզմի ռևիզիոնիստները (քննադատողները): Նրանք դեմ էին սոցիալիստական հեղափոխությանն ու ուժային մեթոդներով պրոլետարական դիկտատուրայի հաստատմանը, հերքում էին կապիտալիստական պետության վերացման անհրաժեշտությունը, բանվոր դասակարգի խնդիրը տեսնում էին տնտեսական բարեփոխական պայքարում: Բերնշտեյնին է պատկանում «Վերջնական նպատակը ոչինչ է, շարժումը՝ ամեն ինչ» թևավոր արտահայտությունը:

Բռնության տեսության էությունը

Բռնության տեսության բովանդակությունը բացվում է Լ. Գումպլովիչի «Պետության մասին» ֆունդամենտալ աշխատությունում. Հենվելով պոզիտիվիզմի մեթոդաբանության վրա, Գումպլովիչը մշակում է պետության և իրավունքի սոցիոլոգիական տեսությունը, համաձայն որի պետությունն ու իրավունքը բնությունից ծնված երևույթներ են, որոնք հանդես են գալիս որպես սոցիալական իրականության փաստեր, կապված այլ սոցիալական երևույթների հետ: Իր աշխատություններում Գումպլովիչը լայնորեն օգտվ.մ է ընդհանուր սոցիոլոգիայի, մարդաբանության, կոնտրաֆիայի (ազգագրության) և պատմության իր ժամանակվա զգալի նվաճումներից: Նման մոտեցումը պետության և իրավունքի ուսումնասիրությանը Գումպլովիչին անվանում էր սոցիոլոգիական և հակադրում էր այն դոգմատիզմին, դավանականությանը և մետաֆիզիկային (բնազանցությանը):

Գումպլովիչը գրում է. «Պատմությունը մեզ չի ներկայացնում ոչ մի պետություն, երբ պետությունն առաջացել է ոչ թե բռնության ակտի, այլ մի այլ

կերպ: Բացի այդ,- շարունակում է նա,- դա միշտ արտահայտվել է մի ցեղի բռնությունում մյուսի նկատմամբ, ուժեղ օտար ցեղի կողմից ավելի թույլ և արդեն նստակյաց բնակչության նկատմամբ և արտահայտվել է զավթողականությունում և ստրկացումում»:

Հենվելով մի շարք եվրոպական և ասիական պետությունների ծագման օրինակի վրա, որոնք, իրոք, բռնության հետևանք են եղել, Գումպլովիչը կարևոր և անառարկելի եզրակացություն է անում, ասելով, որ պետությունն առաջանում է «մի դասակարգի մարդկանց մյուսին ենթակայացնելու միջոցով», դրանով իսկ հաստատում է պետության և իրավունքի սոցիալ-դասակարգային էությունը:

Քննադատելով Արիստոտելի նահապետական տեսությունը, Գումպլովիչը գրում է. «Ոչ թե առանձին մարդկանցից, ինչպես ատոմներից, ոչ թե ընտանիքներից, որպես սկզբնաբջիջից է ստեղծվել պետությունը... այլ միայն տարբեր ցեղերից է ծագում պետությունը»: Պատերազմում հաղթողները կազմում են իշխող դասակարգ, իսկ պարտվողները՝ «բանվորների և ծառայողների դասակարգը»: Այսպիսով, պետության հիմնաքարերը համարվում են ցեղերը, որոնց անդամներն աստիճանաբար վերածվում են դասակարգերի և դասերի: Այն ցեղում կամ ցեղերի միավորումում, որը դա տեղի է ունենում՝ ցեղը վերածվում է պետության:

Ոչ մի այլ պատճառ բռնության տեսությունը որպես պետության ծագման գլխավոր դրդապատճառ հաշվի չի առնում, իսկ մյուս տեսություններում առաջ քաշվող պատճառները համարում է ածանցյալ գլխավորից՝ կոպիտ ուժից, որը ենթադրում է ուժային պայքար, պատերազմ, զավթողականություն, ուրիշի ունեցվածքի կողոպուտ և ստրկացում, կարճ ասած՝ ***բռնություն:***

Պատերազմը, ստրկությունը, մասնավոր սեփականությունը և պետությունը

Պետության ծագման գլխավոր պատճառը Գումպլովիչը և նրա կողմնակիցները տեսնում էին բռնությունում և դրա հիման վրա ծագած ***տնտեսական*** գործոններում: Համաձայն նրանց հայացքների, պետությունը միանգամայն բնական (այսինքն՝ բռնության միջոցով) ծագած մի ցեղի

գերիշխանությունն է, որի իրականացման մեխանիզմը ուժն է: Իշխանազորության և ենթակայության հարաբերակցությունից ծագում է ուժեղի ***տնտեսական գերիշխանությունը:***

Խոսելով պատերազմի նշանակության մասին, Գումպլովիչը նկատում է, որ պատերազմի ընթացքում հայտնաբերվում են ուժեղ և թույլ ցեղերը, ուժեղների ռազմական առավելությունը մյուսների նկատմամբ, ինչն արդեն հաղթանակի կեսն է: Նրանք համաձայն են, որ պատերազմը թողնում է կործանարար հետևանքներ, սակայն մյուս կողմից պատերազմում տեսնում են «ստեղծագործող ուժ»:

Տնտեսական գործոնի ներկայությունը պատերազմում բացատրվում է հետևյալ կերպ: Պատերազմ մղելը կամ չմղելը երբեք կախված չի եղել գյուղացուց, արհեստավորից, վաճառականից և այլ մարդկանցից: Հարցը լուծել են ուժեղները շատ պարզ ձևով: Այն հարստությունը, որը կուտակվում էր նստակյաց և աշխատասեր ժողովուրդների մոտ, շատ հրապուրիչ էր քոչվոր կամ միայն պատերազմով զբաղվող և դրանով ապրող բարբարոս ցեղերի համար: Դա էլ հենց դառնում է գիշատչական հարձակումների դրդապատճառ: Այսպիսով, ստացվում է, որ պատերազմը մղվում էր տնտեսական պատճառներով՝ ուրիշների ունեցվածքին տիրանալու, ստրուկներ զավթելու և նրանց վաճառելու կամ շահագործելու և այլն:

Անդադար վարվող պատերազմները, որոնց ընթացքում ձևավորվում և զարգանում է ստրկատիրության ինստիտուտը, որի գլխավոր դասակարգերն են շահագործող ստրկատերերը և ամբողջովին իրավազուրկ ստրուկները, իրենց անտագոնիստական հակասություններով, պահանջում է ստեղծել մի մեխանիզմ, որը կկարողանա կարգավորել կամ որևէ այլ կերպ, առաջին հերթին բռնության կիրառմամբ, լուծել հակասությունները հարուստների և չքավորների, ստրկատերերի և ստրուկների, կառավարողների և կառավարվողների միջև: Բռնության տեսության հեղինակների կարծիքով, այդ բոլորը պայմաններ է ստեղծում պետության ծագման համար:

Առանց ստրկության ինստիտուտի ծագման, գրում է Գումպլովիչը, պետությունն անհնարին էր: Միայն ստրկատիրական տնտեսության զարգացման շնորհիվ, երբ «կենդանի գործիքները» բաշխվում են ուժեղ ցեղերի

միջև՝ պետությունը ստեղծվում է ցեղից:

Գումպլովիչը իր աշխատությունում մանրամասնորեն քննարկում է պատերազմների և մարդկանց ստրկացման դրդապատճառները: Նա գրում է, որ արտադրական միջոցների բացակայության պայմաններում, կամ երբ գործիքներ էին և զենք փայտն ու քարը, քարե կացինն ու դանակը, նիզակը, նետն ու աղեղը, նախնադարյան մարդը չէր կարող իր անձնական պահանջմունքներից ավելի ոչինչ ստեղծել: Նման պայմաններում անիմաստ էր ստրկացումը: Այդ պատճառով էլ այն ժամանակ, որը Ռուսոն «ոսկե» դար էր համարում, զավթողական պատերազմներ չէին մղվում, իսկ փոքր ընդհարումների ժամանակ գերիներ չէին վերցնում: Արտադրության զարգացման որոշակի փուլում, երբ տեղի է ունենում աշխատանքի համընդհանուր բաժանումը, հայտնագործվում են մետաղներն ու դրանց մշակման եղանակները, զենք և գործիքներ են արտադրվում մետաղից, այդ պահից լրացուցիչ աշխատուժի կարիք է զգացվում, և սկսվում են զավթողական պատերազմներն ու ստրկացումը, որի հետևանքով առաջանում է ստրկատիրական մասնավոր սեփականությունը: Այս եզրակացությունը հերքվում է բռնության տեսության ընդդիմախոսների կողմից:

Այսպիսով, ըստ Գումպլովիչի և նրա հետևորդների, ***բռնությունը ծնում է ստրուկների ինստիտուտը***, այսինքն՝ առաջին շահագործվող դասակարգը, ***իսկ ստրկատիրությունից ծնվում է մասնավոր սեփականությունը***: Մասնավոր սեփականության հիմքում ընկած էին այնպիսի գործոններ, ինչպիսիք են նստակյաց կյանքի ու աշխատանքի անցնելը, աշխատանքի բաժանումը, ստրուկների շահագործման և վարձու աշխատուժ օգտագործելու միջոցով հավելյալ արժեք ստանալը:

Հասարակության հետագա զարգացման ընթացքում «ցեղի պետությունը» փոխարինվում է «դասակարգային պետությունով», որի հիմքում ընկած են տնտեսապես գերիշխող դասակարգի (ստրկատերերի) կամքն ու շահերը: Դրա հետ միաժամանակ զարգանում և փոխվում է մարդկանց գիտակցությունը՝ «ցեղային գիտակցությունը փոխարինվում է դասակարգային գիտակցությամբ»:

Բռնության տեսությունը իրավունքի ծագման պատճառների մասին

Իրավունքի ծագման պատճառը Գումպլովիչն ու նրա գաղափարակիցները նույնպես տեսնում էին բռնության մեջ: Գումպլովիչին է պատկանում «ուժն է գնում է իրավունքի առջևից» խորհրդավոր արտահայտությունը: Պետության ուժով հաստատված հասարակական կարգը մնա կայուն և անձեռնմխելի, անհրաժեշտ էր հաստատել այն սահմանները, որոնք բաժանում են իշխող ստրկատերերի դասակարգը (ազնվականությունը) ստրուկների դասակարգից և այդ ստորադաս խավերից: Դրա համար իշխող դասակարգը ուժի միջոցով ստիպում է ժողովրդին կատարել իր կողմից սահմանված վարքի կանոնները, որոնք սկզբում արտահայտվում են ձևափոխված նախնադարյան սովորույթների ձևով: Գրավոր լեզվի ծագումից հետո սովորույթները վերամշակվում, հարմարեցվում են իշխող դասակարգի շահերին և գրի են առնվում: Այսպես ծագում է սովորույթների պրված իրավունքը: Երբ պետա-իրավական հարաբերությունները բարդանում և սովորույթների իրավունքով դրանք հնարավոր չի լինում լուծել, թագավորները հրապարակում են իրենց կողմից սահմանված վարքի կանոններ՝ ***օրենքներ***, որոնք կրում են համընդհանուր և համապարտադիր բնույթ և պահպանվում են պետության ուժով: Այստեղից ճիշտ հետևություն է արվում, որ իրավունքը միշտ առաջին հերթին արտահայտում է ուժեղի, այսինքն՝ իշխող դասակարգերի կամքն ու շահերը:

Բռնության տեսության քննախոսություն

Բռնության տեսությունը, այն տեսքով, որով այն ներկայացված էր պատմական հրատարակումներում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, միշտ ենթարկվում էր խիստ քննադատության և ոչ միայն նրա բովանդակության ու էության տեսանկյունից, այլ նաև սոցիալական դերի և նշանակության առումով:

Հատկապես կարելի է առանձնացնել գերմանացի իրավագետ Գ. Ելլինեկի քննադատական դիրքորոշումը: Նա գրում է. «Ուժի տեսությունը սուտ է իսկ հայացքից հաստատվում է պատմական փաստերով», իսկ փաստերը խոսում են նրա մասին, որ պատմական գործընթացում պետության առաջացումը միայն բացառիկ դեպքերում չի ուղեկցվել բռնությամբ

և ռազմական ուժի գերազանցության հետևանք չի եղել: Իրոք, հաստատում է Ելլինեկը, «պատերազմը բազմաթիվ պետությունների ստեղծողն է»: Սակայն, գրում է գիտնականը, բռնության տեսության նպատակն է եղել ոչ թե առաջին պետությունների ծագման սկզբնապատճառների բացատրությունը, այլ՝ ժամանակակից բուրժուական պետությունների կողմից ուժի և բռնության գործադրումը հիմնավորելն ու արդարացնելը:

Ելլինեկի կարծիքով, բռնության տեսությունը աստվածաբանական տեսության մատերիալիստական հակադրությունն է: Եթե պետություն ստեղծող ուժըթ բխում է բնությունից, ապա այն անհաղթահարելի պետք է լինի, ինչպես արևի լույսը, երկրաշարժը, մակընթացությունն ու տեղատվությունը և այլն: Եթե աստվածաբանությունն ամեն ինչ բացատրում է աստծու կամքով և պահանջում է ենթարկվել աստծու կամքին, ապա ուժի տեսությունը պահանջում է ենթարկվել սոցիալական էվոլյուցիայի կույր ուժերին:

Քննադատների կարծիքով, պատմական փորձը չի հաստատում բռնության տեսության այն թեզիսը, որ սեփականությունը ծնվում է արդեն գոյացած «ցեղի պետությունից»: Շատ տեսություններում, մասնավորապես պետության և իրավունքի ծագման մարքսիստական տեսությունում, ապացուցվում է ճիշտ հակառակը, այսինքն՝ սեփականությունն է պետության և իրավունքի ծագման հիմնապատճառներից մեկը: Մարքսիզմը չի ժխտում բռնության որոշակի դերն ու նշանակությունը պետության առաջացման գործընթացում, սակայն համարում է, որ այն գլխավոր պատճառ չի եղել: Զավթողական պատերազմները նպաստել են դասակարգային շերտավորման, մասնավոր սեփականության առաջացմանը և դրա հիման վրա մարդու շահագործմանը մարդու կողմից, որոնք էլ պետության ծագման գլխավոր պատճառներն են:

Մի շարք հարցերում չկա միաձայնություն նաև բռնության տեսության կողմնակիցների ճամբարում: Տարբեր հայացքներ են արտահայտվում նրանց կողմից, մասնավորապես պատմականորեն առաջին և մեր ժամանակներում ծագող պետությունների հարցում: Ոմանք արդարացնում են ժամանակակից պետությունների ստեղծման բռնի ձևերն ու մեթոդները՝ հեղափոխությունները, քաղաքացիական պատերազմը, ազատագրական և այլ «արդարացի» պատերազմները, որոնք բնական են համարվում և առաջադիմության խթան: Մյուսները, ընդհակառակը, դեմ են ժամանակակից պայմաններում պետության ստեղծման բոլոր տեսակի ուժային մեթոդներին: Երրորդները համարում են, որ անկախ տեղից ու ժամանակից պետությունը միշտ ստեղծվում և պահպանվում է ուժի, բռնության ու պայքարի միջոցով: Չորրորդները, որոնց թվում Գումպլովիչը, գտնում են, որ հասարակության էվոլյուցիան, սկսած կապիտալիզմի փուլից, զարգանում է սոցիալական անհավասարության վերացման ուղիով, մեղմանում են իշխանության իրականացման ձևերն ու մեթոդները, հաստատվում է պառլամենտարիզմը, օրինականությունը և այլն: Հետևաբար, այն բռնությունը, որը կիրառվում էր նախկինում, այսօր կարող է բացառվել պետությունների ստեղծման կամ նրանց վերափոխման ընթացքում: Այստեղ մատերիալիստ Գումպլովիչը ցուցաբերում է իդեալիստական մոտեցում և չի թաքցնում, որ ինքը բուրժուազիայի և կապիտալիստական հասարակարգի գաղափարախոս է:

Բռնության տեսության առավել ադեկվատ հակառակորդները պնդում են, որ նրանում բացակայում է կառուցողականությունը: Այդ տեսությունը «պետություն չի հիմնադրում», այլ ավերում է պետությունները մեկը մյուսի ետևից, ուղի հարթելով անընդհատական հեղափոխությունների համար:

Չնայած հակասականությանը, բռնության տեսությունը պահպանել է իր կենսունակությունը, ակադեմիական և, ինչու չէ, նաև գործնական նշանակությունը, շարունակում է հանդիսանալ բուրժուական գաղափարախոսության բաղկացուցիչ մասերից մեկը:

ՀԱՐՑ 17. ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ-ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Մարքսիզմը, որպես միջազգային պրոլետարիատի հեղափոխական գաղափարախոսություն, ծագել և ձևավորվել է 19-րդ դարի առաջին կեսում: Մարքսիզմի կամ գիտական կոմունիզմի հիմնադիրներն են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը:

Պետության առաջացումը մարքսիստական տեսությունը բացատրում է առաջին հերթին տնտեսական պատճառներով՝ աշխատանքի հասարակական բաժանումով, մասնավոր սեփականության ծագումով, հասարա-

կության բաժանումով հակադիր դասակարգերի (շահագործող և շահագործվող): Հակադիր դասակարգերի հակամարտությունը և մասնավոր սեփականության պահպանման անհրաժեշտությունը ստիպում է տնտեսապես իշխող խավին (ազնվականությանը) ստեղծել ստորադաս խավերի ճնշման ու ենթակայեցման և դրանց կառավարման հատուկ մեխանիզմ՝ պետություն: Պետության կայացման հետ միասին տնտեսապես իշխող դասակարգը դառնում է նաև քաղաքականապես գերիշխող և իր քաղաքական կամքն է թելադրում ամբողջ հասարակությանը: Պետության հետ միասին ծագում է իշխող դասակարգի կամքն ու շահերը արտահայտող իրավունքը:

Այսպիսով, ըստ մարքսիստական տեսության, պետությունը և իրավունքը ծագում են այնտեղ և այն ժամանակ, որտեղ և երբ ծագում է մասնավոր սեփականությունը, հասարակությունը բաժանվում է հակադիր դասակարգերի և ծագում է մարդու շահագործումը մարդու կողմից:

Պետության էության մատերիալիստական հիմունքները շարադրված են գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Լենինի աշխատություններում: Հատուկ պետության առաջացման սկզբնապատճառներին է նվիրված Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» հիանալի գիրքը: Հենվելով ամերիկացի գիտնական Լուիս Մորգանի բազմամյա անձնական հետազոտությունների և դրանց արդյունքում ստեղծված «Հնադարյան հասարակությունը...» նրա աշխատության վրա, Էնգելսը տալիս է մարդկության պատմության գիտական անալիզը, սկսած նրա զարգացման վաղ փուլերից, վերլուծում է նախնադարյան հասարակարգի ճգնաժամի, մասնավոր սեփականության և դասակարգային հասարակության ու պետության ծագման պատճառները, լուսաբանում է ընտանիքի էվոլյուցիան, ապացուցում է պետության վերացման պատմական անխուսափելիությունն ապագայում:

Ֆ. Էնգելսն իր վերոնշված աշխատությունում մատնանշում է պետության ծագման երեք հիմնական ձևեր՝ ***աթենական, հռոմեական և հին գերմանական,*** որոնցից աթենականն առանձնացվում է որպես պետության առաջացման դասական ձև, քանի որ աթենական պետությունը ծագում է անմիջապես ցեղից (ցեղերի միությունից): Հռոմեական պետությունը ծնվում է պատրիկների (ազնվականության) և Հռոմից դուրս բնակվող պլեբեյների (հասարակ ազատ, բայց քաղաքական իրավունքներ չունեցող մարդկանց) միջև ծավալված պայքարից: Ըստ Էնգելսի, հին գերմանական պետությունների առաջացմանը զգալիորեն նպաստել է ուժեղ ցեղերի կողմից ընդարձակ տարածքներ նվաճելը, որոնց կառավարման համար ցեղային կառուցվածքը բոլորովին հարմար չէր:

Արտահայտելով իր սեփական կարծիքը պետության էության և նշանակության վերաբերյալ, Վ. Լենինը մշտապես և բազմիցս ընդգծել է, որ «պետությունը մի դասակարգի տիրապետությունը մյուսի նկատմամբ ապահովելու միջոց է»:

Այսօր, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, տարբեր վերաբերմունքի կարելի է արժանացնել մարքսիզմի դասականների միտքն ու փիլիսոփայական գաղափարները, տնտեսագիտական, սոցիալ-քաղաքական, հեղափոխական և այլ հայացքները, որոնց միասնությունը կոչվում է գիտական կոմունիզմ: Սակայն ոչ մի կասկած չի հարուցում կյանքով ապացուցված նրանց այն հետևությունները, որ «սեփականությունը կառավարում է ազնվականությանը» և, որ սեփականությունն է «հնարավորություն տալիս նրանց ուժեղացնելու իրենց ազդեցությունը կաշառքի միջոցով», քանի որ «ժողովուրդը դեռ պարզ չի գիտակցում սեփականության էությունը», որովհետև «հոգեպես մեռած է և այդ պատճառով հաշտվում է ***սեփականության բռնատիրության հետ***»:

Ավելորդ չի լինի ասել, որ այդ հետևությունները զգալի չափով համահունչ են ժամանակակից Ռուսաստանի, Հայաստանի և մի քանի այլ նախկին ԽՍՀՄ նորանկախ հանրապետություններում տիրող իրականության հետ: Սոցիալիստական պետական համակարգի տապալումը այդ երկրներում դեռևս ոչ մի առաջընթացային փաստով չի արդարացրել իրեն:

Այսպիսով, մարքսիստական տեսությունը չի ժխտում պայմանագրային, նահապետական, բռնության և այլ տեսություններում պետության և իրավունքի ծագման մասին հայացքները, սակայն տարակարծիք է նրանց հետ պետության և իրավունքի ծագման գլխավոր և վճռորոշ պատճառների հարցում:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՏՄԱԿԱՆ ՏԻՊԵՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՀԱՐՑ 18. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Պետությունների տիպաբանությունը կամ դասակարգումը պատմական տիպերի բխում է օբյեկտիվ անհրաժեշտությունից: Դրանում արտացոլվում է տարբեր որակական հատկանիշներ ունեցող պետությունների պատմական հաջորդականության անխուսափելիությունը: Պետությունների տիպաբանության միջոցով բացատրվում է, թե ինչու և ինչպես մի տիպի պետությունը, կատարելով իր պատմական դերը, իր տեղը զիջում է որակապես այլ տիպի պետության և իրավունքի: Այդ պատմական օբյեկտիվ գործընթացի ըմբռնումը անհրաժեշտ է մարդկային հասարակության, պետության և իրավունքի զարգացման օրինաչափությունների իմացության համար:

Գոյություն ունի սերտ կապվածություն տնտեսական բազիսի կամ հասարակական-տնտեսական ֆորմացիայի (տնտեսական բազիսի ձևի) և պատմական տիպի որոշակի պետության առաջացման միջև: Մի հասարակական-տնտեսական ֆորմացիայի վերածումը մեկ ուրիշի ուղեկցվում է նոր տեսակի արտադրական հարաբերությունների ծագումով: Նոր տնտեսական բազիսի և դրա վրա հենվող վերնաշենքի փոփոխությունով, որի արդյունքում առաջանում է որակապես Նոր տիպի պետությունը և իրավունքը:

Պատմությանը հայտնի են չորս տիպի հասարակական-տնտեսական ֆորմացիաներ և դրանց համապատասխանող պատմական տիպի պետություններ՝ ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական և սոցիալիստական: Առաջին երեք տիպի պետությունները ընդունված է համարել շահագործական, իսկ սոցիալիստական պետությունը՝ ոչ շահագործական:

Ինչ վերաբերում է սոցիալիստական տիպի պետությանն ու իրավունքին, որն ունի իր տարատեսակները (սովետական, սոցիալիստական, ժողովրդական, ժող-դեմոկրատական), ապա լինելով տեսաբանորեն խորն ուհանգամանորեն մշակված, գործնականում դեռ ոչ մի երկրում մինչև վերջ չի իրականացվել: Նախկին ԽՍՀՄ-ում և մի շարք այլ երկրներում սոցիալիստական տիպի պետության շինարարության փորձը տվյալ պատմական ժամանակահատվածում կարելի է ձախողված համարել, իսկ սոցիալիստական տնտեսության զարգացման ծրագրերը, սոցիալիստական դեմոկրատիայի, համաժողովրդական պետության, սոցիալիստական օրինականության և այլ դրական սկզբունքները մնացին չիրականացված: Այդ երկրների ժողովուրդները հայտնվեցին մասնավոր սեփականության և բուրժուական դեմոկրատիայի գրկում: Դա բոլորովին չի նշանակում, որ սոցիալիզմի մասին ուսմունքը սխալ է: Կարծում ենք, որ որոշակի օբյեկտիվ, իսկ ավելի շատ սուբյեկտիվ պատճառներով սովետական և արևելաեվրոպական սոցիալիզմը ժամանակավոր պարտություն է կրել կապիտալիստական տնտեսության հետ մրցակցությունում և բուրժուական գաղափարախոսության հետ պայքարում: Չպետք է մոռանալ նաև, որ Հեռավոր Արևելքում գոյություն ունեն հզոր սոցիալիստական պետություններ՝ Չինաստանի ժողովրդական, Վիետնամի դեմոկրատական, Կորեայի ժողովրդա-դեմոկրատական, ինչպես նաև Կուբայի սոցիալիստական հանրապետությունները: Այնպես որ, կարելի է խոսել ոչ թե սոցիալիզմի վերացման, այլ՝ Նորացման և խորացման մասին:

Պատմական տիպի պետությունները տարբերվում են միմյանցից բազմաթիվ հատկանիշներով, սակայն պետության և իրավունքի տիպը որոշելու համար բավական է պատասխանել երկու հարցի.

1) արտադրական հիմնական միջոցների սեփականության ո՞ր ձևն է գերիշխում տվյալ հասարակությունում,

2) ո՞ր դասակարգն է իրականացնում իշխանությունը տվյալ պետությունում:

Առանց պատմական տիպի պետությունների և իրավունքի առաջացման և Նրանց հաջորդականության օրինաչափությունները հաշվի առնելու պետության և իրավունքի տեսությունը և այլ հասարական-քաղաքական

գիտությունները չեն կարող բավարար չափով բացատրել պետության և իրավունքի սոցիալ-քաղաքական բովանդակությունը, որոշել նրանց տեղն ու դերը հասարակության քաղաքական համակարգում:

ՀԱՐՑ 19. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Պետությունների տիպաբանությունը հենվում է այն գաղափարի վրա, որ պետության և իրավունքի զարգացումը երկարատև և անընդհատական գործընթաց է, որը անբաժանելիորեն կապված է հասարակությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունների հետ:

Պատմական տիպի պետությունների և դրանց համապատասխանող իրավական համակարգերի անընդհատական հաջորդականությունը բացատրվում է էվոլյուցիոն և հեղափոխական զարգացումների միասնությամբ:

Էվոլյուցիան՝ դա քանակական աստիճանական զարգացում է՝ նոր որակի անցնելու անհրաժեշտությամբ: Այդ գործընթացը սովորաբար ընթանում է որոշակի հասարակական-տնտեսական ֆորմացիայի կամ պատմական տիպի պետության ներսում: ***Հեղափոխական*** զարգացումը՝ թռիչքաձև անցում է մի տիպի պետությունից մյուսին, որն ուղեկցվում է կտրուկ փոփոխություններով հասարակության տնտեսական բազիսում և վերնաշենքում: Հեղափոխությունը նշանավորվում է արմատական վերափոխումներով պետության ամբողջ օրգանիզմի կենսագործունեության էական օղակներում:

Պետության և իրավունքի տեսությունում, այլ հասարական-քաղաքական գիտություններում ընդունված է, որ հասարակության և պետության զարգացումն ընթանում է վերընթաց գծով (գալարագծով), այսինքն՝ ***առաջընթացային*** և ***անշրջելի***: Հասարակության և պետության վերընթաց զարգացումը ապացուցված է կյանքով և մեկնաբանման կարիք չունի: Ինչ վերաբերում է ***անշրջելիության*** թեզիսին, ապա այն մեկնաբանման կարիք է զգում:

Իրավացի են նրանք, ովքեր պնդում են, որ չի կարելի կանգնեցնել

պատմության անիվը և ետ տալ այն, այսինքն՝ կանգնեցնել հասարակության բնական-պատմական առաջընթացը և դրա հետ միասին պետության և իրավունքի զարգացումը, կանխել պատմական տիպի պետությունների հաջորդականությունը կամ վերադառնալ պատմության գիրկն անցած նախորդ տիպի պետությանն ու իրավունքին: Օրինակ, կապիտալիստական պետությունից և իրավունքից վերադառնալ ստրկատիրական կամ ֆեոդալական պետությանն ու իրավունքին:

Այդ առիթով Մարքսն ու Էնգելսը գրում են. «Հասարակությունը, եթե նույնիսկ նա հայտնաբերել է իր զարգացման բնական օրենքը... չի կարող ոչ թռչել անցնել զարգացման բնական փուլերը, ոչ էլ արգելել վերջինները դեկրետներով...»: Հասարակության և դրա հետ միասին պետության և իրավունքի զարգացման ***անշրջելիության*** վերաբերյալ տվյալ դրույթը բացարձակ ճշմարտություն է, բայց ոչ վերջին աստիճանի, քանի որ անշրջելիության օրինաչափության հետ միասին հնարավոր են պատմական պատահականություններ: Դրա ամենաթարմ օրինակն են ԽՍՀՄ և մի շարք արևելաեվրոպական սոցիալիստական տիպի պետությունները, որոնք անշրջելիության թեզիսի համաձայն պետք է հետևողականորեն անցնեին սոցիալիստական պետության էվոլյուցիոն զարգացման բոլոր փուլերով: Սակայն պատմության կողմից դեռևս օբյեկտիվ և լիարժեք գնահատականի չարժանացած դրդապատճառներով, այդ պետությունները կանգ առան կես ճանապարհին և մինչև վերջ չհասնելով՝ ետ վերադարձան դեպի կապիտալիզմը տանող փշոտված ճանապարհով:

Ռուսաստանի և նախկին ԽՍՀՄ-ը դիտավորյալ և միջազգային դավադրության միջոցով տապալած նորանկախ պետությունների կառավարիչները, որոնց սխալմամբ «բարեփոխիչներ-ռեֆորմատորներ» էին անվանում, իսկ իրականում դրանք գրեթե բոլորը քաղաքական ռենեգատներ, ռևիզիոնիստներ և օպորտունիստներ են, իրենց հմայված հայացքները և թեթև մտքերը ուղղել են դեպի անվերադարձ հեռացած անցյալը և չիրագործված «զարգացած սոցիալիզմից» անցում են կատարում դեպի պատմական թատերաբեմը վաղուց ազատած վաղ և վայրենի կապիտալիզմը, որից այսօրվա զարգացած և սոցիալիստական տարրեր իրենց մեջ ներքաշած պետությունները ընդմիշտ հեռացել են:

«Բարեփոխիչ-ռեֆորմատորների» գնահատականը թերևս կտա պատմությունը, սակայն այսօր բազմաթիվ գիտնականներ և միլիոնավոր սովորական քաղաքացիներ դեմ են վայրենի կապիտալիզմի կերտմանը և բազմակողմանի մշակված այլընտրանքային ծրագրեր են առաջարկում «բարեփոխումների» հետևանքով առաջացած համակարգային ճգնաժամից դուրս գալու համար: Նույնիսկ արևմտյան երկրների շատ գիտնականներ իրենց անվստահությունն ու տարակուսանքն են արտահայտում նրանց նկատմամբ, ովքեր «ապագան տեսնում են անցյալում»:

ՀԱՐՑ 20. ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Ստրկատիրական պետությունը պատմական տիպի առաջին հասարակական-քաղաքական կազմակերպությունն է: Առաջին ստրկատիրական պետությունները ծագել են Եգիպտոսում (4-րդ հազարամյակի վերջում մթա), 3-րդ հազարամյակում առաջացել են շումերական և ասորական պետությունները Մերձավոր Արևելքում, առաջին թագավորությունները Չինաստանում և Հնդկաստանում ծագել են 2-րդ հազարամյակում, իսկ 1-ին հազարամյակում ձևավորվել են անտիկ աշխարհի պետությունները՝ Հնադարյան Հունաստանը և Հռոմը:

Տարբերում են երկու տիպի ստրկատիրական պետություններ՝ ***արևելյան*** բռնատիրություններ և ***անտիկ աշխարհի դասական*** ստրկատիրական պետություններ:

Արևելյան բռնատիրությունները բնորոշվում են նախնադարյան տոհմա-ցեղային կարգերի և հարաբերությունների մնացուկներով, ստրկության համեմատաբար մեղմ (ընտանեկան) բնույթով, հողի համայնքային (կոլեկտիվ) սեփականությամբ և դրա բաշխմամբ համայնքի անդամների միջև՝ առանց սեփականության իրավունքի: Գյուղական համայնքներից բացի հողի սեփականատերեր էին պետությունը և առանձին տաճարներ: Հողի մասնավոր սեփականությունը արևելյան առաջին բռնատիրություններում լայն տարածում չուներ, իսկ թագավորին, որը համարվում էր աստծու որդի կամ դրածո՝ պատկանում էր ամբողջ երկիրը և պետությունն իր հպատակներով:

Անտիկ աշխարհի (Հնադարյան Հունաստանի և Հռոմի) ստրկատիրական պետությունները աչքի էին ընկնում ստրկատիրական արտադրական ձևի անհամեմատ ավելի բարձր մակարդակով, պետա-իրավական հատակագծի կատարելիությամբ, ստրուկների շահագործման կազմակերպվածությամբ և դաժանությամբ: Ստրկատիրական հասարակության տնտեսական հիմքն էր հանդիսանում մասնավոր սեփականությունը արտադրական միջոցների և ստրուկների նկատմամբ: Ստրուկը համարվում էր «խոսող առարկա» և աշխատանքի գործիք: Ստրուկները կարող էին պատկանել պետությանը և մասնավոր անձանց: Ստրկատերերն ու ստրուկները կազմում էին հասարակության առաջին հիմնական դասակարգերը: Դրանցից բացի գոյություն ունեին ազատներ և կիսազատ մարդիկ՝ հողագործներ, արհեստավորներ, վաճառականներ և այլ սոցիալական խմբեր: Ստրկության հիմնական աղբյուրներն էին ռազմագերիները, նվաճված երկրների բնակչության որոշակի մասը, պարտքերի դիմաց անազատի ստրկացումը, պետական կամ այլ ծանր հանցագործությունների համար ստրկացումը, ստրուկից ծնվելը և այլն:

ՀԱՐՑ 21. ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Ստրկատիրական իրավունքը սովորույթների և վարքի համընդհանուր ու համապարտադիր կանոնների (նորմերի, օրենքների) համակարգ է, որով կարգավորվում էին հասարակական հարաբերությունները:

Ստրկատիրական իրավունքը կրում է դասակարգային բնույթ, արտահայտում է իշխող ստրկատիրական դասակարգի կամքն ու շահերը: Պատմությունը հայտնի բոլոր հնագույն օրենքները՝ Համմուրապու օրենքները Բաբելոնում, Մանուի օրենքները Հնդկաստանում, «Օրենքների գիրքը» Հնադարյան Չինաստանում, Սոլոնի օրենքները Աթենական հանրապետությունում, 12 աղյուսակների օրենքները Հնադարյան Հռոմում և այլն, արտահայտում էին ստրկատիրական դասակարգի կամքն ու շահերը, օրինականացնում էին սոցիալական և իրավական անհավասարությունը

ազատ մարդկանց տարբեր դասերի միջև, արտոնություններ էին սահմանում ազնվականության համար, ամրագրում էին ստրուկների լիակատար իրավազրկությունը: Հնադարյան Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի և Հեռավոր Արևելքի այլ երկրների սովորույթներն ու օրենքները սահմանում էին հասարակության կաստային կառուցվածքը և յուրաքանչյուր կաստայի համար հաստատում էին իր անխախտելի կանոնակարգն ու վարքի կանոնները:

Պետության և իրավունքի մասին գաղափարները Հնադարյան Հունաստանում առաջինն են զարգացնում «յոթ իմաստունները»՝ Հնադարյան Հունաստանի առաջին փիլիսոփաները, որոնց թվին էր պատկանում աթենացի պետական գործիչ և օրենսդիր Սոլոնը (637-559 թթ. մթա), որի ստեղծած օրենքների ժողովածուն ուժի մեջ է մտնում 594 թ. մթա և արմատական փոփոխությունների է ենթարկում Աթենական պետության ամբողջ սոցիալ-քաղաքական կյանքը:

Հնադարյան Հռոմի պետա-իրավական ինստիտուտները ձևավորվում և զարգանում են Աթենքի դեմոկրատական հանրապետության իրավունքի ազդեցության ներքո: Երբ Հռոմի ժողովուրդը (պլեբսը) պահանջեց պատրիկներից (ազնվականությունից) ստեղծել պետական օրենսդրություն, որով ազատներին տալ քաղաքական իրավունքներ, հունաց աշխարհի գործուղվեց մի մեծ պատգամավորություն՝ հունական պետա-իրավական կարգերի և Սոլոնի օրենքների հետ ծանոթանալու համար: Արդյունքը եղավ այն, որ ստեղծվեց Հռոմեական իրավունքի առաջին գրավոր աղբյուրը՝ 12 աղյուսակների օրենքները: Մինչ այդ Հռոմեական պետության միակ իրավունքը սովորույթն էր:

Ավելի ուշ ստրկատիրական իրավունքը, առանձնապես մասնավոր իրավունքի ինստիտուտները՝ սեփականության, առք ու վաճառքի, պարտավորության, ժառանգության և այլն, աննախադեպ զարգացում են ստանում Հռոմեական իրավունքում: Հռոմեական մասնավոր իրավունքի զարգացման գործում բացառիկ դեր խաղացին 2-3-րդ դարերի հռչակավոր իրավաբաններ Պավելը, Գայը, Պապինյանը, Ուլպիանը և Մարեստինը: Նրանք մի ամբողջ խոպան շերտ մշակեցին ֆունդամենտալ և գործնական իրավագիտությունում, կարողացան իրավագիտությունն անջատել փիլիսո-

փայությունից և այն դարձնել ինքնուրույն գիտություն:

Հռոմեական իրավունքը հետագայում թարգմանվել է լատիներենից, վերամշակվել, հարմարեցվել է ֆեոդալական հարաբերություններին, կոդիֆիկացվել է Բյուզանդական կայսրությունում (Հուստինյանի օրենսգիրքը), իսկ 14-րդ դարից սկսած՝ հիմք է հանդիսացել ռոմանա-գերմանական իրավունքի համար:

ԳԼՈՒԽ 22. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Ֆեոդալական պետությունը պատմական տիպի երկրորդ հասարակական-քաղաքական կազմակերպությունն է, որ գալիս է փոխարինելու ստրկատիրական հասարակարգին ու պետությանը: Ֆեոդալական պետությունները ծագում են երկու ճանապարհով: Մի դեպքում դա տեղի է ունենում ստրկատիրական տնտեսական և պետա-իրավական հարաբերությունների ճգնաժամի և ֆեոդալական տնտեսական հարաբերությունների աստիճանաբար ծագման ու զարգացման շնորհիվ: Դրան նպաստում են նաև ստրուկների ապստամբությունները: Մի այլ դեպքում ֆեոդալական պետությունը ծնվում է անմիջապես նախնադարյան համայնքային հասարակարգից՝ նրա սոցիալ-տնտեսական հիմքերի քայքայման հետևանքով: Այդ դեպքում տոհմա-ցեղային համայնքը անցնում է ֆեոդալական տիպի պետության, խուսափելով ստրկատիրական պետությունից:

Արևմտյան Եվրոպայի առաջին ֆեոդալական պետությունները ծագել են 5-րդ դարում Արևմտյան Հռոմեական կայսրության փլատակների վրա: Այդ աշխարհամասի բնիկ ժողովուրդները՝ ֆրանկները, գերմանները, լոտերը, անգլերը և այլն, որոնց հռոմեացիները համարում էին բարբարոսներ, կազմում են ազգային ֆեոդալական պետություններ՝ Ֆրանսիա, Անգլիա և այլն:

Ռուսները, արևմտյան և արևելյան սլավոնական ժողովուրդներն անցել են ֆեոդալական պետության նախնադարյան տոհմա-ցեղային համակարգից: Դա տեղի է ունեցել տոհմա-ցեղային վերնախավի կողմից հանրային հողերի սեփականացման և ուժեղների կողմից իրենց թույլ ցեղակիցների

հպատակեցման միջոցով:

Չնայած նրան, որ ֆեոդալական պետությունները առաջացել են երկու տարբեր ճանապարհներով, սակայն բերել են նույն արդյունքի՝ խոշոր հողատիրությունների և իշխող ու շահագործող ֆեոդալական դասակարգի առաջացմանը, գյուղական համայնքի քայքայմանը, ազատ գյուղացիների վերածմանը ֆեոդալներից կամ պետությունից լիովին կախված ծուրտ հպատակների: Ծուրտը տարբերվում էր ստրուկից նրանով, որ կարող էր ունենալ սեփական տուն, գույք, գործիքներ, իսկ հարկերն ու տուրքերը վճարելուց հետո մնացածն արտադրանքը մնում էր նրան: Ստրուկի և ծուրտի կարգավիճակի միջև կար մեծ տարբերություն, սակայն ծուրտը մնում էր հողի հետ միասին կապված ֆեոդալից և իրավունք չուներ ինքնակամ լքել նրան: Փախչողներին փնտրում, վերադարձնում և դաժան պատիժների էին ենթարկում:

Ծուրտ գյուղացիության տնտեսական շահագործումը կայանում էր ռենտայի վճարման մեջ: Գոյություն ունեին ռենտայի երեք տեսակ՝ կոովրբական (աշխատանքով), բնամթերքային և դրամային: Ռենտայի վճարումից հետո մնացած արտադրանքը դառնում էր ծուրտի սեփականությունը: Դա ստեղծում էր որոշակի շահագրգռվածություն և խթանում էր գյուղատնտեսության և արհեստագործության արտադրողականության բարձրացմանը: Դա թույլ է տալիս ասել, որ ֆեոդալիզմը, ստրկատիրական հասարակարգի համեմատությամբ, ավելի արդյունավետ և պատմականորեն առաջադեմ հասարակարգ էր:

Որպես իշխող դասակարգի քաղաքական մեխանիզմ ֆեոդալական պետությունը առաջին հերթին կատարում էր շահագործվող դասակարգերի դիմադրության ճնշման, հողի ֆեոդալական մասնավոր սեփականության պահպանության ֆունկցիաները, առանց որի անհնարին էր ֆեոդալական պետությունը:

Ֆեոդալական դասակարգի ներսում գործում էր վասալական ենթակայության (ստորակարգության սանդուղքի) սկզբունքը: Ծածրաստիճան ֆեոդալները (ասպետները) տնտեսական կախվածության մեջ էին բարոններից, սրանք էլ իրենց հերթին՝ իշխաններից, կոմսերից և դուքսերից: Վասալայի սանդուղքի վերջին աստիճանը գրավում էր թագավորը:

Յուրաքանչյուր ֆեոդալ ենթարկվում էր իր անմիջական սենյորին և ազատ էր որևէ պարտավորությունից մյուսների առջև:

Ֆեոդալական պետության կառավարման հիմնական ձևը միապետությունն էր, որն ուներ իր տարբերակները՝ ա) վաղ ֆեոդալական, բ) դասային ներկայացուցչական և գ) բացարձակ միապետություն:

Վաղ ֆեոդալական միապետությունները Արևմտյան Եվրոպայում հաստատվում են 6-9-րդ դարերում և բնորոշվում են կենտրոնական թագավորական իշխանության թուլությամբ, պետության տարածքի մասնատվածությամբ կիսանկախ իշխանատիրությունների:

Դասային-ներկայացուցչական միապետությունը հաստատվում է 10-15-րդ դարերում, որը ֆեոդալիզմի ծաղկման դարաշրջանն է համարվում: Միապետությունների հետ միասին այդ ժամանակահատվածում ծագում են առաջին ներկայացուցչական օրենսդիր մարմինները: 1215 թ. Անգլիայում հրապարակվում է «Ազատության Մեծ Խարտիան» (հռչակագիրը), որով դրվում է պառլամենտարիզմի սկիզբը և ստեղծվում է առաջին պառլամենտը, որի գործունեությամբ սահմանափակվում է թագավորի իշխանությունը: Ֆեոդալական Ֆրանսիայում նույնպես ստեղծվում է ներկայացուցչական պառլամենտ, որը կոչվում էր «Գլխավոր Շտատներ»: Ավելի ուշ պառլամենտներ են ստեղծվում եվրոպական այլ երկրներում:

Առաջին ներկայացուցչական պառլամենտների պատգամավորները ընտրվում էին բնակչության տարբեր խավերից՝ ազնվականներից, հոգևորականներից, արհեստավորներից, վաճառականներից և այլն:

Բացարձակ միապետությունը Եվրոպայում հաստատվում է 16-19-րդ դարերում, երբ երևան է գալիս ֆեոդալական հասարակարգի և նրանում գործող տնտեսական հարաբերությունների անարդյունավետությունը, ինչում են նոր արտադրական միջոցներ (ֆաբրիկաներ, մանուֆակտուրաներ) և արտադրական հարաբերություններ: Բացարձակ միապետություններում (Ֆրանսիա, Ռուսաստան և այլն) իշխանությունը նորից կենտրոնացվում է միապետի ձեռքում, որպեսզի բարձրացվի հեղափոխական շարժումների, խռովությունների, ապստամբությունների դեմ մղվող պայքարի արդյունավետությունը: Պետությունը, օգտագործելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցները, փորձում է խոչընդոտել ֆեոդա-

լական հասարակարգի, նրա տնտեսական և սոցիալ-քաղաքական համակարգերի փլուզման օբյեկտիվ գործընթացին: Սակայն դա չի հաջողվում. 18-րդ դարի բուրժուական հեղափոխությունները Անգլիայում, Հոլանդիայում և այլն, վերջապես, 1789 թ. բուրժուական մեծ հեղափոխությունը Ֆրանսիայում տապալում են ֆեոդալական հասարակարգն ու պետությունը:

ՀԱՐՑ 23. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Ֆեոդալական իրավունքն արտահայտում էր իշխող ֆեոդալական դասակարգի շահերը, որոնք պայմանավորված էին այդ դասակարգի կենսագործունեության ապահովման պայմաններով: Ֆեոդալական իրավունքի հիմնական խնդիրներ էին հանդիսանում.

- ֆեոդալական մասնավոր սեփականության իրավունքի ամրագրումը,
- ճորտ գյուղացիության և այլ աշխատավոր խավերի շահագործման մեխանիզմի օրենսդրորեն հաստատումը,
- ֆեոդալական դասակարգի ներսում վասալային հարաբերությունների կարգավորումը,
- ֆեոդալների տնտեսական, քաղաքական և բարոյական գերիշխանության օրինականացումը,
- հեղափոխական շարժումների, գյուղացիական խռովությունների և ապստամբությունների դաժանաբար ճնշումն ու դրա իրավական հիմնավորումն ու արդարացումը:

Հենվելով գործող իրավունքի վրա, իշխող դասակարգը անգթորեն ճնշում էր ցանկացած դիմադրություն, քանի որ այդ անգթությունը օրինականացված էր: Օրինակ, Գերմանիայի համակայսերական օրենքում՝ «Կարոլինայում» (1532 թ.) ամրագրված է. «Եթե որևէ մեկը երկրում, քաղաքում, տիրակալությունում կամ մարզում հասարակ ժողովրդին դիտավորյալ խռովության կբարձրացնի իշխանության դեմ և դա կհայտնաբերվի, ապա համապատասխան նրա հանցագործության ծանրության և հանգամանքների, նա ենթակա է մահապատժի՝ ***գլխատման*** միջոցով, կամ մտրակով ծեծի, երկրից վտարման...»:

Ֆեոդալական իրավունքի յուրահատուկ հատկանիշներից էր նրա ***դասային*** բնույթը: Արտոնյալ դասեր էին համարվում ազնվականությունն ու հոգևորականությունը: Քաղաքների բնակչությունը խիստ սահմանափակված էր իրավունքներում, իսկ ճորտ գյուղացիները փաստորեն զրկված էին տարրական իրավունքներից: Միջնադարի իրավունքի հայտնի աղբյուրում՝ ***Բովեզիի կյուտումներում*** արձանագրված է. «... ճորտերից ոմանք այնպես են ենթակա իրենց սենյորներին, որ այդ սենյորները կարող են տնօրինել նրանց ամբողջ ունեցվածքը, նրանց նկատմամբ ունեն կյանքի և մահվան իրավունք, կարող են նրանց պահել կալանքի տակ, ոնց որ կցանկանան՝ մեղքի համար կամ առանց մեղքի, և ոչ մեկի առջև նրանց համար պատասխանատվություն չեն կրում, բացի Աստծուց: Մյուսներին վերաբերվում են ավելի մեղմ... սենյորները չեն կարող նրանցից պահանջել, եթե նրանք մեղք չեն գործել, բացի ռենտից և պարտքերից, որոնք սովորաբար մուծվում են իրենց ճորտ լինելու համար»:

Ֆեոդալական իրավունքը միշտ հանդես է եկել որպես ուժեղի հռավունք թույլի նկատմամբ, այսպես կոչված՝ ***«բռունցքի իրավունք»***: Ֆեոդալական իրավունքը բացեիբաց իրավունքի աղբյուր էր ծանաչում ուղղակի բռնությունը, անհիմն խոշտանգումները և այլ տեսակի կամայականություններ հպատակների նկատմամբ: Այդ հատկությունը բնորոշ էր ոչ միայն ֆեոդալական համակարգին: Այն զգալի չափով պահպանվել է նաև կապիտալիստական հասարակարգում:

Ֆեոդալական իրավունքը աչքի էր ընկնում իր պարտկոլյարիզմով, այսինքն՝ խիստ մասնատվածությամբ և ամբողջ պետության մասշտաբով միասնական օրենսդրության բացակայությամբ: Միաժամանակ գործում էին տեղական սովորույթների իրավունքը, կանոնական իրավունքը, քաղաքների իրավունքը, ճորտատիրական իրավունքը և պետական օրենսդրությունը:

Եվրոպական պետությունների մասնատվածության պայմաններում (իշխանատիրությունների, կոմսությունների, դքսությունների և այլն) ֆեոդալական իրավունքը մեծ մասամբ բաղկացած էր տեղական սովորույթների իրավունքից և առանձին ֆեոդալների կողմից սահմանված կարգի կանոններից, որոնցից կազմվում էին ժողովածուներ: Ֆրանսիայի

ֆեոդալական իրավունքում գործում էին ավելի քան 300 այդպիսի ժողովածուներ, որոնք կոչվում էին ***«Կյուտումներ»***: Հեղինակավոր կյուտումներից էին, օրինակ, «Նորմանդիայի մեծ կյուտումները» (1275), «Բովեզիի կյուտումները» և այլն:

Կանոնական (եկեղեցական) իրավունքի դերը առավելապես մեծ էր այն եվրոպական երկրներում, որոնցում գերիշխող կրոնը հռչակվում էր որպես պետական կրոն: Կանոնական իրավունքի հիմնական աղբյուրներն էին Հին և Նոր կտակարանները (Աստվածաշունչը), եկեղեցական համաժողովների որոշումները, Կրոնական դոգմատները (12 առաքյալների ուսմունքները և ուրիշներ): Օգտագործելով կանոնական իրավունքը, եկեղեցին փորձում էր լուծել ոչ միայն «երկնային», այլև աշխարհիկ գործեր:

Ֆեոդալական հասարակության զարգացման ընթացքում, որն ուղեկցվում է ապրանքա-ֆինանսական հարաբերությունների կտրուկ աճով, ֆեոդալական իրավունքն սկսում է ընդունել հռոմեական իրավունքի հիմնադրույթները, որոնք պատրաստի ինստիտուտներ էին պարունակում ապրանքա-ֆինանսային հարաբերությունների կարգավորման համար: 14-րդ դարից վերակենդանացված և վերամշակված հռոմեական իրավունքը հիմք է հանդիսանում եվրոպական երկրների պետական իրավունքի համար:

Պետական իրավունքը (օրենսդրությունը) առաջատար տեղ է սկսում գրավել բացարձակ միապետության պայմաններում, երբ իրավունքի հիմնական աղբյուրներ են դառնում կայսրերի և թագավորների օրենքները (դեկրետները, հրամանագրերը, օրդոնանսները), ստեղծվում և հրատարակվում են օրենսգրքեր: Օրինակ՝ «Կարոլինան» Գերմանիայում, «Ռուսաստանի օրենքների ժողովածուն» և այլն: Ավելի ուշ (1804-1812) ստեղծվում է Նապոլեոնի օրենսգիրքը, որը դառնում է չափանմուշ մայրցամաքային եվրոպական երկրների իրավունքի կոդիֆիկացման համար:

Ֆեոդալական իրավունքը, իր ձևերի զանազանությամբ հանդերձ, միշտ եղել է իշխող ֆեոդալական դասակարգի կամքի և շահերի իրականացման միջոց: Դրանում է կայանում նրա սոցիալ-դասակարգային էությունը և նշանակությունը:

ՀԱՐՑ 24. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Պատմական 3-րդ տիպի՝ կապիտալիստական պետությունը պատմական ասպարեզ է դուրս գալիս 18-րդ դարի բուրժուական հեղափոխությունների հաղթանակի արդյունքում: Այդ հաղթանակը վերջ տվեց պատմական դերը կատարած և իրեն սպառած ֆեոդալական հասարակարգին ու պետությանը:

17-18-րդ դարերի բուրժուական հեղափոխությունները Անգլիայում, Հոլանդիայում, Գերմանիայում և 1789 թ. ֆրանսիական մեծ հեղափոխությունը վերացնում են ճորտատիրությունը, գյուղացին ազատություն է ստանում և դառնում իր աշխատուժի տերը: Գյուղացիներն ազատ տեղաշարժվելու իրավունք են ստանում, տեղափոխվում են քաղաքներ և լրացնում են վարձու բանվորների շարքերը, որոնց շահագործման կազմակերպման խնդիրը դառնում է իշխող բուրժուական դասակարգի և կապիտալիստական պետության գլխավոր ֆունկցիաներից մեկը:

Կապիտալիստական հասարակության տնտեսական հիմքերն են դառնում արտադրական հիմնական միջոցների մասնավոր սեփականությունը, որը հռչակվում է սրբազան և անձեռնմխելի, վարձու բանվորական ուժի շահագործումը, ազատ գործարարությունն ու մրցակցությունը՝ հիմնված շուկայական տնտեսական հարաբերությունների վրա: Կապիտալիստական արտադրության շարժիչ ուժը, խթանը և նպատակն է ***գերշահույթը***, որն ստացվում է բանվորների արտադրած հավելյալ արժեքի կապիտալիստական յուրացումից:

Կապիտալիստական հասարակությունում մասնավոր սեփականությունը համարվում է յուրաքանչյուր մարդու տնտեսական ազատության ու անկախության չափանիշ, որն իր հերթին հիմք է հանդիսանում անձնական և քաղաքական ազատությունների համար: Այդ տրամաբանությունն է գերիշխում կապիտալիստական երկրների հասարակական գիտակցությունում:

Կապիտալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը, անկախ նրա զարգացման փուլերից, միշտ ներկայացվել է որպես երկու

հիմնական հակադիր դասակարգերի միասնություն՝ բուրժուազիայի և պրոլետարիատի, որոնց միջև գտնվում են սոցիալական այլ խմբեր՝ ինտելիգենցիան, «աստղեր» չներկայացնող գիտության, կուլտուրայի, մշակույթի ներկայացուցիչները, չինովնիկությունը և այլն: Սակայն բուրժուական ժամանակակից սոցիոլոգիան այլ մոտեցում է դրսևորում այդ հարցում, համարելով, որ հասարակությունը բաղկացած է երեք հիմնական շերտերից (ասենք դասակարգերից)՝ բարձրագույն, միջին և ստորին: Յուրաքանչյուր «դասակարգ» իր մեջ ներառում է բոլոր այն մարդկանց, որոնք ունեն նույն սոցիալական կարգավիճակը և ստանում են մոտավորապես հավասար եկամուտներ:

Հասարակության ***բարձրագույն*** շերտը բաղկացած է փոքրամասնություն կազմող այն անձնաց, որոնց ձեռքում կենտրոնացված է հսկայական հարստություն և որոնք կազմում են իշխող դասակարգի վերնախավը (էլիտան): Նրանք չեն զբաղվում որևէ արտադրական աշխատանքով, բայց ստանում են ամենաբարձր եկամուտները: Դրանց անունները պարբերաբար հրապարակվում են ԱՄՆ-ի և այլ երկրների մամուլում:

Հասարակության ***միջին*** շերտն իր մեջ ներառում է միջին և մանր սեփականատերերին, հաջողակ ֆերմերներին, մանր բիզնեսմեններին, պետական և մասնավոր սեկտորի ծառայողների ահռելի բանակը, որոնց թվում զինվորականներին, ոստիկաններին և այլն: Սրանք պատկանում են տարբեր սոցիալական շերտերի, բայց ստանում են միջին եկամուտ (օրինակ, մի քանի տասնյակ հազար դոլար):

Կապիտալիստական հասարակության ***ստորին*** շերտը բաղկացած է ցածր վարձատրվող կամ չվարձատրվող սոցիալական խավերից՝ բանվորներից, ծառայողներից, կենսաթոշակառուներից, գործազուրկներից և այլն:

Իր զարգացման բոլոր փուլերում կապիտալիզմը միշտ հանդես է եկել որպես մայր երկրների և գաղութային ժողովուրդների շահագործման, ծնշման, միջազգային ավազակության ու կողոպուտի և պատերազմների աղբյուր: Միայն իր զարգացման իմպերիալիստական փուլում (20-րդ դարի սկզբից) կապիտալիզմը երկու աննախադեպ արյունահեղ համաշխարհային պատերազմների պատճառ է եղել, նա է ծնել ռասիզմը, ֆաշիզմը, որոնց

հետևորդները չեն վերացել ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում և բազմաթիվ այլ կապիտալիստական երկրներում: Ուստի անտրամաբանական են բուրժուական գաղափարախոսների փորձերը իդեալականացնել կապիտալիստական հասարակարգը և ձգտել ամեն կերպ պահպանել կամ արհեստականորեն երկարաձգել նրա գոյությունը, հակառակ բնության և հասարակության մեջ գործող օրինաչափությունների: Այդ նպատակին հասնելու համար գլխավոր արևմտյան պետություններում մշակվել և իրականացվում են որոշակի ծրագրեր:

Եվրոպայում ընթանում է այսպես կոչված ***ինտեգրացման*** (մասերի միացման և ամբողջացման) գործընթաց: Դրա համար ստեղծված են «Եվրոպական միություն» և «Եվրոպական խորհուրդ» կոչվող միջազգային կազմակերպությունները, գրեթե բոլոր եվրոպական պետությունների սահմանները բաց են քաղաքացիների փոխադարձ այցելությունների համար, շրջանառության մեջ է մտել եվրոպական ընդհանուր հաստատուն վալյուտա (դրամանիշ)՝ ***«Եվրոն»***, որն իր արժեքով չի զիջում դոլարին (ԱՄՆ-ի): Այս բոլորը վկայում է, որ Եվրոպայում փորձում են «ընդհանուր տուն» ստեղծել: Դա կլինի կոնֆեդերացիա թե ֆեդերացիա, այսօր դժվար է ասել:

Կապիտալիզմի գլխավոր պետությունը՝ ԱՄՆ-ը, վարում է, այսպես կոչված, «գլոբալիզացման» քաղաքականությունը: Դժվար չէ ենթադրել, որ գլոբալիզացման դոկտրինայի հիմքում ընկած է համաշխարհային պետության և կառավարության ստեղծման գաղափարը:

ՀԱՐՑ 25. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

1789-1794 թվականների բուրժուական հեղափոխության հորձանապտույտի մեջ էին ներքաշված երրորդ դասի ստորին խավերը՝ գյուղացիությունը, արհեստավորները, քաղաքային պրոլետարիատը: Արդեն սկսված հեղափոխության պայմաններում բուրժուազիայի և այդ խավերի միջև գոյություն ունեցող հակասությունները վերածվեցին կատաղի

դասակարգային և կուսակցությունների քաղաքացիական պայքարի, որով պայմանավորված էր հեղափոխության ընթացքն ու արդյունքը: Սկզբում իշխանության գլուխ եկան, այսպես կոչված, կոնստիտուցիոնալիստները, որոնք պատրաստ էին միայն փոխզիջումների միապետության հետ: Շուտով նրանք հեռացվեցին իշխանություններից և նրանց փոխարինեցին ժիրոնդիստները, իսկ որոնց էլ տապալեցին ծայրահեղ հեղափոխականները՝ յակոբինցիները, որոնց առաջնորդներն էին Ռուսոյի հասարակական դաշինքի և ժողովրդաիշխանության ուսմունքի հետնորդներ Ռոբերսպիերը և Մարատը:

Կոնստիտուցիոնալիստներն արտահայտում էին բուրժուազիայի վերին խավի շահերը, բուրժուական միապետության կողմնակիցներն էին և ասում էին, որ իշխանությունը պետք է պատկանի ժողովրդին, բայց ժողովրդի վստահված անձը միապետն է: 1791թ. Ֆրանսիական և Եվրոպայի առաջին սահմանադրությունում ամրագրեցին կառավարման սահմանադրական միապետական ձևը և ընտրությունների ցենզային սկզբունքը, որը հակասում էր Մարրոու և քաղաքացու իրավունքների հռչակագրի հավասարության սկզբունքին:

Ժողովրդական մասսաների հզոր ճնշման տակ կոնստիտուցիոնալիստների իշխանությունը տապալվեց, իսկ իշխանության գլուխ եկան ժիրոնդիստները, որոնք դեմ էին կառավարման միապետական ձևին և պաշտպանում էին հանրապետական ձևը: Սակայն սրանց համար թագավորի հրապարակային գլխատումը դարձավ հեղափոխության առավելագույն նվաճումը, որից հետո նրանք փորձում էին կանգնեցնել հեղափոխության հետագա ընթացքը: Ժիրոնդիստների և յակոբինցիների միջև ծավալված կատաղի պայքարը ավարտվեց վերջիններիս հաղթանակով:

Յակոբինցիները կազմում էին հեղափոխության ամենառադիկալ թևը և ձգտում էին ավելի վճռական գործողությունների, պաշտպանում էին մանր բուրժուազիայի և չոնների խավերի շահերը: Ռուսոյի հասարակական դաշինքի և ժողովրդաիշխանության ուսմունքում արտահայտված հիմնական դրույթները՝ «Բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ», իսկ «իշխանության աղբյուրը ընդհանուր կամքն է» դառնում են յակոբինցիների ուղեցույցը: Նրանք դեմ էին սեփականության բացառնականացման սկզբունքին և համարում էին, որ այդ իրավունքը պետք է սահմանափակվի: «Հավասարություն» ասելով յակոբինցիները հասկանում էին ոչ թե նյութական հավասարությունը, որը, նրանց կարծիքով, կարող էր իրականացվել միայն դեմոկրատական հանրապետությունում, այլ՝ քաղաքական-իրավական հավասարությունը:

1793 թ. ընդունվում է Սարդու և քաղաքացու յակոբինյան հռչակագիրը, որում արտահայտվում է նրանց դեմոկրատական ծրագիրը: Այդ ծրագրի հիմնադրույթներն էին.

- ժողովուրդը գերագույն կառավարիչն է, իսկ կառավարությունն ու պաշտոնատար անձինք ժողովրդի հասարակ ներկայացուցիչներն են,

- ժողովուրդն իրավունք ունի փոխել կառավարությունը, եթե կանչել իր ներկայացուցիչներին, եթե նրանք չեն արդարացնում ժողովրդի վստահությունը,

- ժողովուրդն ունի ապստամբության սրբազան իրավունք՝ նրա իրավունքները ոտնահարող կառավարության դեմ:

Այդ ծրագրերը նախատեսում էր համընդհանուր և հավասար ընտրական իրավունք, որում յակոբինցիները տեսնում էին *փողի իշխանության* վերացման միջոց: Ինչպես Ռուսոն, այնպես էլ նրա աշակերտներ Ռոբեսպիերն ու Մարատը համարում էին, որ օրենքը պետք է լինի ընդհանուր կամքի արտահայտիչ, սակայն այն չի կարող այդպիսինը լինել, եթե մարդկանց մեծամասնությունը , որոնց համար գրվում է այդ օրենքը, չեն մասնակցում նրա ստեղծմանն ու ընդունմանը: Նրանց համոզմամբ, անկախ պետության կառավարման ձևից (միապետություն կամ հանրապետություն) իշխանությունը միշտ պատկանում է տուլերեների՝ ժողովրդին: Այսօր էլ մտորումների առիթ է տալիս Ռոբերսպիերի այն միտքը, որ «որևէ ազգի ճնշողը բոլոր ազգերի թշնամին է»: Մարատը բանակալության դեմ անողոք պայքարի առաջամարտիկ էր և կոչ էր անում անողոքաբար ճնշել ժողովրդի թշնամիներին, դավաճաններին և հակահեղափոխականներին: Նա առաջիններից էր, որ հիմնավորում էր հեղափոխական տեռորի անհրաժեշտությունը և պահանջում էր ստեղծել այդ տեռորին իրականացնող կառավարություն՝ յակոբինյան դիկտատուրա: Տեղին ենք համարում նշել, որ դատական նոյակները (տրոյկաները) ոչ թե ստալինյան ռեժիմի ստեղծագործությունն

են, այլ՝ յակոբինյան դիկտատուրայի: Երեք հոգուց բաղկացած դատարաններն արագ դատավճիռներ էին կայացնում «ժողովրդի թշնամիների» նկատմամբ, իսկ Փարիզի կենտրոնում և այլ տեղերում գործող գլխատման մեքենաներն ի կատար էին ածում այդ դատավճիռները:

Ընդհանրապես յակոբինյան դիկտատուրայի ծրագիրը հեղափոխական էր, բայց արտահայտում էր մանր բուրժուազիայի շահերը: Սոցիալական պահանջներն այդ ծրագրում սահմանափակվում էին ծայրահեղ գույքային անհավասարության վերացմամբ: Սակայն հեղափոխությանը մասնակցում էին քաղաքների պրոլետարական խավերը և ձորտատիրությունից ազատված գյուղացիությունը, որոնք հրենց բավարարված չէին զգում դրանով: Նրանց հույսերն հրենց արտահայտությունն էին գտել այսպես կոչված **«Կատաղածների»** ծրագրում, որոնց ներկայացուցիչներն էին Յակ Ռուն, Լեկլերկը, Վառլեն և ուրիշներ, որոնք պահանջում էին շարունակել հեղափոխությունը և ուղղել այն հարուստների դեմ: Պահանջում էին նաև ընդունել օրենք, որով մահապատիժ էր սահմանվում առաջին անհրաժեշտ սպառման ապրանքների սպեկուլյացիայի համար: Նրանք նույնպես հեղափոխական տեռորի դիկտատուրայի կողմնակիցներն էին:

Բուրժուական հեղափոխության հետ միասին ծագում և զարգանում էին կոմունիստական գաղափարները, որոնց առաջին կրողներն էին Ֆրանսուա Բուասսելը և Նիկոլա Բրետոնին: Նրանք համարում էին, որ կոմունիստական համակարգը չի կարելի ստեղծել մի ակնթարթում, պահանջվում է երկար ժամանակ ժողովրդին նախապատրաստելու համար այդ հասարակարգին, աստիճանաբար գույքային հավասարության հասնելու միջոցով:

18-րդ դարի ֆրանսիական հեղափոխության քաղաքական-իրավական մտքի փայլատակումն էր Գրակխ Բաբեֆի ուտոպիստական հեղափոխական կոմունիզմի ուսմունքը՝ «դավադրություն հանուն հավասարության»: Բաբեֆը հասկացել էր, որ կոմունիստական հասարակարգը չի կարող ստեղծվել ռեֆորմների միջոցով, այլ դրա համար անհրաժեշտ է մեծ ցնցում: Այդ պայքարի կազմակերպման համար նա ստեղծում է գաղտնի կազմակերպություն՝ «հավասարների դավադրություն», որի ծրագրում շեշտվում էր, «որ աշխարհի բոլոր դժբախտությունների աղբյուրը

դա սեփականությունն է», որի վերացումն էլ համարվում էր կոմունիստական հասարակարգի ստեղծման առաջին պայմանը: Բաբեֆը համարում էր, որ հեղափոխությունն ավարտված չէ, քանի որ իշխանությունը զավթել են հարուստները: Նա գրում է, որ «ֆրանսիական հեղափոխությունը միայն կանխանշան է ավելի մեծ, ավելի հանդիսավոր հեղափոխության, որը վերջինն է լինելու»:

18-րդ դարի ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը լայն ճանապարհ բացեց առաջադեմ քաղաքական-իրավական գաղափարների զարգացման համար այլ երկրներում: Այդ հեղափոխության քաղաքական միտքը կարճ պատմական ժամանակահատվածում անցավ մեծ էվոլյուցիոն ուղի՝ ֆեոդալիզմի և բռնակալության քննադատությունից մինչև կոմունիստական հասարակարգի հաստատման գաղափարը: Հաջորդ 19-րդ դարը անցավ ֆրանսիական հեղափոխության նշանաբանների ներքո:

ՀԱՐՑ 26. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1789-1794 թվականների ֆրանսիական բուրժուական հեղափոխության և ֆեոդալիզմի տապալման արդյունքում ծագում է կապիտալիստական պետությունը, իր բազմաթիվ անցումային տարատեսակներով: Դրա հետ միասին ծագում և ձևավորվում է բուրժուական իրավունքը, որը սկզբնական շրջանում արտահայտում է հեղափոխությանը մասնակից այս կամ այն քաղաքական ուժերի հարաբերակցությունից բխող շահերը:

Հեղափոխությունից ծնված բուրժուական իրավունքի հիմքում ընկած էին 1989թ· օգոստոսի 29-ի Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում ամրագրված իրավական սկզբունքները՝

-մարդիկ ի ծնե ազատ են ու հավասար:

-հավասար իրավունք ոչ հավասար մարդկանց համար,

-բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առջև,

-չի կարելի արգելել այն, ինչը արգելված չէ օրենքով,

-սեփականությունը մարդու բնական և անօտարելի իրավունքներից մեկն է:

Այս և այլ դեմոկրատական քաղաքական-իրավական սկզբունքների հիման վրա 1791թ. ընդունվում է Ֆրանսիայի առաջին սահմանադրությունը, որով Ֆրանսիան հռչակվում է սահմանադրական միապետություն: Սակայն իշխանության գլուխ եկած յակոբինցիներն ընդունում են նոր և ավելի ռադիկալ սահմանադրություն 1793թ., որով Ֆրանսիան հայտարարվում է դեմոկրատական հանրապետություն: Յակոբինյան դիկտատուրայի տապալումից հետո, 1799թ. ընդունվում է երրորդ սահմանադրությունը, համաձայն որի Առաջին կոնսուլի (Նապոլեոն Բոնապարտի) ձեռքում կենտրոնացվում է ամբողջ գործադիր իշխանությունը: 1814թ. խարտիայով (հրովարտակով) Ֆրանսիայում վերականգնվում է Բուրբոնների թագավորական դինաստիան և թագավորը նորից ղեկավարում է պետության և գործադիր իշխանության գլուխը: Հետագայում Ֆրանսիայում և այլ եվրոպական պետություններում տեղի են ունենում հեղաշրջումներ, էլ ավելի է սրվում քաղաքական և դասակարգային պայքարը, տեղի է ունենում 1948թ. հեղափոխությունը, ընթանում են քաղաքացիական կռիվներ, 1871 թ. կարճատև հաղթանակ է տանում առաջին պրոլետարական հեղափոխությունը՝ Փարիզյան Կոմունան:

Այսպիսով, բուրժուական իրավունքը ձևավորվում և զարգանում է ֆեոդալական ազնվականության կատաղի դիմադրության, հեղափոխությունների, անողոք դասակարգային պայքարի և այլ իրադարձությունների շրջապատում:

Կապիտալիստական պետությունների իրավական համակարգերը մտնում են պատմականորեն ձևավորված երկու հիմնական համաշխարհային ընտանիքի մեջ՝ ռոմանա-գերմանական և անգլո-սաքսոնական: Ռոմանական ընտանիքի մեջ են մտնում մայրցամաքային Եվրոպայի բոլոր պետությունների իրավունքը: Անգլո-սաքսոնական իրավունքը ծագել և զարգացել է Անգլիայում, անկախ ռոմանական իրավունքից, տարածված է Անգլիայի բոլոր նախկին գաղութներում, որոնք անկախություն են ձեռք բերել տարբեր պատմական ժամանակահատվածներում (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Հնդկաստան և բազմաթիվ այլ երկրներ):

Բուրժուական իրավունքը վերացնում է ֆեոդալական իրավունքի բոլոր ձևերը և ստեղծում է միասնական իրավական համակարգ, որը բաղկացած

է ***մասնավոր*** և ***հանրային*** իրավունքից (Անգլիայում՝ արդարության և ընդհանուր իրավունքից):

1804-1812 թվականների ընթացքում ստեղծվել և հրատարակվել է բուրժուական իրավունքի առաջին օրենսգիրքը՝ «Նապոլեոնի կոդեքսը», որը դառնում է օրինակ և չափանմուշ ռոմանական իրավունքի կոդիֆիկացման համար այլ երկրներում:

Բուրժուական իրավունքը, որպես իրավական նորմերի համակարգ, ձգտել և ձգտում է ամրապնդել կապիտալիստական հասարակարգն ու պետությունը, նպաստել բուրժուական դեմոկրատիայի և դեմոկրատական ինստիտուտի զարգացմանը, ամրապնդում է կապիտալիզմի տնտեսական բազիսը, սրբազանացնում և պահպանում մասնավոր սեփականությունը, պաշտպանում է իշխող բուրժուական դասակարգի իշխանությունը ուրիշ դասակարգերի ոտնձգություններից:

Մասնավոր իրավունքի նորմերով կարգավորվում են առանձին անհատների և նրանց միավորումների (իրավաբանական անձանց) գույքային և ոչ գույքային իրավահարաբերությունները, որոնք լուծում են ստանում քաղաքացիական դատավարության ընթացակարգով: Մասնավոր իրավունքը ներառում է իր մեջ քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, ընտանեկան, աշխատանքային, առևտրական և իրավունքի այլ ճյուղեր:

Հանրային իրավունքը ներառում է սահմանադրական (պետական), քրեական, քրեական դատավարության, վարչական, հարկային, մաքսային, ուղղիչ աշխատանքային և իրավունքի այլ ճյուղեր և ինստիտուտներ: Այդ իրավունքի նորմերով կարգավորվում են ընդհանուր նշանակություն ունեցող և հասարակական շահ ներկայացնող իրավահարաբերությունները կամ բուրժուազիայի նեղ շահերի հետ առնչվող հարցերը, որոնք հաճախ ներկայացվում են որպես համապետական կամ համազգային շահեր: Հանրային իրավունքի նորմերով կարգավորվող իրավահարաբերությունները լուծվում են քրեական դատավարության կամ վարչական ընթացակարգով, քանի որ այդ իրավահարաբերությունների մի կողմը միշտ պետական մարմինն է:

Բուրժուական իրավունքի աղբյուրներն են օրենքները, ենթաօրենս-

դրական նորմատիվ ակտերը, դատական և վարչական նախադեպերը, սովորույթները և կրոնական իրավունքը:

1. ***Օրենքները*** ընդունվում են պետության բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից՝ պառլամենտի, ազգային ժողովի, խորհրդարանի, կոնգրեսի, դումայի և այլն: Օրենքները կարող են լինել սահմանադրական և սովորական: Սահմանադրական են հենց ինքը սահմանադրությունը և անմիջապես նրանով նախատեսված և պարտադիր օրենքները:

2. ***Ենթաօրենսդրական*** նորմատիվ ակտերն ընդունում են գործադիր իշխանության մարմինները՝ կառավարությունը և գերատեսչությունները: Դրանք կառավարական դեկրետներն ու հրամանագրերն են, գերատեսչությունների հրամանները, որոշումները, վճիռները, հրահանգները, դրույթները:

3. ***Նախադեպը*** կոնկրետ դատական կամ վարչական գործով դատավճիռ կամ վճիռը, որը չափանմուշ (էտալոն) է ծառայում նույնաբնույթ գործերի լուծման համար: Նախադեպերի իրավունքը հայտնի է դեռ հռոմեական իրավունքից, իսկ միջին դարերում և նոր ժամանակում մեծ տարածում ունի անգլո-սաքսոնական իրավական ընտանիքի երկրների իրավունքում՝ Անգլիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում, Հնդկաստանում և այլն:

4. ***Սովորույթները*** դեռևս գործում են «3-րդ աշխարհի» երկրների ժողովուրդների մոտ, որոնք պետական իրավունքը օրենք չեն համարում և շարունակում են ապրել ու գործել իրենց ավանդույթների համապատասխան: Դա վերաբերում է Աֆրիկայի, Ասիայի, Հարավային Ամերիկայի էթնիկ (բնիկ) ժողովուրդներին:

5. ***Կրոնական*** նորմերը, որպես իրավունքի աղբյուր, գործում են մեծ մասամբ իսլամական կոչվող մուսուլմանական պետություններում, որոնցում պոզիտիվ իրավունքի հետ միասին գործում և առաջնահերթ տեղ է գրավում մարգարե Մուհամեդի Ղուրանի հիման վրա ստեղծված մուսուլմանական օրենքների ժողովածուն՝ ***Շարիաթը***: Քրիստոնեական կրոնական իրավունքը, որը մեծ դեր էր խաղում ֆեոդալական հասարակության կյանքում, այժմ կորցրել է իր հասարակական նշանակությունը և գործում է միայն եկեղեցու ներսում, քանի որ գրեթե բոլոր կապիտալիստական քաղաքակիրթ երկրներում եկեղեցին անջատված է պետությունից:

Այսօր կապիտալիզմի գաղափարախոսները պնդում են, որ բուրժուական իրավունքն արտահայտում է ոչ թե կապիտալիստների շահերը, այլ՝ ամբողջ հասարակության ընդհանուր շահերը, իսկ կապիտալիզմի դեմոկրատական ինստիտուտները թույլ են տալիս իրականացնել ժողովրդաիշխանություն: Իրականում բուրժուական լիբերալիզմը, որը աշխատավորների երկարատև պայքարի արդյունք է, նրանց շահագործման կազմակերպման համեմատաբար նոր, նուրբ և կարելի է ասել՝ ավելի քաղաքակիրթ միջոց է, որը մեղմացնում, բայց չի վերացնում դասակարգային հակասությունները, այլ ձգտում է պահպանել ու երկարաձգել կապիտալիստական հասարակարգի գոյությունը: Այդ նպատակով օգտագործվում է ևս մի նորույթ:

Ժամանակակից գլխավոր կապիտալիստական պետությունները այսօր հանդես են գալիս ոչ թե իշխող բուրժուական դասակարգի առանձին շերտերի (մանր, միջին կամ խոշոր) կամ առանձին մոնոպոլիաների ու նրանց միավորումների շահերի արտահայտիչ, այլ՝ որպես «միասնական կապիտալիստ», որը ծառայում է կապիտալիզմի հանրագումարին, նրա ընդհանուր (գլոբալ) շահերին ու նպատակներին:

ՀԱՐՑ 27. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիստական հասարակարգը՝ դա հասարակական-քաղաքական այնպիսի կարգ է, որում վերացված է մարդու շահագործումը մարդու կողմից, տնտեսությունում գերակայում է արտադրական հիմնական միջոցների հանրային (պետական) սեփականությունը և որը հաստատվում է սոցիալիստական հեղափոխության, կապիտալիզմի և շահագործող բուրժուազիայի տապալման, վերացման և պրոլետարական դիկտատուրայի պետության միջոցով:

Առաջին սոցիալիստական հասարակարգը ծագել է նախկին Ռուսական կայսրության տարածքում 1917թ. Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակի արդյունքում և ստացել է Սովետական

Սոցիալիստական Հանրապետությունների Միություն անվանումը:

ՍՍՀՄ-ի քաղաքական հիմքը կազմում էին ժողովրդական պատգամավորների խորհուրդները (սովետները), իսկ տնտեսության հիմքն էր կազմում սոցիալիստական սեփականությունը, որն ուներ երկու ձև՝ համաժողովրդական և կոլտնտեսային (կոոպերատիվ): Սոցիալիստական հասարակարգի գլխավոր նպատակը մարդու նյութական և հոգեկան բնական պահանջմունքների բավարարումն է՝ հանրային արտադրության մշտական աճի ապահովման, առաջադեմ տեխնոլոգիաների կիրառման և տնտեսության համաչափ զարգացման ու կատարելագործման հիման վրա:

Սոցիալիստական հասարակարգում ընդունված է ժողովրդական տնտեսության պետական պլանավորման սկզբունքը, որն արտահայտվում էր տարեկան հնգամյա (յոթնամյա) հեռանկարային տնտեսական ծրագրերի ընդունման ու կատարման մեջ:

Սոցիալիզմի գլխավոր նպատակներից մեկը մարդկանց հանրօգուտ աշխատանքով ապահովելն է: Կարելի է ասել, որ ՍՍՀՄ-ում աշխատանքը պարտադիր էր, քանի որ քրեական և վարչական օրենքներով պատասխանատվություն էր սահմանված թափառաշրջիկության, մուրացկանության և երկար ժամանակ պորտաբույծ կյանք վարելու համար: Յուրաքանչյուր մարդ աշխատում էր ըստ իր ունակությունների և ստանում էր ըստ կատարած աշխատանքի քանակի և որակի: Նյութական արժեքների բաշխման այդ սկզբունքը վկայում էր, որ սոցիալիստական տնտեսության արտադրողականությունը դեռևս բավարար չէր լիառատության և մարդկանց պահանջմունքների լիակատար բավարարման համար:

Բուրժուազիայի գաղափարախոսները նենգամտորեն միշտ աղավաղել են մարքսիզմը, մասնավորապես շատ մեղադրանքներ են հնչել և այսօր էլ հնչում են «հավասարություն» հասկացության վերաբերյալ: Մարքսիստները մեղադրվում են հավասարականացման մեջ, որը բամբասանք է և ոչ մի ընդհանուր բան չունի հավասարության մարքսիստական հասկացության հետ: Հավասարության տակ մարքսիզմն ի նկատի ունի ոչ թե նյութական, այլ՝ իրավական հավասարությունը, որի իրականացումը պահանջում է որոշակի պայմաններ.

ա) աշխատավորների շահագործման վերացում՝ մասնավոր սեփականության ագելման կամ խիստ սահմանափակման միջոցով,

բ) բոլորի համար իրավական հավասարության սահմանում,

գ) աշխատանքի և նյութական ապահովվածության իրավունք:

Սոցիալիստական հասարակարգում չկան անտագոնիստական դասակարգեր: Սոցիալիստական հասարակությունը իրենից ներկայացնում է երեք բարեկամ դասակարգերի միասնություն: Դաժանաբար շահագործվող պրոլետարիատը վերածվեց ՍՍՀՄ-ի բանվոր դասակարգի, որին պատկանում էր իշխանությունը պրոլետարական դիկտատուրայի փուլում: Մենատնտեսական գյուղացիությունը վերածվեց կոլտնտեսային գյուղացիության, որի տնտեսությունը հիմնված է սոցիալիստական կոլեկտիվ սեփականության և կոլտնտեսության անդամների համատեղ աշխատանքի վրա: Նոր՝ սոցիալիստական ինտելիգենցիան ձևավորվում է բանվորագյուղացիական ծագում ունեցող գիտնականներից, կուլտուրայի, մշակույթի, արվեստների ասպարեզում իրենց տեղը գտած խորհրդային երիտասարդությունից:

Սոցիալիստական դեմոկրատիան առաջին հերթին արտահայտվում էր ավելի քան հարյուր ազգերի և ազգությունների իրավահավասարությունում և բարեկամությունում, խորհրդային ժողովուրդների բարոյաքաղաքական միասնությունում, խորհրդային հանրապետությունների քաղաքական և տնտեսական հավասարությունում, ազգային կուլտուրայի, մշակույթի և գիտության աննախադեպ զարգացման ու ծաղկման մեջ:

Սովետական սոցիալիստականն հասարակությունը կառավարվում էր պետության կողմից, իսկ հասարակության և պետության կազմակերպող, ղեկավար և ուղղություն տվող ուժն էր համարվում ՍՄԿԿ-ն: Այս դրույթը, որն ամրագրված էր ՍՍՀՄ սահմանադրության 6-րդ հոդվածում, թերևս ներքին հակասովետական ուժերի քննադատության գլխավոր թիրախներից մեկն էր:

Զարգացած սոցիալիզմը, որը կառուցվում էր ՍՍՀՄ-ում և մի շարք արևելաեվրոպական երկրներում, դիտվում էր որպես անհրաժեշտ օրինաչափ փուլ համաժողովրդական անդասակարգ պետության և այնուհետև կոմունիստական հասարակության ճանապարհին: Դա թեորիա է, որը զարգանում էր սոցիալիստական հասարակարգի զարգացման հետ զուգընթաց մի քանի տասնամյակների ընթացքում: Սակայն հաճախ օբյեկտիվ և

սուբյեկտիվ պատճառներով, ինչպես նաև պատմական պատահականությունների պատճառով սոցիալիստական պետա-իրավական շինարարության թեորիան հակասության մեջ էր հայտնվում իրականության հետ: Այդ հակասություններից ծագած բուրժուական ռեֆորմացիան վերացրեց սոցիալիստական հասարակարգը ՍՍՀՄ-ում և այլ եվրոպական երկրներում. Դա վկայում է միայն սոցիալիստական հասարակարգի կառուցման ընթացքում թույլ տրված սխալների և դրա հետևանքով առաջացած ծգնաժամի, այլ՝ ոչ թե գիտական կոմունիզմի անձշտության կամ սոցիալիզմի պարտության մասին: Այսօր սոցիալիզմը շարունակում է հաջողությամբ զարգանալ Հեռավոր Արևելքի երկրներում՝ 1,3 միլիարդ բնակչություն ունեցող Չինաստանի ժողովրդական Հանրապետությունում, ԱՄՆ-ի ագրեսիվ գործողություններին հակահարված տված Վիետնամի Դեմոկրատական Հանրապետությունում, Կորեական Ժողովրդա-դեմոկրատական Հանրապետությունում, ինչպես նաև Կուբայի Սոցիալիստական Հանրապետությունում:

ՀԱՐՑ 28. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Սոցիալիստական պետության և իրավունքի տեսաբանական հիմունքները շարադրված են գիտական կոմունիզմի հիմնադիրներ և մտածողներ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելիսի և նրանց գաղափարների հավատարիմ հետևորդ Վ. Լենինի աշխատություններում, կոմունիստական կուսակցությունների ծրագրային փաստաթղթերում, գիտական կոմունիզմի մասնագետների մենագրություններում:

Սոցիալիստական պետության և իրավունքի մասին մարքսիստական ուսմունքը հարաբերաբար երիտասարդ է, ձևավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսում և նրա կանխադրույթները դեռևս ամբողջովին չեն իրագործվել ոչ մի երկրում: ՍՍՀՄ-ը սոցիալիստական իդեալների իրականացման ոչ այնքան հաջող առաջին փորձը կարելի է համարել: ՍՍՀՄ-ի փլուզման ֆենոմենի վերաբերյալ կան բազմազան կարծիքներ, որոնց քննարկումը այստեղ հնարավոր չէ օբյեկտիվ պատճառներով: Ասենք միայն, որ այդ փորձը ձախողվեց ոչ թե այն պատճառով, որ սոցիալիս-

տական ուսմունքը ճիշտ չէ կամ ուտոպիստական է, այլ մի քանի օբյեկտիվ և բազմաթիվ սուբյեկտիվ պատճառներով: Չի բացառվում նաև պատմական պատահականությունը, որն ունի իր օրինաչափությունները:

Անկախ պետության և իրավունքի մարքսիստական տեսությանը տրվող այս կամ այն գնահատականներից, նրա հիմունքները մնում են անփոփոխ և կայանում են հետևյալում.

Առաջին: Սոցիալիստական պետությունը ծագում է ոչ թե էվոլյուցիոն, այլ՝ սոցիտալիստական հեղափոխության ճանապարհով:

Կոմունիստների գլխավոր խնդիրը, ասվում է Մարքսի և Էնգելսի կողմից գրված «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում», «բուրժուազիայի տիրապետության տապալումը և պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճումն է»:

Մարքսիզմի դասականների աշխատանքներում հանգամանորեն մշակված է սոցիալիստական հեղափոխության և զինված ապստամբության թեորիան: Սակայն Մարքսի և Էնգելսի ավելի ուշ ժամանակի աշխատանքներում կան մտքեր հեղափոխության խաղաղ և ոչ խաղաղ ձևերի մասին: Էնգելսը գրում է. «Ապստամբությունը խելացնորություն կլիներ այնտեղ, որտեղ խաղաղ ագիտացիան կարող է բերել նպատակին ավելի արագ և ճիշտ ճանապարհով»:

Երկրորդ: Սոցիալիստական պետության և իրավունքի կայացման օրինաչափությունն ու անհրաժեշտ պայմանն է հանդիսանում հին պետական մեքենայի խորտակումը, բուրժուական պետական ապարատի ոչնչացումը:

Վ. Լենինը միշտ համոզում էր, որ «հեղափոխությունը պետք է կայանա ոչ թե նրանում, որ նոր դասակարգը հրամայի, ղեկավարի հին պետական մեքենայի միջոցով, այլ՝ նրանում, որ նա ջարդի այդ մեքենան և հրամայի, ղեկավարի նոր մեքենայի օգնությամբ»: Միևնույն ժամանակ և դրա հետ միասին նա ասում էր, որ անհապաղ վերացման ենթակա պետական մարմինների հետ միասին կան այնպիսիները, որոնք չի կարելի և պետք չէ վերացնել:

Երրորդ: Կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցումային փուլում սոցիալիստական պետությունը պրոլետարական դիկտատուրայի պետություն է:

Պրոլետարական դիկտատուրայի պետությունը արմատական հեղաշրջում է կատարում հասարակական կյանքի բոլոր բնագավառներում՝ վերացնում է արտադրական հիմնական միջոցների մասնավոր սեփականությունը, ազգայնացնում է տնտեսությունն ու բանկերը, սահմանում է ժողովրդական տնտեսության զարգացման կենտրոնացված պլանավորում, ուժով ճնշում է բուրժուական տարրերի և կոպակության դիմադրությունը, զրկում է նրանց ոչ միայն սեփականությունից, այլև օրենքի պաշտպանությունից և վերացնում է: Անցումային պետության իրավունքը օժանդակում է պրոլետարական դիկտատուրայի խնդիրների լուծմանը և հետագայում մեղմանում է աստիճանաբար՝ դիկտատուրայի մեղմացման հետ միասին:

Չորրորդ: Իր կայացման ընթացքում սոցիալիստական պետությունը զարգանում է էվոլյուցիոն ճանապարհով և անցնում է մի քանի փուլեր՝

ա) պրոլետարական դիկտատուրայի պետության և իրավունքի,

բ) բուն սոցիալիստական զարգացման,

գ) զարգացած սոցիալիզմի կամ համաժողովրդական պետության:

Հինգերորդ: Մարքսիզմի դասականները համարում են, որ սոցիալիստական պետությունը կարող է ունենալ միայն հանրապետական ձև: Էնգելսը այդ կապակցությամբ գրում է. «Մարքսը և ես քառասուն տարի անընդհատ պնդել ենք, որ մեզ համար դեմոկրատական հանրապետությունը միակ քաղաքական ձևն է...»:

Ռուսաստանի պայմանների համար Վ. Լենինը, որպես հանրապետական կառավարման ձևի տարբերակ, ընդունում էր միայն Սովետները: Նա գրում է, որ սկզբնական շրջանում դրանք կլինեն «բանվորական, բատրակային և գյուղացիական Սովետներ ամբողջ երկրով մեկ, ներքևից մինչև վերև, իսկ հետո դրանք կվերածվեն ժողովրդական պատգամավորների և աշխատավորների պատգամավորների Սովետների»:

Ինչ վերաբերում է սոցիալիստական պետության տարածքային կառուցվածքի ձևին, ապա նախապատվությունը տրվում էր ունիտար կառուցվածքին: Սակայն հաշվի առնելով Ռուսաստանի բազմազգ կայսրություն լինելը, Լենինը մշակել էր ազգային ինքնորոշման հիմնահարցը և եկել էր այն եզրակացության, որ Ռուսաստանի պայմաններում սոցիալիստական պետությունը կարող է ունենալ միայն դաշնային կառուցվածք: Այնպես որ,

ունիտար Ռուսական կայսրությունը վերացվեց, իսկ նրա տեղում ստեղծվեց ՍՍՀՄ, որպես կրկնակի անգամ դաշնային պետություն՝ բաղկացած ազգային սովետական սոցիալիստական հանրապետություններից, որոնք իրենց հերթին կարող էին լինել ունիտար հանրապետություններ (օրինակ, Հայաստանը, Ուկրաինան, Բելոռուսիան, Մերձբալթյան հանրապետությունները, Մոլդովան) կամ բաղկացած լինել երկու ձևի ինքնավար միավորներից՝ քաղաքական և վարչական:

Քաղաքական ինքնավարությամբ օժտված էին ինքնավար սովետական սոցիալիստական հանրապետությունները (ԻՍՍՀ), որոնք ազգային պետական միավորներ էին, ունեին իրենց սեփական սահմանադրությունը, օրենսդրությունը, բարձրագույն օրենսդիր, գործադիր և դատական մարմինները: Վարչական ինքնավարության միավորներն էին ազգային մարզերը և օկրուգները, որոնք օժտված էին միայն կառավարման որոշ ինքնավարությամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: *ՍՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանում պահպանվել է նախկինում գոյություն ունեցող դաշնային պետական կառուցվածքը: Հարց է տրվում. արդյոք չի՞ կարելի ՍՍՀՄ դաշնային կառուցվածքում տեսնել նրա փլուզման հիմնական պատճառներից մեկը և արդյոք նույն ճակատագիրը չի՞ սպասում ՌԴ ապագայում:*

Վեցերորդ: **Սոցիալիստական իրավունքը համարվում է առաջին հերթին համապետական խնդիրների լուծման միջոց:**

Ըստ մարքսիստական տեսության, բոլոր շահագործական տիպի պետություններում իրավունքն արտահայտում է տնտեսապես և քաղաքականապես գերիշխող դասակարգերի կամքն ու շահերը: Անցումային փուլում սոցիալիստական իրավունքն արտահայտում է պրոլետարական դիկտատուրայի կամքը, զարգացած սոցիալիզմի փուլում՝ ամբողջ ժողովրդի կամքն ու շահերը: Սրանում արտահայտվում է իրավունքի դինամիկ բնույթը և նրա էվոլյուցիոն զարգացումը մի պատմական տիպի պետության շրջանակում:

Յոթերորդ: **Մարքսիստական տեսությունը պետությունը և իրավունքը չի համարում հավերժ երևույթներ:** Դասակարգերի աստիճանաբար վերաց-

ման ընթացքում դասակարգային բնույթ կրող իրավունքը աստիճանաբար կորցնում է իր դերն ու նշանակությունը և կոմունիստական հասարակարգի բարձրագույն փուլում վերանում է պետության հետ միասին: Դա չպետք է հասկանալ որպես արհեստականորեն ձևավորվող կամ հարկադրաբար իրագործվող գործընթաց, այլ՝ որպես անհրաժեշտ օրինաչափություն: Այդ կապակցությամբ Վ. Լենինը գրում է, որ խոսքը գնում է «միայն պետության վերացման անխուսափելիության մասին, ընդգծելով այդ գործընթացի երկարատևությունը, նրա կախվածությունը կոմունիզմի բարձրագույն փուլի զարգացումից և թողնելով միանգամայն բաց վերացման կոնկրետ ձևերի և ժամկետների հարցը»:

Իսկ ի՞նչ է պահանջվում պետության և իրավունքի վերացման համար, ինչպիսի՞ պայմաններ են անհրաժեշտ դրա համար: Պատասխանելով այդ հարցերին, մարքսիզմի դասականները նշում են նյութական, քաղաքական, սոցիալական և բոլոր այն գործոնները, որոնք նպաստում են դասակարգային անհավասարության վերացմանը, անդասակարգ հասարակության ստեղծմանը, բարձր աստիճանի հասարակական գիտակցության ձևավորմանը, որպեսզի մարդիկ սովորեն աշխատել ընդհանուր շահերի համար «առանց իրավունքի նորմերի», առանց հարկադրանքի: Ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները, որպեսզի «մարդկանց համակեցության հիմնական կանոնները դառնան սովորություն»:

Այս վեհանձն հայացքների համակարգը մարքսիզմի ընդդիմախոսները որակավորում են որպես ուտոպիստական նպատակ՝ ազատագրել ապագա մարդկությունը պետությունից և իրավունքից, բոլոր տեսակի պետա-իրավական ծնշումներից և հարկադրանքից, բոլոր մարդկանց դարձնել վերին աստիճանի գիտակից: Եթե այս նպատակները որոշ չափով նույնիսկ ուտոպիստական համարենք, ապա այդ վեհ նպատակների իրագործման ձգտումը անկասկած մեծ նշանակություն կունենա մարդկության անընդհատական զարգացման արդյունքների համար:

ՀԱՐՑ 29. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Պետության անցումային վիճակն անսովոր երևույթ չէ: Այդ վիճակը միշտ ծագում է մի պատմական տիպի պետությունից և իրավունքից մեկ ուրիշի անցնելու ժամանակ:

Անցումային պետությունն ունի այն բոլոր հատկանիշները, որոնք ընդհանուր են ցանկացած պետության համար (հրապարակային իշխանություն, ինքնիշխանություն, հարկային համակարգ և պետական սահմաններ), սակայն ունեն նաև անցումային վիճակին բնորոշ յուրահատուկ հատկանիշներ:

ԱՌԱՋԻՆ: Անցումային տիպի պետությունները և իրավունքը, որպես կանոն, ծագում են հեղափոխությունների, պատերազմների, պետական հեղաշրջումների և այլ սոցիալական ցնցումների հետևանքով, ինչպես նաև ռեֆորմիստական բարենորոգումների կամ հակահեղափոխական շարժումների ծագման հետևանքով:

ԵՐԿՐՈՐԴ: Պետության և իրավունքի անցումային վիճակն իր մեջ կրում է էվոլյուցիոն զարգացման ընտրության մի քանի ուղղություն, որոնցից պետք է ընտրվի մեկը: Այդ ընտրության ճշտությունը կախված է օբյեկտիվ և առանձնապես սուբյեկտիվ գործոններից՝ հասարակության քաղաքակրթության աստիճաններից, տնտեսության վիճակից և հնարավորություններից, քաղաքական ուժերի հարաբերակցությունից, իշխանության գլուխ եկած առաջնորդների մտահորիզոնից ու աշխարհայացքից, մտավոր ունակություններից ու հակումից, իշխանություն- ժողովուրդ փոխհարաբերություններից և այլն:

Բացի այդ, անցումային պետության ճակատագիրը որոշելիս նոր իշխանությունները պետք է ղեկավարվեն ոչ թե դրական թվացող կարճաժամկետ գործոններով կամ այս կամ այլ մեկուսախմբերի շահերով, այլ պատմության քննությունն անցած քաղաքական-իրավական ուսմունքներում լուսաբանված հասարակության մեջ գործող օրինաչափություններով: Այլ կերպ ասած անհրաժեշտ է ճիշտ որոշել, թե պետության և

հասարակության հետագա զարգացման համար որ ուղին է առաջադիմական (պրոգրեսիվ), իսկ որն հետադիմական կամ շրջադարձային (ռեգրեսիվ):

Փիլիսոփայության այն դրույթը, որ հասարակությունը զարգանում է վերընթացային ուղիով (ըստ Հեգելի՝ պատմական գալարագծով)՝ մի որակական վիճակից անցնելով ավելի կատարյալ վիճակի, բերում է այն հետևության, որ Ռուսաստանում և նախկին ՍՍՀՄ նորանկախ հանրապետություններում ընթացող «բարեփոխումները» կրում են հետադիմական և շրջադարձային բնույթ և ուղղված են դեպի վաղուց պատմության գիրկն անցած վաղ և վայրենի կապիտալիզմի փուլը:

ԵՐՐՈՐԴ: Պետության անցումային վիճակը սովորաբար (կարող են լինել բացառություններ) բերում են համակողմանի ծգնաժամի, տնտեսության աշխատանքի արդյունավետության կտրուկ անկման, հասարակության բազիսի թուլացման, բնակչության բացարձակ մեծամասնության կենսամակարդակի վատթարացման, գործազրկության, մարդու իրավունքների և ազատության ոտնահարման, իշխանական կամայականությունների, կաշառակերության և այլ հանցագործությունների ածի, ազգային արժեքների և արժանապատվության ոտնահարման և բազմաթիվ այլ բացասական երևույթների:

Վերոնշված իրավիճակն ոտնեկցվում է օտարերկրյա պետությունների քաղաքական, տնտեսական, կուլտուրական և այլ տեսակի էքսպանսիաներով, երկրում սկսում են գործել տասնյակ, եթե ոչ հարյուրավոր, օտարերկրյա կազմակերպություններ, որոնց աշխատակիցները տեղական կաշառակեր չինովնիկության հետ միասին կլանում են մուրացկանի վիճակում հայտնված անցումային պետությանը հատկացվող միջազգային ֆինանսական օգնության մեծ մասը, զրկում են նրան իրական իշխանությունից:

ՉՈՐՐՈՐԴ: Անցումային պետություններում, որպես կանոն, տեղի են ունենում ազգային մոլեռանդության բռնկումներ, որից հետո՝ հին և նոր արժեքների վերագնահատում: Տարբեր քաղաքական-հասարակական ուժերի պայքարի հետևանքով երկրում ծագում է քաղաքական և սոցիալական լարվածություն, հաճախ՝ նաև խուճապ և քաոսային վիճակ, որի հետևանքով բնակչությունը դիմում է արտագաղթի:

ՀԻՆԳԵՐՈՐԴ: Անցումային պետությունում իշխանության համակարգում գերակայում են գործադիր իշխանությունը և կառավարման վարչական մեթոդները: Սեփականության վերաբաշխման և այլ «բարենորոգումների» հետևանքով պետական ամբողջ ապարատը, առանձնապես գործադիր և դատական մարմինները, կլանվում են կոռուպցիայով, և իրենք՝ կաշառակերները, օտարերկրյա բարեգործների պահանջով և ակտիվ մասնակցությամբ, կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրեր են մշակում: Օրինակ, մի այդպիսի ծրագրի մշակման համար Հայաստանի Հանրապետությանը օտարները հատկացրել են 300 հազար դոլար, որից օտարերկրյա մասնագետներին միայն ամիսը վճարվում է 14 հազար դոլար: Այստեղ է, որ տեղին կլիներ ասել. «Գողը գողից գողացավ, աստված տեսավ, զարմացավ»:

Անցումային փուլում պետական իշխանությունը լուծում է միմյանց հետ օրգանապես կապված երկու գերխնդիր: Առաջինը կայանում է պետական մեխանիզմի վերակառուցման և նրանում արմատական փոփոխություններ կատարելու մեջ: Երկրորդ խնդիրը կայանում է հասարակության լիբերալիզացման, դեմոկրատական նոր ինստիտուտների ստեղծման, սեփականության նոր ձևերի օրինականացման, տնտեսական բարենորոգումների, նոր «կուլտուրական հեղափոխության», ներքին և արտաքին քաղաքականության մեջ նոր կողմնորոշիչ սկզբունքների արմատավորման, նոր պաշտոնական գաղափարախոսության ընդունման և դրա քարոզչության կազմակերպման մեջ:

Էվոլյուցիոն բարենորոգումների կամ հեղափոխական վերափոխումների օգտակարությունը հասարակության համար գնահատելիս վճռորոշ չափանիշ պետք է հանդիսանա նրանց բարերար ազդեցությունը տնտեսության, գիտության, կուլտուրայի, բնակչության նյութական և հոգեկան պահանջմունքների բարելավման, մարդու իրավունքների և ազատությունների ապահովման վրա: Անկախ նրանից, թե ինչ նպատակով են կատարվում հեղափոխական վերափոխումները կամ ռեֆորմատորական բարեփոխումները, նրանք կորցնում են իրենց իմաստը, եթե չեն իրականացվում վերևում նշված խնդիրները:

Ավելին, երբ բարեփոխումների հետևանքով երկրի, պետության ու նրա

բնակչության դրությունը վատթարանում է, իսկ մարդիկ՝ ահաբեկված ու մտահոգված իրենց զավակների հետագա ճակատագրով, լքում են իրենց հարազատ հայրենիքը, իսկ պետությունը հայտնվում է բազմակողմանի լճացման ու կախվածության մեջ այլ պետություններից, իսկ այդ կախվածությունը այնքան խորն է, որ տեղ չի մնում ձեռք բերած «անկախության» համար, ապա, այդպիսի «բարեփոխությունները» չի կարելի օգտակար համարել և խորանալ դրանց մեջ: Նման բարեփոխումներն օգտակար են պրտոր ջրում ձուկ որսացող. խառն հրաքրությունից օգուտող գիշատիչ մի խումբ շնածկների հոսքար. դրանք բրիշների ոճրախառության հաշվին կապիտալ են կուտակում: Դրանք վնասվեբեր են երկրի բնակչության աշխատավոր մեծամասնության համար որը պարտավոր է ճանաչեցված եղանակով վերականգնել իր կորցրածը և պատասխանատվության ենթարկել արկածախնդիր «բարեփոխիչներին»:

ՀԱՐՑ 30. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անցումային պետությունում, որպես կանոն, օրենսդրության կոդիֆիկացման անհրաժեշտություն է ծագում, քանի որ հին օրենքները խիստ հակասության մեջ են հայտնվում նոր հասարակական հարաբերությունների հետ: Առաջին հերթին ձգտում են ընդունել նոր սահմանադրություն և սահմանադրական օրենքներ:

Կյանքի փորձը ցույց է տալիս, որ նախկին ՍՍՀՄ նորանկախ հանրապետություններում ընդունված սահմանադրություններն ու սահմանադրական օրենքները ոչ այնքան իրական, որքան ծևական են: Օրինակ, սահմանադրությամբ հռչակվում է, որ տվյալ հանրապետությունը ժողովրդավարական, ինքնիշխան, սոցիալական պետություն է կամ իշխանությունը պատկանում է ժողովրդին և այլն, այն պարագաներում, երբ այդ բոլորը չի համապատասխանում իրականությանը: Տարբեր բուրժուական սահմանադրությունների դրույթների կոնգլոմերատ (խառնակույտ) ներկայացնող այդ երկրների սահմանադրությունները, որոնց թվում նաև ՀՀ 1995թ. Սահմանադրությունը, կրաշխավորում են մարդու այնպիսի իրավունքներ և ազատություններ, որոնք ամեն քայլափոխում ոտնահարվում են պետական մարմինների և պաշտոնական անձանց կողմից՝ բացարձակ անհամապատասխանության մթնոլորտում:

Անցումային փուլում սահմանադրության ընդունման նպատակահարմարության վերաբերյալ գիտական վիճաբանությունները այդ հարցի պատասխանը դեռևս չեն գտնում: Ոմանք առաջարկում են սահմանադրության փոխարեն ընդունել ժամանակավոր սահմանադրական ակտ, քանի որ անցումային շրջանում արագ ընթացող և փոխվող գործընթացները թելադրում են սահմանադրության շատ արագ հնացման, որի հետևանքով առանձնամասնների համար նախատեսված պետության հիմնական օրենքը վերած ձվում է ձևական փաստաթղթի:

Անցումային փուլում կայուն սահմանադրության ընդունման կողմնակիցներն իրենց հերթին պնդում են, որ սահմանադրությունը պետք է ստեղծի հնարավորություններ ոչ միայն անցումային շրջանում ծագած հարաբերությունների ամրապնդելու, այլ՝ նաև պետության և հասարակության ապագա ծակատագրի, հասարակարգի ամրապնդման և հասարակության բազմակողմանի զարգացման ուղեցույց ունենալու համար:

Շատ այլ գիտնականների կարծիքով, որն արտահայտվում է գիտական գրականություններում և ժամանակակից իրավագիտության դասագրքերում, երկրորդ տեսակետը խիստ քննադատվում և գնահատվում է որպես մոլորություն, որը հոի է ոչ միայն տեսաբանական այլասեռումներով, այլև գործնական բացասական հետևանքներով՝ սահմանադրության և նրա հիման վրա ընդունված օրենքների բովանդակագրկմամբ, իրականության հետ խզմամբ և, որպես արդյունք, պետա-իրավական համակարգի նկատմամբ հասարակության հավատի և վստահության կորուստով:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

ՀԱՐՑ 31. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Պետության ֆունկցիաները նրա գործունեության հիմնական ուղղություններն են՝ կախված պետության պատմական տիպից, զարգացման փուլից, լուծվող խնդիրներից և նպատակներից:

Պետության ֆունկցիաներն ունեն բարդ կառուցվածք: Դրանցից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է պետության խնդիրների սինթեզված և հանրագումարի բերված համակարգ, որն իր մեջ ներառում է պետության գործունեության բազմաթիվ նույնաբնույթ ուղղություններ:

Պետության ֆունկցիաների իրականացման պատասխանատվությունը բազմակուսակցական քաղաքական համակարգերում կրում են պառլամենտական և պրիզիդենտական ընտրությունների արդյունքում իշխանության գլուխ եկած կուսակցությունները:

Այն քաղաքական համակարգերում, որոնցում գերիշխում է մեկ կուսակցություն, պետության ֆունկցիաների բովանդակության որոշողը և դրանց իրագործման ղեկավարն ու պատասխանատուն իշխանության գլխին մշտապես գտնվող այդ մեկ կուսակցությունն է: Այդ քաղաքական համակարգը գործում էր նախկին ՍՍՀՄ-ում և այսօր գործում է Չինաստանում, Վիետնամում, Հյուսիսային Կորեայում, Կուբայում, որոնցում իշխանությունը գտնվում է կոմունիստական կուսակցությունների ձեռքում:

Այն կարծիքը, թե շուկայական հարաբերությունների պայմաններում պետության տնտեսական ֆունկցիան աստիճանաբար թուլանում է, չի հաստատվում իրականությամբ, ընդհակառակը, պետության միջամտությունը տնտեսական գործընթացներին ուժեղանում է:

Պետության ֆունկցիաների առաջնահերթությունն ու կարևորությունը ուղղակի կախված է տվյալ ժամանակահատվածում լուծվող կոնկրետ խնդիրներից: Օրինակ, եթե պատերազմի ժամանակ առաջին պլան է մղվում պաշտպանության կազմակերպման խնդիրը, ապա տնտեսական ճգնաժամի պարագայում առաջնահերթ է դառնում պետության տնտեսական ֆունկցիան: Տնտեսական ֆունկցիայի լուծումից է կախված տնտեսական ճգնաժամի մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության և նախկին ՍՍՀՄ անկախացած այլ պետությունների մյուս բոլոր ֆունկցիաների իրականացման ընթացքը:

Պետության ֆունկցիաները չի կարելի նույնացնել պետական ապարատի մարմինների ֆունկցիաների հետ, որոնք կրում են համեմատաբար նեղ, տեղային և մասնավոր բնույթ:

Պետության ֆունկցիաները իրականացվում են հատուկ ձևերի և մեթոդների օգտագործմամբ: Կարող են օգտագործվել խրախուսման, համոզման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հարկադրանքի մեթոդները: Պետության ֆունկցիաների իրականացման հիմնական ձևն է օրենսդրական (իրավաստեղծագործական), կատարողական-կարգադրողական և իրավապահ գործունեությունը:

ՀԱՐՑ 32. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Իրավաբանական թեորիայում, մասամբ նաև պետա-իրավական պրակտիկայում, պետության ֆունկցիաները դասակարգվում են զանազան ափանիշներով.

- ըստ նրանց երկարատևության (մշտական և ժամանակավոր ֆունկցիաներ),
- ըստ կարևորության աստիճանի (հիմնական և ոչ հիմնական ֆունկցիաներ):
- ունիտար, դաշնային և կոնֆեդերատիվ պետության ֆուկցիաների,
- իշխանության տարանջատման սկզբունքներից բխող օրենսդրական, կառավարչական և դատական ֆունկցիաների և այլն:

Սակայն պետության և իրավունքի տեսության և այլ իրավական-քաղաքական գիտություններում տասնամյակներ շարունակ կենտրոնական տեղ է տրվում պետության ֆունկցիաների դասակարգմանը ըստ պատմական տիպերի: Վերջին տարիներին սահմանվել են ֆունկցիաներ, որոնք կապ չունեն քաղաքական և սոցիալական դասակարգային չափանիշների հետ, այլ պայմանավորված են «ցանկացած հասարակության բնությամբ»: Նշված չափանիշների համաձայն՝ պետության ֆունկցիաներն ընդունված է դասակարգել.

ա) շահագործական տիպի պետության ֆունկցիաների (շահագործական են համարվում ստրկատիրական, ֆեոդալական և կապիտալիստական պետությունները),

բ) դեմոկրատական տիպի պետությունների ֆունկցիաների,

գ) բոլոր պետությունների բնությունից բխող ֆունկցիաների:

Շահագործման տիպի պետությունների հիմնական ֆունկցիաներն են.

-շահագործվող մեծամասնության ճնշումն ու հնազանդեցումը, անհրաժեշտության դեպքում ուժի և բռնության գործադրմամբ,

-մասնավոր սեփականության պահպանության ապահովումը ուրիշ դասակարգերի ոտնձգություններից,

-աշխատավորների շահագործման մեխանիզմի պահպանությունն ու կատարելագործումը,

-պետության տնտեսական ֆունկցիայի սահմանափակումը (կան հակառակ կարծիքներ, որոնք վերաբերում են կապիտալիստական և այլ տիպի պետությունների տնտեսական ֆունկցիայի դերի բարձացմանը):

-իշխող դասակարգերի շահերի պաշտպանությունը, անհրաժեշտության դեպքում ուժով և հարկադրանքով,

-հաստատված հասարակարգի և պետա-իրավական համակարգի պահպանությունը:

Պետությունների դասակարգումը դեմոկրատական և ոչ դեմոկրատական տիպերի կապված է ինչպես տեսաբանական, այնպես էլ գործնական մեծ դժվարությունների հետ: Դաճախ շատ դժվար է սահմանազատել դեմոկրատականը ոչ դեմոկրատականից: Մեր կարծիքով, դեմոկրատական պետություններ պետք է համարվեն բոլոր իրական սոցիալիստական

պետությունները (Չինաստան, Վիետնամ, Հյուսիսային Կորեա, Կուբա) և սոցիալ-դասակարգային հակասություններին խաղաղ ճանապարհով դրական լուծում տված պետությունները, որոնց դժվար թե կարելի է կապիտալիստական համարել: Նման պետություններից են Նորվեգիան, Շվեդիան, Ֆինլանդիան, Բելգիան, Հոլանդիան և ուրիշներ: Ինչ վերաբերում է գլխավոր կապիտալիստական պետությունների կարգավիճակին, ապա ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և տնտեսապես զարգացած այլ կապիտալիստական երկրները, մեր կարծիքով, պետք է դասվեն բուրժուական դեմոկրատիայի պետությունների թվին:

Դեմոկրատական պետության հիմնական ֆունկցիաներն են.

- աշխատավորների անմիջական ճնշման ֆունկցիայի վերացումը: Այն կարող է իրականացվել ժողովրդի կողմից իշխանությունից հեռացված շահագործող փոքրամասնության և բռնատիրության նկատմամբ: Ամբասկարգ հասարակությունում այդ ֆունկցիան կորցնելու է իր նշանակությունը և վերանալու:

- սեփականության բոլոր ձևերի (պետական, մասնավոր, կոոպերատիվ, կոլտնտեսային և այլն) հավասարաչափ պահպանությունը,

- պետության «կազմակերպչական ֆունկցիայի» առաջատարության ապահովումը: Այդ ֆունկցիան ժամանակակից է և հայտնի չի եղել շահագործական պետություններին,

-դեմոկրատական ինստիտուտների ստեղծման ու զարգացման միջոցով ապահովել դեմոկրատական պետության գլխավոր նպատակի իրագործումը՝ մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և պարտականությունների միասնության ապահովումն ու պաշտպանությունը:

Բնությունից բխող պետության ֆունկցիաները վերաբերում են հասարակության բնականոն կենսագործունեության ապահովման հարցերին: Դրանք անդասակարգային սոցիալական ֆունկցիաներ են, որոնց բովանդակությունը կազմում են բնական ռեսուրսների պահպանումն ու ռացիոնալ օգտագործումը, շրջակա միջավայրի պահպանությունը, անթափոն և առաջադեմ տեխնոլոգիաների ամատավորումը և այլն:

ՀԱՐԳ 33. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Յուրաքանչյուր պետության ֆունկցիաներն ըստ նրանց ուղղվածության դասակարգվում են ***ներքին*** և ***արտաքին*** ֆունկցիաների:

Ներքին ֆունկցիաներ ասելով հասկանում են պետության գործունեության հիմնական ուղղությունները պետության ներսում: Այդ ֆունկցիաները բազմաթիվ և բազմազան են, շոշափում են հասարակական հարաբերությունների գրեթե բոլոր բնագավառները, ուստի դրանք կարելի է ներկայացնել համադրված և սիստեմավորված ձևով: Պետության հիմնական ներքին ֆունկցիաներն են.

- տնտեսական և սոցիալական հարաբերությունների կարգավորումը,
- հասարակական ընդհանուր աշխատանքների կազմակերպումն ու ֆինանսավորումը, պատմության, մշակույթի և կուլտուրայի հուշարձանների պահպանությունը,
- պետական եկամուտների և ծախսերի պլանավորումը,
- սեփականության բոլոր ձևերի անձեռնմխելիության ապահովումը,
- մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորված պահպանությունը և քաղաքացիների դիմումների, բողոքների և գանգատների լուծումը,
- հասարակարգի, օրինականության և իրավակարգի պահպանությունը,
- բնության և բնական ռեսուրսների պահպանությունն ու ռացիոնալ օգտագործումը,
- կուլտուր-լուսավորչական և գաղափարախոսական և այլն:

Պետության ***արտաքին*** ֆունկցիաներ ասելով հասկանում են նրա գործունեության հիմնական ուղղությունները միջազգային ասպարեզում:

Այդ ֆունկցիաները մշտական բնույթ չեն կրում, պարբերաբար ենթարկվում են փոփոխությունների՝ կախված պետության ներսում տեղի ունեցող տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացումներից, ինչպես նաև միջազգային ասպարեզում տեղի ունեցող երևույթներից:

Ժամանակակից Ռուսաստանում, Հայաստանում և ՍՊՀ այլ երկրներում, որոնցում շարունակվում է կապիտալիստական շուկայական հարաբերությունների զարգացման փորձը, տեղի են ունենում փոփոխություններ պետության արտաքին ֆունկցիաներում, որոնք, մասնավորապես, արտահայտվում են հետևյալում:

Առաջին: Փոխվել են քաղաքական, տնտեսական և գաղափարական կողմնորոշումները ՍՍՀՄ նախկին «բարեկամների»՝ «քաղաքակիրթ» պետությունների նախկին գաղութների և ազատագրական շարժումների նկատմամբ: Վերացել է այդ շարժումներին աջակցություն և օգնություն ցույց տալու ֆունկցիան, որն իր ժամանակին կարևորվում էր ՍՍԿԿ-ի և Սովետական պետության կողմից: ***Երկրորդ:*** Սկսած 90-ականների սկզբից՝ կտրուկ փոխվեց Ռուսաստանի, Հայաստանի և նախկին այլ սոցիալիստական հանրապետությունների վերաբերմունքը արևմտյան կապիտալիստական երկրների նկատմամբ: Երկարամյա հակամարտությունը, որն ընթանում էր, այսպես կոչված, «սառը պատերազմի» պայմաններում, այժմ փոխարինվել է համաձայնությունականությամբ, ստորացուցիչ գաղափարական ինքնամտրակումով, քաղաքական հածոյակատարությամբ, արևմտյան քաղաքականության ֆորվատորում շարժվելով և այլ նենգափոխումներում: Նախկինում սոցիալիստական պետությանը ծառայող, իսկ այսօր այդ պետությանն ու հասարակարգին դավաճանած ռեւնեգատները մի ծայրահեղությունից ընկել են մեկ ուրիշ ծայրահեղության մեջ...

Չնայած այդ բոլորին, պետության ընդհանուր և ***գլխավոր*** արտաքին ֆունկցիաները մնում են անփոփոխ: Դրանք են.

- երկրի անկախության և անվտանգության ապահովումը արտաքին ագրեսիաներից, տնտեսական, քաղաքական, կուլտուրական և այլ տեսակի էքսպանսիաներից, այսինքն՝ զավթողականությունից, ագրեցության լայնացումից, կախվածության մեջ գցելու մտադրությունից և այլն,
- նվաճողական, քաղաքական և այլ էքսպանսիաների կազմակերպումը ուրիշ պետությունների դեմ,
- միջազգային դիվանագիտական, տնտեսական, կուլտուրական, գիտական և այլ կապերի հաստատումը ուրիշ պետությունների հետ:

Կառավարման պառլամենտական ձևը տարածված է զարգացած կապիտալիստական երկրներում, ինչպիսիք են Անգլիան (Մեծ Բրիտանիան), Իսպանիան, Շվեդիան, Բելգիան, Ճապոնիան և ուրիշներ: Նշված պետություններում միապետի լիազորությունները տարածվում են միայն պետության գլխի իրավասությանը վերաբերող որոշակի բնագավառների վրա: Իշխանության թևերի նկատմամբ միապետը չունի ոչ մի ազդեցություն և համարվում է լոկ որպես ազգի միասնության խորհրդանիշ:

Կառավարման ***հանրապետական*** ձևը կարող է լինել ***պրեզիդենտական*** կամ ***պառլամենտական:***

Պրեզիդենտական հանրապետությունը բնութագրվում է նրանով, որ պետության գլուխը ընտրովի է և կոչվում է պրեզիդենտ (նախագահ): Նախագահը միաժամանակ հանդիսանում է գործադիր իշխանության գլուխը և իր մանդատը անմիջապես ստանում է ժողովրդից՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ընտրությունների միջոցով: Նախագահը նշանակում է վարչապետին և նրա առաջարկությամբ կառավարության անդամներին (որոշ երկրներում, օրինակ ԱՄՆ-ում՝ կոնգրեսի վերին պալատի համաձայնությամբ): Կառավարությունը հաշվետու և պատասխանատու է պրիզիդենտի առջև, որի լիազորմամբ վարչապետը վարում է կառավարության նիստերը և դրա ընդունած որոշումները ներկայացնում պրիզիդենտի հաստատմանը:

Պառլամենտական հանրապետությունում իշխանության բարձրագույն մարմինը պառլամենտն է, որն իրականացնում է բարձրագույն օրենսդրական մարմնի և կառավարության գործունեության վերահսկողության ֆունկցիաները: Պառլամենտն ընտրվում է ժողովրդի կողմից: Ընտրությունների արդյունքում հաղթած կուսակցությունը կամ կուսակցությունների միավորումը պառլամենտում կազմում է մեծամասնություն, իսկ կուսակցության առաջնորդը կամ առաջնորդներից մեկը մեխանիկորեն դառնում է վարչապետ, որն էլ ձևավորում է կառավարությունը: Կառավարությունը հաշվետու և պատասխանատու է պառլամենտի առջև: Պառլամենտական հանրապետությունները ներկայումս այնքան էլ մեծ տարածում չունեն: Կառավարման այդ ձևն ընդունված է Իտալիայում, Բուլղարիայում, Հունգարիայում, Հնդկաստանում և մի շարք այլ երկրներում: Այդ երկրներում

պրեզիդենտն ընտրվում է պառլամենտի կամ այլ սահմանադրական մարմնի կողմից, որպեսզի չունենա հավասար մանդատ և չկարողանա հակադրվել պառլամենտի որոշումներին:

20-րդ դարի երկրորդ կեսին առանձին եվրոպական երկրներում սահմանադրական բարեփոխումներ կատարվեցին, որի արդյունքում առաջ եկան կառավարման նոր ձևեր՝ կիսանախագահական և կիսախորհրդարանական հանրապետություններ: Օրինակ, Պորտուգալիայում սահմանափակեցին նախագահի լիազորությունները և դրանից ծագեց կիսախորհրդարանական կառավարման ձևը: Ֆրանսիայում, որը խորհրդարանական հանրապետություն էր, ընդլայնվեցին պրեզիդենտի լիազորությունները և այժմ Ֆրանսիայի կառավարման ձևը համարվում է կիսանախագահական: Այլ կերպ ասած, Պորտուգալիան պառլամենտական հանրապետություն է նախագահականի տարրերով, իսկ Ֆրանսիան նախագահական է պառլամենտական կառավարման ձևի տարրերով: ՍՍՀՄ-ի փլուզումից հետո ՀՀ-ն ընդօրինակել է կառավարման կիսանախագահական ձևը:

ՀԱՐՑ 36. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՁԵՎԵՐԸ

Պետության տարածքը երկրագնդի այն հատվածն է, որի վրա տարածվում է տվյալ պետության իշխանությունը: Պետության կառուցվածքի ձև ասելով հասկանում են այդ տարածքի ներքին բաժանումը բաղկացուցիչ մասերի՝ վարչա-տարածքային և ազգա-տարածքային միավորների, ինքնավար քաղաքական կամ ինքնիշխան պետական միավորների:

Ներկայումս գոյություն ունեն երկու հիմնական կառուցվածքային ձևեր՝ ***ունիտար*** և ***դաշնային***: Պետության կառուցվածքի չտարածված ձև է նաև ***կոնֆեդերացիան***:

Ունիտար պետությունը իրենից ներկայացնում է միասնական պետական միավոր, որը բաժանված է միայն վարչա-տարածքային միավորների: Ունիտար պետությանը բնորոշ են ամբողջ պետության համար մեկ սահմանադրություն, միասնական օրենսդրություն, իշխանության ընդհանուր բարձրագույն մարմիններ: Ունիտար կառուցվածք կարող են ունենալ ինչպես միապետությունները, այնպես էլ հանրապետություն-

ները: Օրինակ, ունիտար կառուցվածք ունեն միապետական Անգլիան, Շվեդիան, Ճապոնիան, Բելգիան, Նորվեգիան և այն, ունիտար են նաև հանրապետական Ֆրանսիան, Իտալիան, Լեհաստանը, Բուլղարիան, Ուկրաինան, Բելառուսը, Հայաստանը և այն:

Դաշնային ձևը ենթադրում է պետության բարդ ներքին կառուցվածք. Դաշնային պետությունը բաղկացած է մի շարք այլ պետություններից կամ պետական միավորներից (դաշնության անդամներից)՝ միութենական կամ ինքնավար հանրապետություններից (ՍՍՀՄ), նահանգներից (ԱՄՆ), հողերից (ԳԴՀ) և այլն: Այդ պետական միավորներից յուրաքանչյուրն ունի իր ներքին վարչատարածքային և ազգատարածքային կառուցվածքը: Յուրաքանչյուրի տարածքում, դաշնության համար ընդհանուր իշխանության բարձրագույն մարմինների հետ միասին, գործում են իրենց սեփական իշխանության ու կառավարման մարմինները:

Բացի Ռուսաստանից և նախկին ՍՍՀՄ մի քանի հանրապետություններից, աշխարհի գրեթե բոլոր դաշնային պետություններն ունեն վարչատարածքային բաժանում, քանի որ արևմտյան քաղաքակրթությունն առավելապես հենվում է կոսմոպոլիտիզմի սկզբունքի վրա և խուսափում է ազգային հարցերի քաղաքական լուծումներից: Ռուսաստանի Դաշնությունը ունի շատ բարդ կառուցվածք, հիմնված ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքի վրա և ՍՍՀՄ-ի փլուզումից հետո էլ մնացել է նույնը: Ռուսաստանի տարածքը բաժանված է ինչպես վարչատարածքային (շրջաններ, մարզեր, երկրամասեր), այնպես էլ ազգա-տարածքային միավորների (ինքնավար հանրապետություններ, ազգային մարզեր և օկրուգներ): Ինքնավար հանրապետություններն ունեն իրենց սեփական սահմանադրությունը, օրենսդրությունը, իշխանության բարձրագույն մարմինները: Դաշնային պետության և նրա միավորների իրավասությունները սահմանազատվում են դաշնային սահմանադրությամբ, որին չպետք է հակասեն դաշնային պետության օրենքներն ու այլ նորմատիվ ակտերը:

Կոնֆեդերատիվ կառուցվածքի պետությունները անկախ պետական միավորների կամավորության սկզբունքով ստեղծված միություն կամ միավորում է, երբ նրա անդամներն ամբողջովին պահպանում են իրենց ինքնիշխանությունը, ունեն իրենց սեփական իշխանության օրենսդիր,

գործադիր և դատական մարմիններն ու ինքնուրույն պետության բոլոր այլ հատկանիշները: Պետության կոնֆեդերատիվ կառուցվածքը կարող է լինել պատմական առանձնահատկությունների կամ որոշակի ընդհանուր շահերի արդյունք: Կոնֆեդերացիայի անդամը կարող է դուրս գալ նրա կազմից, նախապես նախազգուշացնելով մյուս անդամներին: Կոնֆեդերացիայի կառավարությունը, որը բաղկացած է լինում նրա անդամ պետությունների ներկայացուցիչներից, զբաղվում է միայն կոնֆեդերատիվ դաշինքով նախատեսված հարցերով: Պատմական փորձը ցույց է տալիս, որ կոնֆեդերատիվ պետական կառուցվածքը սովորաբար ժամանակավոր բնույթ է կրում և հետագայում կարող է վերածվել դաշնային կամ ունիտար պետության: Օրինակ, 1782 թ. Ամերիկայի անգլիական գաղութները (նահանգները) անկախության համար մղվող պայքարի ընթացքում սկզբում միավորվեցին կոնֆեդերատիվ սկզբունքով, իսկ 1789 թ. միավորվեցին մեկ միացյալ պետությունում՝ ԱՄՆ-ի Ֆեդերատիվ Հանրապետությունում: Ներկայումս աշխարհի միակ կոնֆեդերատիվ պետությունը Շվեյցարիայի Հանրապետությունն է: Կոնֆեդերացիայի որոշակի հատկանիշներ ունի ՍՍՀՄ-ի փլուզումից հետո ստեղծված Անկախ Պետությունների Համաձայնության (ԱՊՀ) քաղաքական կազմակերպությունը, որը կարող է հետագայում ընդունի կոնֆեդերատիվ կամ որևէ այլ ձև:

ՀԱՐՑ 37. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՁԵՎԵՐԸ

Պետության քաղաքական ռեժիմ ասելով հասկանում են իշխող դասակարգի և պետական իշխանության կողմից կիրառվող կառավարման մեթոդները: Պատմությունն ու քաղաքական պրակտիկան վկայում են, որ իշխող դասակարգերը, մասնավորապես բուրժուազիան, կիրառում են իշխանության իրականացման երկու հիմնական մեթոդ՝ ***բռնության*** և ***լիբերալիզմի***: Դրան համապատասխան պետության քաղաքական ռեժիմը կարող է լինել ***ավտորիտար*** կամ ***ժողովրդավարական***:

Ավտորիտար (հակաժողովրդավարական) քաղաքական ռեժիմը բնորոշվում է մարդու իրավունքների ոտնահարմամբ կամ զգալի սահմանափակումներով, ընդդիմադիր կուսակցությունների վերացմամբ կամ նրանց

նկատմամբ ճնշումների գործադրմամբ, ներկայացուցչական մարմինների դերի նվազեցմամբ և գործադիր իշխանության ուժեղացմամբ: Այդ քաղաքական ռեժիմի դեպքում պետության գլխի ձեռքում կենտրոնացվում է չափազանց մեծ իշխանություն և նրան տրվում է գրեթե անսահմանափակ իրավասություններ: Ավտորիտար ռեժիմի առավել վտանգավոր ձևերն են ֆաշիստական և տեռորիստական ռեժիմները: Առաջինը գլուխ էր բարձրացրել 20-րդ դարի 30-ական թվականներին Իտալիայում և Գերմանիայում: Չնայած ֆաշիզմի ջախջախմանը երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում, ներկայումս նեոֆաշիստական բազմաթիվ կազմակերպություններ են գործում բազմաթիվ երկրներում, որոնց թվում նաև՝ Ռուսաստանում: Այսօր մի շարք իսլամական երկրներում հաստատվել են տեռորիստական քաղաքական ռեժիմներ, որոնք ունեն հակաիմպերիալիստական ուղղվածություն: Տեռորիզմի դեմ պայքարը դարձել է միջազգային հանրության և քաղաքակիրթ պետությունների ներքին և արտաքին քաղաքականության կարևորագույն հիմնահարցերից մեկը:

Ժողովրդավարական, իսկ ավելի ճիշտ կլիներ ասել բուրժուա-դեմոկրատական, քաղաքական ռեժիմին բնորոշ են հետևյալ հատկանիշները՝ ժողովրդավարության սկզբունքների սահմանադրորեն հռչակումը և դրանց աստիճանաբար իրագործումը, մարդու իրավունքների և ազատությունների խախտման անթույլատրելիության ճանաչումը, պետության բարձրագույն և տեղական իշխանության մարմինների ընտրովիությունն ու փոփոխելիությունը, բուրժուա-դեմոկրատական կամ սոցիալիստական օրինականության, սահմանադրության և իշխանությունների տարանջատման սկզբունքների պաշտոնական ճանաչումը և ուրիշներ: Այն պետություններում, որոնցում չեն պահպանվում այդ սկզբունքները, իսկ օրենսդիր, գործադիր և առավել ևս դատական մարմինները վերահսկվում են մի անձի (պրեզիդենտի) կամ մի քաղաքական խմբավորման կողմից, երբ օրենքի գերակայությունը փոխարինվում է իշխանական կամայականություններով, չեն լուծվում բնակչության կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ նյութական և հոգեկան պահանջմունքների հետևողական բարելավման հարցերը, ապա այդպիսի պետությունում կարող է հաստատվել ավտորիտար (բռնատիրական, ֆաշիստական, տեռորիստական) քաղաքական ռեժիմ, որի վերացումը ժողովրդի կողմից կապված է լինում

հակառակ դժվարությունների և կորուստների հետ: Հետևաբար, ժողովուրդն ու առողջ քաղաքական ուժերը մշտապես պետք է հետևեն, որպեսզի իշխանությունը չայլասերվի և չչեղվի ժողովրդավարության և ժողովրդաիշխանության սկզբունքներից:

ԳԼՈՒԽ 38. ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Ստրկատիրական պետության կառավարման հիմնական ձևերն էին՝ միապետությունը, ազնվական հանրապետությունը և ժողովրդավարական հանրապետությունը:

Ստրկատիրական առաջին պետությունները Եգիպտոսում, Բաբելոնում, Հնդկաստանում և արևելյան այլ երկրներում հաստատվում են, այսպես կոչված, ***արևելյան բռնատիրության*** ձևով:

Արևելյան բռնատիրությունից զգալիորեն տարբերվում էր Հռոմեական միապետությունը, որը հաստատվում է Հռոմեական ազնվական հանրապետության ճգնաժամի արդյունքում և գոյատևում է 27 թ. մ.թ.ա. մինչև 476 թ., անցնելով երկու փուլ՝ պրինցիպատ (27 թ. մ.թ.ա. - 284 թ.) և դոմինատ (284-476): Պրինցիպատի ժամանակահատվածում դեռ պահպանվում էին հանրապետական կառավարման ձևի տարրերը, որոնք կորցնում էին իրենց դերն ու նշանակությունն աստիճանաբար: Դոմինատի դարաշրջանը բնորոշվում է անսահմանափակ միապետության հաստատմամբ և հանրապետական ձևի մնացուկների վերջնականապես վերացմամբ: Քանի որ Հռոմը կայսրություն էր, միապետը կոչվում էր կայսր, որի թագն ու տիտղոսը ժառանգաբար չէր փոխանցվում: Իր մասշտաբով ահռելի կայսրությունը դարեր շարունակ պահպանվում էր շնորհիվ մեծաթիվ վարչական, զորամասերի և դատական համակարգի, որի ղեկավարությունը կենտրոնացված էր կայսրի ձեռքում:

Որպես ստրկատիրական պետության կառավարման հանրապետական ձևի օրինակ կարող է ծառայել Հռոմի ազնվական հանրապետությունը (509-27 մ.թ.ա.) և Սպարտայի ազնվական հանրապետությունը (5 - 4 դ. մ.թ.ա.):

Այդ հնադարյան պետություններում գործում էր իշխանությունների տարանջատման սկզբունքը, որն էլ հիմք է ծառայում դրանց համարել

հանրապետական կառավարման ձև ունեցող պետություններ:

Հռոմեական հանրապետությունում իշխանության բարձրագույն մարմինն էր ժողովրդական ժողովը (ազատ քաղաքացիների), սակայն իրականում այն իրականացնում էր ազնվականության ներկայացուցիչներից ընտրված սենատը: Ժողովը ընտրում էր magistrատների (ցենզորների), իսկ դրանք էլ ընտրում էին սենատորներին: Սենատը կարող էր չվավերացնել ժողովի որոշումները, եթե համարում էր, որ այդ որոշումները չեն բխում «Հռոմի շահերից»: Սենատը կարող էր նաև անհրաժեշտության դեպքում սահմանել դիկտատուրա, նշանակել դիկտատոր և մեջ ամսով տալ նրան արտակարգ լիազորություններ, եթե դա նույնպես բխում էր Հռոմի շահերից:

Սպարտայի հանրապետությունում իշխանության տարանջատումն էլ ավելի էր մանրացված: Բարձրագույն իշխանությունը պատկանում էր երկու ընտրովի թագավորների, իսկ օրենսդրական գործունեությունն իրականացնում էր ***ավագների*** խորհուրդը (հերուսիան), որի կազմի մեջ էին մտնում երկու թագավորներն ու 28 անդամներ, որոնք ընտրվում էին ցմահ (ազնվականներից): Գործադիր իշխանությունն իրականացնում էր ***էֆորների*** խորհուրդը, որն ընտրվում էր տարին մեկ անգամ՝ նույնպես ազնվականներից: Էֆորները վերահսկում էին թագավորների և այլ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունը: Սպարտայում ժողովրդական ժողովը մեծ դեր չէր խաղում, քանի որ նրա որոշումները կանխորոշվում էին վերոնշված մարմինների կողմից:

Ժողովրդավարական ստրկատիրական պետության դասական օրինակ է ծառայում Աթենական պետությունը (5 - 4 դարեր մ.թ.ա.), որում պետական իշխանության բարձրագույն մարմինների ձևավորման և պաշտոնատար անձանց ընտրության մասնակցում էին ոչ միայն իշխող դասակարգի ներկայացուցիչները, այլ նաև բոլոր ազատ քաղաքացիները (20 տարեկանը լրացած տղամարդիկ): Աթենքում հսկապես իրականացվում էին ժողովրդավարության այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են ընտրովիությունը, փոփոխելիությունը, հաշվետվությունը և այլն: Իշխանության իրական բարձրագույն մարմինը Ժողովրդական ժողովն էր, որի բոլոր որոշումներն ընդունվում էին քվեարկության, իսկ որոշակի դեպքերում նաև վիճակ գցելու միջոցով: Իշխանության կառավարման բարձրագույն մարմինն էր **հինգհարյուրի** խորհուրդը, որն ընտրվում էր մեկ տարի ժամկետով: Իսկապես, Աթենական հանրապետությունը ժողովրդավարական էր, բայց դա դեռ լիարժեք ժողովրդավարություն չէր, քանի որ կանայք չունեին ընտրական իրավունք, իսկ ստրուկներն ընդհանրապես իրավազուրկ էին:

ՀԱՐց 39. ՖԵՈՂԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Ֆեոդալական պետության կառավարման հիմնական ձևը միապետությունն էր, շատ հազվադեպ հանդիպում էր ազնվական հանրապետություններ: Ֆեոդալիզմի պայմաններում կառավարման միապետական ձևը ուներ իր տարատեսակները՝ վաղֆեոդալական, դասային-ներկայացուցչական և բացարձակ միապետություն:

ՎԱՂՖԵՈՂԱԼԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ բնորոշվում էր մասնատվածությամբ կիսանկախ իշխանատիրությունների և թագավորական իշխանության թուլությամբ: Ֆեոդալական դասակարգի ներսում գործում էր հիերարխիկ ենթակայության սկզբունքը, համաձայն որի ֆեոդալական ազնվականության ստորին շերտը (ասպետները) կախվածության մեջ էին միջին շերտից (օրինակ, բարոններից Ֆրանսիայում), միջին շերտը իր հերթին՝ բարձրագույններից (իշխաններից, կոմսերից, դուքսերից):

Շատ ֆեոդալական միապետություններում սկզբնական շրջանում թագավորը երկար ժամանակ ընտրվում էր: Թագավորի սպանության համար նախատեսվում էր այնպիսի պատժամիջոց, ինչպիսինը արքեպիսկոպոսի սպանության համար: Մինչև թագավորական իշխանության ժառանգականացումը թագավորը համարվում էր բարձրագույն սենյոր, նրա իշխանությունը սահմանափակված էր և փաստորեն տարածվում էր միայն թագավորական կալվածքների վրա:

ԴԱՍԱՅԻՆ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ համապատասխանում էր ֆեոդալիզմի ծաղկման ժամանակաշրջանին: Անգլիայում միապետության այդ ձևը գոյություն ուներ 12-14-րդ դարերում, Ֆրանսիայում՝ 14-15-րդ դարերում, Լեհաստանում՝ 14-15-րդ դարերում: Այդ ժամանակահատվածում (10-15-րդ դարեր) տեղի է ունենում թագավորական

իշխանության զգալի ուժեղացում: Թագավորական իշխանության ուժեղացման ճանապարհին կանգնած էր ֆեոդալական մասնատվածությունը և ֆեոդալների կատաղի դիմադրությունը կենտրոնացմանը: Սակայն մանր և միջին ազնվականությունը կողմնակից էր կենտրոնական իշխանության ուժեղացմանը, քանի որ նրանք արդեն ի վիճակի չէին ինքնուրույն ճնշել սաստկացող գյուղացիական խռովություններն ու ապստամբությունները և ուժեղ թագավորական իշխանությունը իր հզոր ուժային համակարգով նրանք համարում էին իրենց անվտանգության երաշխավոր: Միևնույն ժամանակ դասային-ներկայացուցչական մարմինները որոշակի սահմանափակումներ մտցրին թագավորի իշխանության մեջ, սակայն դա չէր թուլացնում, այլ ուժեղացնում էր կենտրոնական իշխանությունը, որը հաշվի էր առնում հոգևորականության, ազնվականության, քաղաքային բազմաշերտ բնակչության կարծիքը:

ԲԱՑԱՌՁԱԿ ՏԻԵԶԵՐՈՒԹՅՈՒՆԸ ֆեոդալական պետության կառավարման վերջին ձևն է և ծագում է ֆեոդալիզմի ճգնաժամի փուլում, երբ սկսում են զարգանալ բուրժուական տնտեսական հարաբերությունները, իսկ ֆեոդալիզմը խոչընդոտում էր այդ հարաբերությունների զարգացմանը: 16-19-րդ դարերում եվրոպական միապետություններում և Ռուսաստանի կայսրությունում տեղի է ունենում թագավորական իշխանության աննախադեպ ուժեղացում: Թագավորը իր ձեռքում է կենտրոնացնում ամբողջ պետական իշխանությունը, վերջ է տալիս ֆեոդալական մասնատվածությանը և բանակի ու ոստիկանության միջոցով վերահսկում է պետության ամբողջ տարածքը: Ներկայացուցչական մարմինները թեկուզև պահպանվում են, բայց կորցնում են իրենց դերն ունևնակությունը: Բացառնական միապետությունը դա վերջին փորձն էր՝ պահպանել ֆեոդալական հասարակարգը և երկարաձգել նրա գոյությունը:

ՀԱՐՑ 40. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Կապիտալիստական պետության կառավարման ձևերը հանդես են գալիս որպես իշխանության կազմակերպման միջոց կամ եղանակ: Նրանք տարբերվում են միմյանցից իշխանության աղբյուրներով և պետական իշխանության բարձրագույն մարմինների լիազորություններով, ձևավորման և

գործունեության կարգով և այլ հատկանիշներով:

Կապիտալիստական պետությունը բնորոշ են կառավարման երկու ձև՝ *Սահմանադրական* (պառլամենտական) *միապետություն և բուրժուական հանրապետություն:* Տարբերությունը կառավարման այդ ձևերի միջև պայմանավորված է պետության գլխի իշխանության ծավալով:

Բուրժուական միապետություններում թագավորի (կայսրի) թագն ու տիտղոսը ժառանգորեն և նրա իշխանությունը ձևականիրավաբանական առումով համարվում է անկախ ցանկացած այլ իշխանությունից, պետական մարմիններից և նույնիսկ ժողովրդից, քանի որ երկրի բոլոր գործերը վարչապետի հպատակներն են համարվում:

Բուրժուական հանրապետությունում, ընդհակառակը, պետության գլուխը (պրեզիդենտը) ընտրվում է որոշակի ժամկետով, և նրա իշխանությունը իրավաբանորեն կախված է ժողովրդի կամքից, որը նա արտահայտում է ընտրությունների ժամանակ կամ պառլամենտից:

Սահմանադրական միապետությունը հաստատվում է այն երկրներում, որտեղ բուրժուազիան այս կամ այն պատճառով միանգամից չի կարողանում ձեռք բերել տնտեսական և սոցիալ-քաղաքական գերիշխանություն, գնում է փոխզիջումների ազնվականության հետ, որի շահերի պաշտպանը թագավորն է, և բաժանում է նրա հետ պետական իշխանությունը: Կարելի է ասել, որ սահմանադրական միապետությունը բացարձակ միապետության էվոլյուցիոն ձևափոխումների արդյունք է, երբ բարձրագույն իշխանությունն ամբողջովին (ձևականորեն) պատկանում է թագավորին (կայսրին), վերջին հաշվով հօգուտ բուրժուազիայի: Քանի որ բուրժուազիան վախենում է ոչ այնքան ազնվականությունից, որքան շահագործվող աշխատավորներից՝ պրոլետարիատից, ապա ազնվականությունը պահպանում է որոշակի դիրքեր պետության համակարգում և տնտեսությունում: Դրանում են տեսնում այն գլխավոր պատճառներից մեկը, որի շնորհիվ բուրժուազիան հաճախ գերադասում է իր էությամբ լիբերալ սահմանադրական միապետությունը:

Սահմանադրական միապետությունում օրենսդրական ֆունկցիան կատարում է պառլամենտը: Այդ պատճառով սահմանադրական միապետությունը հաճախ անվանում են պառլամենտական միապետություն: Պառլամենտի ընդունած օրինագծերը հաստատվում են միապետի կողմից: Սակայն միապետի այդ լիազորությունը, ինչպես նրա շատ ուրիշ իրավասու-

թյունները, կրում են ձևական բնույթ: Քաղաքական ավանդույթի համաձայն միապետները երբեք չեն հակադրվում պառլամենտին և միշտ ստորագրում են պառլամենտի ընդունած օրենքները: Պառլամենտական միապետությունում պառլամենտը հաշվետու և պատասխանատու է ոչ թե միապետի այլ՝ պառլամենտի առջև:

Ներկայումս պառլամենտական (սահմանադրական) միապետություններ են Մեծ Բրիտանիան (Անգլիայի միապետի գլխավորությամբ), Բելգիան, Նորվեգիան, Եթովպիան, Դանիան և այլն (մոտավորապես 20 պետություններ):

Հանրապետությունը բուրժուական պետության կառավարման բարձրագույն ձևն է համարվում: Բուրժուական հանրապետությունը ներկայումս հանդես է գալիս երկու ձևով՝ ***պառլամենտական*** և ***պրեզիդենտական:*** Պառլամենտական հանրապետությունը բնորոշվում է հետևյալ հիմնական հատկանիշներով.

- պետության բարձրագույն մարմինը պառլամենտն է,
- կառավարությունն իր գործունեության համար պատասխանատու է պառլամենտի առջև,
- պառլամենտում մեծամասնություն կազմող կուսակցությունը ձևավորում է կառավարությունը, իսկ այդ կուսակցության առաջնորդը մեխանիկորեն գրավում է վարչապետի պաշտոնը,
- պետության գլուխը (պրեզիդենտը) ընտրվում է պառլամենտի կամ սահմանադրությամբ նախատեսված այլ մարմնի կողմից,
- պրեզիդենտը էական դեր չի խաղում բարձրաստիճան պաշտոնատար անձանց մեջ, նրա կարգավիճակը որոշ չափով նման է միապետի կարգավիճակին սահմանադրական միապետությունում:

Ներկայումս պառլամենտական հանրապետություններ են Ավստրիան, Գերմանիան, Իտալիան, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Կոլումբիան, Պերուն, Պարագվայը և այլն (աշխարհի ավելի քան 60 պետություններ):

Պրեզիդենտական հանրապետությունը բնորոշվում է հետևյալ հիմնական հատկանիշներով.

- պրեզիդենտը համատեղում է պետության գլխի և գործադիր իշխանության գլխի պաշտոնները,
- կառավարությունը հաշվետու և պատասխանատու է պրեզիդենտի, այլ ոչ թե պառլամենտի առջև,

- վարչապետին և կառավարության անդամներին նշանակում է պրեզիդենտը,
- պրեզիդենտի ձեռքում կենտրոնացված է հսկայական քաղաքական և սոցիալ-տնտեսական իշխանություն, նա համարվում է զինված ուժերի գլխավոր հրամանատարը:

Առավել տիպիկ պրեզիդենտական հանրապետություններ են ԱՄՆ-ը և Ֆրանսիան:

Ի տարբերություն պետության կառավարման ձևի, կառուցվածքի ձևը բնորոշում է փոխհարաբերությունների բնույթը պետության միասնական օրգանիզմի և նրա բաղկացուցիչ մասերի միջև, որոնք հանդես են գալիս որպես դաշնության սուբյեկտներ կամ վարչա-տարածքային միավորներ:

Ըստ կառուցվածքի ձևի կապիտալիստական պետությունները կարող են լինել ***ունիտար*** և ***դաշնային:***

Ունիտար պետությունն իրենից ներկայացնում է կենտրոնացված պետություն, որը բաղկացած է միայն վարչա-տարածքային միավորներից, որոնք օժտված են միայն վարչական իրավասություններով և չունեն քաղաքական ինքնուրույնություն: Ունիտար պետություններ են Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան և բազմաթիվ այլ պետություններ, որոնց թվում նաև Հայաստանը: Ունիտար պետությանը բնորոշ է իշխանության բարձրագույն մարմինների միասնական համակարգ, մեկ ընդհանուր սահմանադրություն և օրենսդրություն:

Դաշնային պետությունը իրենից ներկայացնում է երկու և ավելի պետական միավորների միություն, որոնցից յուրաքանչյուրը օժտված է որոշակի քաղաքական ինքնուրույնությամբ: Այդ պետական միավորները ԱՄՆ-ում կոչվում են նահանգներ, Գերմանիայում՝ հողեր, Ռուսաստանում՝ ինքնավար հանրապետություններ և այլն: Դաշնային պետության սուբյեկտները ունեն իրենց սեփական օրենսդիր, գործադիր և դատական մարմինները, սահմանադրություն և օրենսդրություն, որոնք չպետք է հակասեն դաշնային սահմանադրությանն ու օրենքներին: Աշխարհի ներկայիս գրեթե բոլոր դաշնային պետությունները կառուցված են վարչա-տարածքային սկզբունքներով: Բացառություն են կազմում Ռուսաստանը և նախկին ԽՍՀՄ-ի մի քանի նորանկախ դաշնային պետություններ (Վրաստանը, Ադրբեջանը), որոնք բաղկացած են և վարչա-տարածքային և ազգա-տարածքային միավորներից:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ 41. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իշխանության տարանջատման գաղափարը որոշ չափով իրագործվում էր դեռ անտիկ աշխարհի պետություններում՝ Հնադարյան Աթենական ժողովրդավարական հանրապետությունում, Սպարտայի և Հռոմի ազնվական հանրապետություններում: Սակայն պետական իշխանության տարանջատման տեսությունը, որպես ուսմունք, ձևավորվել է միայն 17-18-րդ դարերում: Նրա հիմնադիրներն են համարվում անգլիական փիլիսոփա-մատերիալիստ Ջոն Լոկկը (1632-1704) և ֆրանսիական փիլիսոփա-իրավագետ Շարլ Լուի Մոնտեսքյոն (1689-1755):

Պետական իշխանության տարանջատման կարևորությանն ու անհրաժեշտությանն են նվիրված Լոկկի «Երկու տրակտատ պետական կառավարման մասին» աշխատությունը և Մոնտեսքյոի «Օրենքների ոգու մասին» գլխավոր ստեղծագործությունը, ինչպես նաև նրա «Պարսկական նամակներ» վեպը:

Պետական իշխանության տարանջատման մասին ուսմունքը ձևավորվում է այն ժամանակ, երբ հասարակության մեջ հասունանում են անհրաժեշտ պայմանները քաղաքական և գաղափարախոսական պլուրալիզմի համար: Այդ պայմանները ծագում են բուրժուական հեղափոխությունների նախաշեմին՝ 17-րդ դարի երկրորդ կեսին, երբ ակտիվանում է հասարակության տարբեր շերտերի մասնակցությունը սոցիալ-քաղաքական շարժումներին և առավելապես 18-րդ դարի երկրորդ կեսին, երբ ուժեղանում են հեղափոխական տրամադրությունները Ֆրանսիայում և այլ եվրոպական երկրներում: Սիա այդ ժամանակահատվածում Լոկկը Անգլիայում, իսկ

Մոնտեսքյոն Ֆրանսիայում մշակում են պետական իշխանության տարանջատման ուսմունքի հիմունքները:

Լինելով հասարակական դաշինքի և բնական իրավունքի տեսությունների, անձի իրավունքների և ազատությունների անօտարելիության սկզբունքի կողմնակից, սոցիալական կոմպրոմիսի և բուրժուական լիբերալիզմի գաղափարախոս, Լոկկը իշխանության տարանջատման իր սկզբունքներում տեսնում է միջոց սոցիալ-քաղաքական խնդիրների լուծման համար: Նա գրում է, որ միայն պետությունը, որը ստեղծված է ժողովրդի կամքով ընդհանուր օրենքների հաստատման համար, կարող է պաշտպանել քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, երաշխավորել նրանց մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին, հասնել «գլխավոր և մեծ նպատակի»՝ սեփականության անձեռնմխելիությանը, որի համար, նրա կարծիքով, մարդիկ ստեղծել են իրենց քաղաքական միավորումը՝ պետությունը: Լոկկը համարում էր, որ այդ նպատակին հասնելու համար պետական իշխանության լիագորությունները պետք է բաժանվեն միմյանց հավասարակշռող երկու մասերի: Օրենքներ ընդունելու լիագորությունը պետք է տրվի օրենսդիր իշխանությանը՝ պառլամենտին, իսկ օրենքների կատարման ֆունկցիան՝ միապետին (կառավարությանը):

Մոնտեսքյոն զարգացնում և թարմացնում է պետական իշխանության տարանջատման տեսությունը. լրացնում է այն նոր գաղափարներով: Գիտական գրականությունում միանգամայն արդարացի նշվում է, որ Մոնտեսքյոյի ուսմունքը, նախորդների համեմատությամբ, աչքի է ընկնում մտքերի նորությամբ և սկզբունքների հստակությամբ: Դա երևան է գալիս հետևյալում: Նախ, նրանում, որ Մոնտեսքյոն «ազատության» իրերայի հասկացությունը տեսնում է ամրագրված սահմանադրության մեջ: Ապա, նրանում, որ երկու իշխանություններին, որը նախատեսում է Լոկկը, Մոնտեսքյոն գումարում է երրորդը՝ դատական իշխանությունը:

Մոնտեսքյոյի առաջ քաշած իշխանության տարանջատման երրորդությունը, որն արտահայտվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տեսքով, հետագայում ընդունվում է որպես իշխանության տարանջատման դասական սահմանադրական բանաձև:

ՀԱՐՑ 42. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Իշխանության տարանջատման սկզբունքի տեսության նկատմամբ հետաքրքրությունը չի նվազում: Արևմտյան երկրների իրավաբանական գրականության մեջ մեծ տեղ է հատկացվում տվյալ տեսության հիմնադրույթների վերլուծությանը: Հաճախ արտահայտվում են հակադիր հայացքներ նրա տեղի ու դերի վերաբերյալ պետա-իրավական կյանքում. Ոմանք անվերապահորեն և ամբողջովին ընդունում են իշխանության տարանջատման տեսությունը, մյուսները միայն քննադատում են այն: Ընդ որում այստեղ խոսքը ԽՍՀՄ փլատակների վրա առաջացած «նորադարձ դեմոկրատների» մասին չէ, որոնք գրեթե կուրորեն ընդօրինակում են «քաղաքակիրթ երկրների» արժեքավոր փորձը, այլ՝ «զարգացյալ դեմոկրատիայի» այնպիսի երկրների մասին, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան և այլն:

Դրանում համոզվելու համար բավական է դիմել այդ երկրների սահմանադրություններին: Օրինակ, ԱՄՆ-ի գրեթե բոլոր նահանգների սահմանադրությունները նշում են, որ օրենսդիր մարմինները երբեք չպետք է կատարեն գործադիր և դատական իշխանության ֆունկցիաներ կամ երկուսինը միասին, քանի որ իշխանությունը վերջին հաշվով կարող է լինել միայն օրենքի, այլ ոչ թե մարդու իշխանություն:

Բացասական կարծիքը քննարկվող տեսության նկատմամբ նույնպես կատեգորիկ բնույթ է կրում: Մի շարք արևմտյան գիտնական-սահմանադրականներ իրենց աշխատություններում հայտարարում են, որ տվյալ տեսությունը «ֆորմալ տեսություն է», իսկ նրա գործնական կիրառումը միայն բացասական արդյունք է տալիս կամ կրում է հակասական բնույթ:

Սկսած Լոկկից և Մոնտեսքյոյից, որոնց անվան հետ կապում են տվյալ տեսության հիմնադրումը, վերջացրած այդ բնագավառի ժամանակակից փորձագետներով, աշխատել և մշակել են հիմնարար դրույթներ, որոնք կազմում են իշխանության տարանջատման ուսմունքի հիմնակմախքը: Բավականաչափ ընդհանուր բնույթ կրող այդ ունիվերսալ հիմնադրույթներից առանձնացնենք գլխավորները:

ԱՌԱՋԻՆ: Այն պետություններում, որոնք իրենց անվանում են ժողովրդավարական, օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունները ոչ միայն կազմում են մեկ միասնական պետական մեխանիզմ, այլ նաև հարաբերաբար ինքնուրույն են:

ԵՐԿՐՈՐԴ: Պետական իշխանության բարձրագույն մարմինների միջև գործում են օրենսդրական (սահմանադրական) հակակշիռների և զսպման համակարգ, որի նպատակն է պահպանել իշխանությունների հավասարակշռությունը (բալանսը) և թույլ չտալ, որպեսզի դրանցից որևէ մեկը ձգտի և հասնի գերակայության:

ԵՐՐՈՐԴ: Իշխանության բոլոր երեք ճյուղերը գործում են օրենքի և իրենց իրավասությունների շրջանակներում: Սակայն ոչ բոլոր ժողովրդավարական կոչվող պետություններում անհրաժեշտ օրենսդրությունը գոյություն ունի:

Նույնիսկ ԱՄՆ-ի այսօրվա իրավագետները դժգոհում են, որ չնայած ԱՄՆ-ի Գերագույն դատարանը քննել է բազմաթիվ գործեր, ստեղծել է մեծաքանակ նախադեպեր, սակայն այդպես էլ չի կարողացել իր պատմության ավելի քան երկու հարյուրամյակների ընթացքում ստեղծել իշխանությունների տարանջատման վերաբերյալ հատուկ օրենսդրություն:

ՉՈՐՐՈՐԴ: Հենվելով ստորև բերվող Լոկկի հետևություններից մեկի վրա, շատ գիտնականներ այն կարծիքն են արտահայտում, որ, այնուամենայնիվ, օրենսդիր իշխանությունը պետք է գերակայի գործադիր և դատական իշխանությունների նկատմամբ: Լոկկը գրում է. «Չէ որ նա, ով կարող է ստեղծել օրենքներ, ուրիշների համար անհրաժեշտորեն պետք է բարձր լինի նրանցից: Իսկ քանի որ օրենսդիր իշխանությունը հասարակության մեջ համարվում է օրենսդիր միայն այն պատճառով, որ նա իրավասու է օրենքներ ստեղծել բոլորի համար, կարգադրել նրանց համար վարքի կանոններ և նախատեսել պատիժ դրանց խախտման համար, ապա օրենսդիր իշխանությունը պետք է անհրաժեշտորեն լինի բարձրագույն, նրա բոլոր իշխանությունները... ենթակա են նրան»:

ՀԻՆԳԵՐՈՐԴ: Իշխանությունների տարանջատման հիմնական և վերջնական նպատակը կայանում է իշխանության ուզուրպացման (բռնահիրման, յուրացման) կանխման մեջ՝ մի անձի, մի խումբ անձանց կամ մի

պետական մարմնի կողմից: Այս կանխադրույթը հիմնավորվում է նրանով, որ «եթե մի մարդը կարող է իրավունք ստեղծել, օգտագործել այն և դատել դրա խախտման համար, ապա նման դեպքերում ազատությունը չի կարող երկար գոյատևել»: Իհարկե, ասում է ամերիկյան գիտնական Ֆիտցջերալդը, «մենք բոլորս դեռ կարող ենք քվեարկել չորս տարին մեկ անգամ. Բայց այդ ընտրություններն անխուսափելիորեն կվերածվեն ձևական հայցումի, երբ միակ պատասխանը քվեաթերթիկում կլինի «այո»:

ՀԱՐՑ 43. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ինչպե՞ս են կիրառվում իշխանությունների տարանջատման սկզբունքները տարբեր պետություններում: Ի՞նչ գործոններ են ազդում դրա վրա: Եթե փորձենք հարցին տալ ամփոփ և հակիրճ պատասխան, ապա այն կլինի հետևյալը. ազգային առանձնահատկությունները, պետական մեխանիզմի կատարելության աստիճանը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները և այլն: Իհարկե, նման օբյեկտիվ գործոնների հետ միասին կարևոր են նաև սուբյեկտիվ գործոնները, մասնավորապես, ընդունվո՞ւմ, թե՞ մերժվում է իշխանությունների տարանջատման սկզբունքը տվյալ պետության և հասարակության կողմից: Եթե ընդունվում է, ապա՝ որքանով:

Այսպիսով, այդ հարցերին հանգամանորեն պատասխանելու համար պետք է հաշվի առնվեն և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ գործոնների յոթահատկությունները, որոնք առկա են այս կամ այն կոնկրետ պետությունում: Երբեմն կարող է նաև նշանակություն ունենալ տվյալ երկրի միջազգային շրջապատը:

Օրինակ, կարելի է պնդել, որ եթե չլիներ զարգացած գլխավոր կապիտալիստական պետությունների քաղաքական ընտրախավի մեծ ազդեցությունը նախկին ԽՍՀՄ հանրապետությունների «նոր դեմոկրատիա» կերտողների և իրենց նախկին գաղափարներին դավաճանած քաղաքական ռենեգատների վրա, դժվար թե իշխանությունների տարանջատման սկզբունքը գրավիչ լիներ այդ հանրապետությունների «արբանյակներ» հանդիսացող իշխանավորների համար: Չպետք է մոռանալ, որ իշխանությունների տարանջատման տեսությունը ոչ այնքան ֆորմալ-իրավագիտական, որքան քաղաքական և գաղափարաբանական ուսմունք է:

Իշխանությունների տարանջատման իրականացման աստիճանն այս կամ այն պետությունում զգալիորեն կախված է բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից, որոնցից մատնանշվում են գլխավորները:

ԱՌԱՋԻՆ: Պետության կառավարման ձևից: Պրեզիդենտական հանրապետությունում, ինչպիսին է, օրինակ՝ ԱՄՆ-ը, ավելի են ձգտում իշխանությունների տարանջատմանը, քան սահմանադրական միապետություններում կամ ունիտար (միատարր) հանրապետություններում:

ԵՐԿՐՈՐԴ: Պետության կառուցվածքի ձևից: Դաշնային պետությունները գրեթե անվերապահորեն ընդունում և իրականացնում են իշխանությունների տարանջատումը, ինչպես «հորիզոնական» (դաշնային բարձրագույն մարմինների միջև), այնպես էլ «ուղղահայաց» (դաշնային կենտրոնական իշխանություններիի և նրա սուբյեկտների միջև): Ունիտար պետությունները ձևականորեն ընդունում են իշխանությունների տարանջատման անհրաժեշտությունը, սակայն իրականում խուսափում են դրանից: Դա առաջին հերթին վերաբերում է իսլամական պետություններին:

ԵՐՐՈՐԴ: Պետության քաղաքական ռեժիմից: Ժամանակակից ժողովրդավարական համարվող քաղաքական ռեժիմները, որպես կանոն, հավատարիմ են իշխանությունների տարանջատման սկզբունքին: Ավտորիտար (հակաժողովրդական) տարբեր քաղաքական ռեժիմները, եթե նույնիսկ ձևականորեն ընդունում են այդ սկզբունքը, բայց իրականում միայն թաժանում են իշխանագոր լիազորությունները ռեժիմին նվիրված պաշտոնատար անձանց միջև:

ՉՈՐՐՈՐԴ: Այս կամ այն երկրում գործող պատմական, ավանդույթային, ազգային, քաղաքական գործոնները և երկրում հաստատված քաղաքական պրակտիկան: Եթե երկրում բացակայում են դեմոկրատական ինստիտուտները և նշանակություն չի տրվում մարդու իրավունքներին և

ազատություններին, իսկ Ասիայում և Աֆրիկայում կան բազմաթիվ այդպիսի պետություններ, ապա խոսք անգամ չի կարող լինել իշխանությունների տարանջատման սկզբունքի իրականացման մասին:

Գործում են նաև բազմաթիվ այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, որոնք ազդում են պետական համակարգի և իշխանությունների տարանջատման վրա: Դրանցից յուրաքանչյուրի առավելության կամ թերությունների վերաբերյալ ընթանում են գիտական վիճաբանություններ, որոնց լուծումը թույլ կտա ոչ միայն ամբողջական պատկերացում ստեղծել տվյալ տեսության մասին, այլ նաև ճիշտ կողմնորոշվել ազգային և առանձնապես կրոնական առանձնահատկություններով պայմանավորված իշխանությունների տարանջատման պրակտիկայում:

ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏ

ՀԱՐՑ 44. ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական ապարատն իրենից ներկայացնում է պետական մարմինների համակարգ, որի միջոցով իրականացվում է պետական իշխանությունը, կատարվում են պետության հիմնական ֆունկցիաները:

Պետական ապարատը առանձին մարմինների մեխանիկական միավորում չէ, այլ նրանց հստակորեն կազմակերպված և խիստ կանոնակարգված համակարգ է: Յուրաքանչյուր պետական մարմին իրենից ներկայացնում է պետական ապարատի հարաբերաբար ինքնուրույն և առանձնացված օղակ, որն ստեղծվում է խիստ որոշակի պետական գործունեություն իրականացնելու համար և օժտված է համապատասխան իրավասություններով: Իր լիազորությունների կատարման ընթացքում պետական ապարատի մարմինը հենվում է պետության նյութական և հարկադրական միջոցների վրա:

Պետական մարմինները տարբերվում են ոչ պետական մարմիններից և կազմակերպություններից մի շարք հատկանիշներով: Պետական մարմինն ստեղծվում է պետության կամքով և գործում է պետության անունից, կատարում է որոշակի և խիստ մասնագիտացված գործունեություն, որի ծավալն ու տարածքային մասշտաբը սահմանվում է օրենսդրությամբ: Նրա տեղն ու դերը պետական ապարատում սահմանվում է հատուկ դրույթով, որով որոշվում է նրա գործունեության կարգը:

Պետական մարմինն իր իրավասությունների շրջանակում օժտված է հզոր լիազորություններով, որոնք արտահայտվում են նրա կողմից իրավաբանորեն պարտադիր նորմատիվ-իրավական և անհատական-

իրավական ակտեր ընդունելու և դրանց կատարման նկատմամբ վերա
հսկողություն իրականացնելու մեջ: Կատարողական կարգապահության
պահպանման նպատակով ծառայողների նկատմամբ կիրառվում են տար
բեր մեթոդներ՝ դաստիարակչական, բացատրական, համոզման, խրախուս
ման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պետական հարկադրանք:

Լինելով մի պետական օրգանիզմի բաղկացուցիչ մասեր, պետական
մարմինները տարբերվում են միմյանցից իրենց կազմավորման կարգով,
պետական գործունեության տեսակներով, իրավասությունների ծավալով
և բնույթով, իրենց ֆունկցիաների իրագործման մեթոդներով ու ձևերով:

ՀԱՐՑ 45. ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Պետական ապարատի կազմությունը՝ դա նրա ներքին համակարգն
է, առանձին օղակների տեղն ու դերը այդ համակարգում: Կազմությունը
միշտ ցույց է տալիս, թե ինչից է բաղկացած պետական ապարատը,
ինչպիսի ենթակարգություն է գործում նրա մեջ, ինչպիսին է նրա ներքին
կանոնակարգը, կազմակերպման և գործունեության սկզբունքները:

Ժամանակակից երկրների պետական ապարատների գլխավոր
մասերն են՝

ա) պետական իշխանության մարմինների համակարգը,

բ) պետական կառավարման մարմինների համակարգը,

գ) դատական մարմինների համակարգը,

դ) դատախազական մարմինները:

Առաջին երեք համակարգերից յուրաքանչյուրը համապատասխան
իշխանության կրողն ու իրականացնողն է՝ օրենսդրական, գործադիր և
դատական:

Գիտական գրականությունում չկա միաձայնություն իշխանության
նշված մարմինների հարաբերակցության վերաբերյալ: Պե՞տք է արդյոք
նրանք լինեն հավասար, թե՞ պետք է գոյություն ունենա որոշակի համա-
ստորադասություն նրանց միջև: Այդ կապակցությամբ կան մի շարք
տեսակետներ:

ԱՌԱՋԻՆ: Ոմանք պնդում են, որ իշխանությունների տարանջատման

սկզբունքով կազմավորված պետական ապարատի գլխավոր մասերը
(օրենսդիր, գործադիր և դատական մարմինները) պետք է գտնվեն
միանգամայն հավասար կարգավիճակում և դրանով իսկ հավասարակշռեն
միմյանց և ամբողջ պետական իշխանությունը:

ԵՐԿՐՈՐԴ: Ավտորիտար (ինքնակալական) կամ տոտալիտար
քաղաքական ռեժիմի պետություններում ճիգ չեն խնայում ապացուցելու
համար, որ գործադիր իշխանությունը և դրա հետ միասին նրա կրողները
պետք է լինեն առջևում: Սակայն պատմությունից հայտնի է, որ նման
մոտեցումը տանում է դիկտատուրայի հաստատման, իսկ դրա վառ
օրինակներն են նախկին ֆաշիստական Գերմանիայի, Իտալիայի և մի շարք
այլ երկրների քաղաքական պրակտիկան:

ԵՐՐՈՐԴ: Գիտնականների և քաղաքական գործիչների մեջ մեծամաս-
նություն են կազմում նրանք, ովքեր առաջին տեղում տեսնում են պետական
իշխանության մարմիններին, որոնց իշխանության աղբյուրը ժողովուրդն
է: Բոլոր ժողովրդավարական պետություններում այս տեսակետն արժա-
նացել է համընդհանուր հավանության: Այդ տեսակետը դեռևս 17-րդ
դարում զարգացնում էր Ջոն Լոկկը: Իր հայտնի «Երկու տրակտատ կառա-
վարման մասին» աշխատությունում նա գրում է. «... Սահմանադրական
պետությունում... կարող է լինել միայն մեկ բարձրագույն իշխանություն,
դա հենց օրենսդրականն է, որին բոլոր մյուսները ենթարկվում են և պետք
է ենթարկվեն, չէ՞ որ օրենսդրական իշխանությունն իրենից ներկայացնում
է վստահության իշխանություն, որը պետք է գործի հանուն որոշակի նպա-
տակի, ուստի նախկինի նման բարձրագույն իշխանությունը մնում է
ժողովրդին, որը կարող է վերացնել կամ փոխել օրենսդրական մարմինը...»:

Ի՞նչ է իրենից ներկայացնում պետական ապարատի գլխավոր համա-
կարգը և ***ի՞նչ*** ֆունկցիաներ են նրանք կատարում:

1. Պետական իշխանության մարմինների հիմնական նշանակությունը
օրենսդրական գործունեությունն է: Նրանք բաժանվում են կենտրոնական
(համապետական) և տեղական մարմինների: Իշխանության բարձրագույն
օրենսդրական մարմինը պառլամենտն է, որը տարբեր երկրներում կրում է
տարբեր անվանումներ՝ ազգային ժողով, խորհրդարան, դումա, կոնգրես,
դիվան և այլն: Պառլամենտի գլխավոր խնդիրը օրենքներ ընդունելն է:

2. Պետական կառավարման մարմինների համակարգն իրականացնում է կատարողական-կարգադրողական գործունեություն: Կատարողական գործունեությունը կայանում է պետական իշխանության բարձրագույն մարմինների նորմատիվ ակտերի պահանջների կատարման մեջ: Կարգադրական գործունեությունը կայանում է նրանում, որ սեփական նորմատիվ ակտեր արձակելու միջոցով կառավարման բարձրագույն մարմինն ապահովում է պետական իշխանության բարձրագույն մարմնի նորմատիվ-իրավական ակտերի պահանջների իրագործումը նրան ենթակա ձեռնարկությունների, հիմնարկների և այլ կազմակերպությունների կողմից:

Կառավարման մարմինները բաժանվում են կենտրոնական (համապետական) և տեղական մարմինների: Կենտրոնական կառավարման մարմինների իրավասությունները տարածվում են պետության ամբողջ տարածքի վրա: Կառավարման համակարգի բարձրագույն մարմինը կառավարությունն է (Նախարարների խորհուրդ, Նախարարների կաբինետ և այլն): Կառավարության ենթակայության տակ են գործում գերատեսչությունները՝ նախարարությունները, պետական կոմիտեները, վարչությունները և այլ պետական կառավարման մարմիններ:

3. Տեղական կառավարման մարմինների գործունեության շրջանակը սահմանափակվում է տվյալ վարչա-տարածքային կամ ազգա-տարածքային միավորի տարածքով՝ շրջանի, մարզի, քաղաքի, երկրամասի, ինքնավար հանրապետության, ազգային օկրուգի և մարզի, նահանգի, կանտոնի և այլն:

4. Պետական ապարատի դատական մարմինների միակ սոցիալական ֆունկցիան արդարադատության իրականացումն է: Դատական մարմինները արդարադատությունն իրականացնում են անկախ իշխանությունն և կառավարման բարձրագույն մարմիններից և ենթարկվում են միայն օրենքին: Դատական համակարգի կառուցվածքը և գործունեության մեթոդներն ու ձևերը տարբեր են տարբեր պետություններում, սակայն բոլոր երկրների դատարանները կատարում են նույն խնդիրը՝ իրականացնում են արդարադատությունը:

5. Պետական ապարատի կազմում հատուկ տեղ է զբաղեցնում դատախազությունը, որը չի մտնում իշխանության որևէ թևի կազմի մեջ, այլ իրենից

ներկայացնում է առանձին պետական համակարգ, որը հսկողություն է իրականացնում օրենքների ճիշտ ու միատեսակ կատարման նկատմամբ պետական մարմինների, պաշտոնատար անձանց, ձեռնարկությունների, հիմնարկությունների և քաղաքացիների կողմից: Դատախազությունը վերահսկում է նաև հետաքննության, նախաքննության մարմինների գործունեությունը, քրեական գործերով հանդես է գալիս դատարանում՝ պետական մեղադրողի դերում:

Տարբեր երկրների դատախազական մարմինների գործունեության իրավական հիմքը կազմում են սահմանադրություններում և հատուկ ակտերում ամրագրված դատախազության գործունեության կազմակերպման կարգը:

ՀԱՐՑ 46. ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Պետական ապարատի կազմավորումը և գործունեությունը հիմնվում են որոշակի սկզբունքների վրա: Այդ սկզբունքները մշտական բնույթ չեն կրում: Պետություններում ժամանակի ընթացքում տեղի ունեցող էվոլյուցիոն բարենորոգումների կամ հեղափոխական վերափոխումների ընթացքում հաճախ կորցնում են իրենց իմաստը և դուրս են գալիս շրջանառությունից:

Օրինակ, նախկին սովետական պետության ապարատի գործունեության հիմքում ընկած էին ՍՄԿԿ-ի ղեկավարող դերի, պետական կառավարմանը լայն մասսաների մասնակցության, ինտերնացիոնալիզմի, ազգերի և ազգությունների իրավահավասարության ու եղբայրության, տնտեսության զարգացման կենտրոնական (պետական) պլանավորման, ժողովրդական վերահսկողության, դեմոկրատական ցենտրալիզմի և այլ սկզբունքներ, որոնք բխում էին սոցիալիստական պետության էությունից: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, նրա փլատակների վրա առաջացած անկախ պետություններում տեղի ունեցան արմատական փոփոխություններ հասարակական կյանքի տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներում, որոնք էական փոփոխություններ մտցրին պետական ապարատի կառուցվածքի

և գործունեության բնույթի մեջ: Պետական ապարատի գործունեությունը այժմ կազմակերպվում է նոր սկզբունքներով: Դրանց թվին են պատկանում

1. ***Օրինականության*** և սահմանադրականության սկզբունքը: Դա նշանակում է, որ պետական ապարատի մարմինները, նրանց պաշտոնատար անձինք և ծառայողները պարտավոր են գործել սահմանադրության ու այլ օրենքներին համապատասխան և նորմատիվ ակտերով սահմանված իրենց իրավասությունների սահմաններում: Օրինականության սկզբունքը պարտավորեցնում է պետական մարմիններին ապահովել գործող նորմատիվ ակտերի անշեղորեն կատարումը ենթակա ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների կողմից, պայքարել կոռուպցիայի, մարդու և նրանց կազմակերպությունների իրավունքների և ազատությունների ոտնահարման դեմ:

2. Իշխանությունների ***տարանջատման*** սկզբունքը: Պետական ապարատի մարմինների, յուրաքանչյուր մարմնի առանձին օղակների և պաշտոնատար անձանց միջև իրավասությունները պետք է բաշխվեն համապատասխան նորմատիվ ակտերով և այնպես, որպեսզի բացառվեն օրինազանցություններն ու կամայականությունները, ստորադաս ծառայողի նկատմամբ վերադասի մանր հոգաբարձությունը և առանց որևէ անհրաժեշտության ստորադասի ֆունկցիաների միջամտելը, ինչը չի բացառում մշտական վարչական վերահսկողությունը պետական ապարատի մարմինների և նրանց բաղկացուցիչ մասերի նկատմամբ:

3. Պետական ապարատի մարմինների ծառայողների և պաշտոնատար անձանց բարձր պրոֆեսիոնալիզմը և ***բանիմացությունը:*** Դա նշանակում է որակյալ աշխատողների ընտրություն և օգտագործում, որոնց համար կառավարչական գործունեությունը հիմնական մասնագիտություն է: Պետական ապարատի ծառայողների ընտրությունը կատարվում է նրանց բարձր մասնագիտական և բարոյական հատկանիշների հիման վրա: Համենայնդեպս պետք է որ այդպես կատարվի:

Պետական ծառայությունը դիտվում է գործունեության այնպիսի ոլորտ, որում անթույլատրելի են և պետք է բացառվեն անօրինական ծանապարհներով անձնական կամ խմբակային ֆինանսական, նյութական և այլ անձնական շահերի բավարարումը ծառայական և պաշտոնական դիրքի

չարաշահման միջոցով: Պետական ծառայողը չպետք է զբաղվի գործարարությամբ, ֆինանսական գործարքներով, ընդունի նվիրաբերություններ և կաշառք, դրանց դիմաց կատարի պաշտոնական գործողություններ հօգուտ կաշառք տվողի, ինչը սասանում է պետական ապարատի գործունեության հիմքերը և անարդյունավետ դարձնում այդ գործունեությունը:

Իհարկե, պարզամտություն կլիներ իդեալականացնել այդ սկզբունքների իրացման պրակտիկան կոնկրետ պետություններում, մասնավորապես Հայաստանում, սակայն դրանց սահմանումը և իրականացման ուղղությամբ կատարվող քայլերը (օրինակ, ՀՀ կառավարությանն առընթեր գործում է պետական մարմին, որն զբաղվում է կոնկուրսային կարգով պետական ծառայողների ընտրությամբ) ունեն ոչ միայն դրական իրավաբանական, այլ նաև շատ կարևոր բարոյական նշանակություն: Դրանց իրականացման դեպքում լուրջ խոչընդոտներ կառաջանան ամեն տեսակի օրինազանցությունների և պաշտոնական դիրքը չարաշահողների համար:

ՀԱՐՑ 47. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Պետության և տնտեսության հարաբերակցության հարցը մեկնաբանվում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական հարթություններում և միանշանակ լուծում այդ հարցին չի տրվում: Որոշ գիտական դպրոցներ առաջնությունը տալիս են տնտեսությանը, երկրորդները առաջնությունը տալիս են պետության դերին հասարակության զարգացման գործում, երրորդները պետության և տնտեսության դերը հավասարեցնում են: Վերջին դեպքում համարվում է, որ պետությունն ազդում է տնտեսության վրա այնքանով, որքանով տնտեսությունը՝ պետության վրա:

Առաջին տեսակետը, երբ առաջնությունը տրվում է տնտեսությանը, հիմնավորապես և մանրամասնորեն ուսումնասիրվել է մարքսիզմի դասականների կողմից, մասնավորապես Կ. Մարքսի «Կապիտալում»: Այդ տեսակետի էությունը կայանում է հետևյալում.

ԱՌԱՋԻՆ. Տնտեսությունը հասարակության բազիսն է (հիմքը), որից կախված է հասարակության վերնաշենքի զարգացման աստիճանը՝

պետության, գիտության, կոլտուրայի, բնակչության կենսամակարդակի, պետության անկախության և այլն:

ԵՐԿՐՈՐԴ: Հոգեկան կյանքով ապրելու համար մարդը պետք է ուտի, խմի, հագուստ, անձնական իրեր և կացարան ունենա, այսինքն՝ բավարարված լինի առաջին հերթին իր բնական պահանջմունքները բավարարող նյութական միջոցներով: Քանի որ դա այդպես է, ապա պարզ է, որ տնտեսությունն ու տնտեսական հարաբերություններն առաջնահերթ տեղ են գրավում մարդկանց կյանքում և հսկայական նշանակություն ունեն ամբողջ մարդկության համար:

ԵՐՐՈՐԴ: Տնտեսության և պետության հարաբերակցությունը երկկողմանի բնույթ է կրում: Պետությունը կարող է դրական ներազդել տնտեսության զարգացման վրա, բայց կարող է նաև իր սխալ քաղաքականությամբ խոչընդոտել տնտեսության զարգացմանը և նույնիսկ քայքայել ևլ փոշիացնել երկրի տնտեսությունը: Այստեղից պարզ է, որ բոլոր դեպքերում այդ հարաբերակցությունում առաջնային պետք է համարվեն հասարակության և պետության զարգացման ուղիները: Ասենք նաև, որ այդ հետևությունն ամբողջովին համապատասխանում է դիալեկտիկական մատերիալիզմի նյութի առաջնային լինելու վերաբերյալ գաղափարին:

Գործնական հարթությունում պետությունը կարող է ազդել տնտեսության վրա երեք հիմնական ուղղություններով:

ԱՌԱՋԻՆ: Պետությունը կարող է ներազդել տնտեսության վրա այն ուղղությամբ, որ ուղղությամբ նա բնականոն զարգանում է: Այդ դեպքում տնտեսությունը զարգանում է բարձր տեմպերով, և հասարակությունն զգում է դա, քանի որ տնտեսական աճը պետք է բարձրացնի մարդկանց կենսամակարդակը:

ԵՐԿՐՈՐԴ: Եթե պետությունը գործում է տնտեսության համար առավել նպաստավոր ուղղությանը հակառակ, հաշվի չի առնում հասարակության և տնտեսության մեջ գործող օրինաչափությունները, ապա վաղ թե ուշ նման պետությունը կանգնում է տնտեսական սնանկության փաստի առջև և որպես դրա օրինաչափ արդյունք՝ սնանկանալու է քաղաքականապես, որը կարող է ուղեկցվել պետության փլուզումով, ինչպես դա տեղի ունեցավ ԽՍՀՄ-ի դեպքում:

ԵՐՐՈՐԴ: Եթե պետությունը, ղեկավարվելով այս կամ այն նկատառումներով, ասենք միլիտարիստական կամ ագրեսիվ նպատակներով, առավելությունը տալիս է տնտեսության որոշակի ճյուղերի և անուշադրության է մատնում մյուսները, ապա արդյունքը կարող է համապատասխանել նախորդ տարբերակներից մեկին: Դա կախված կլինի պետության ճիշտ կամ սխալ հաշվարկներից:

Պետության և տնտեսության հարաբերակցությունը կախված է շուկայական հարաբերությունների զարգացման աստիճանից: Այդ չափանիշի առումով ժամանակակից պետությունները կարելի է բաժանել երեք խմբի.

- պետություններ, որոնցում գործում է շուկայական հարաբերությունների զարգացման համակարգ,
- պետություններ, որոնցում նոր են ծագել շուկայական հարաբերություններ և զարգանում են: Այստեղ պետությունն իր գործունեությամբ նպաստում է այդ հարաբերությունների զարգացմանը,
- պետություններ, որոնցում բացակայում են շուկայական հարաբերություններ: Սովորաբար նման պետություններում կիրառվում է տնտեսության զարգացման պետական պլանավորում, իսկ պետական ապարատը ակտիվորեն մասնակցում է տնտեսական գործընթացներին: Օրինակ կարող է ծառայել նախկին ԽՍՀՄ-ը: Այլ ուղիով է զարգանում Չինաստանը, ուր պետական պլանավորումը համատեղվում է շուկայական հարաբերությունների հետ այնքանով, որքանով դա շահավետ է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությանը:

ՀԱՐՑ 48. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Պետության և մարդու միջև իրավաբանական կապն արտահայտվում է քաղաքացիության (հանրապետություններում) կամ հպատակության (միապետություններում) ինստիտուտներում: Այդ երկու ինստիտուտները միմյանցից ոչնչով չեն տարբերվում, մարմնավորում են պետության և նրա քաղաքացիների միջև քաղաքական-իրավական կապը: Այդ կապն արտահայտվում է անձի իրավաբանական պատկանելությունում կոնկրետ

պետությանը, անձի կողմից քաղաքացու կարգավիճակ ձեռք բերման մեջ. վկայում է պետության և նրա քաղաքացու միջև փոխադարձ իրավունքների և պարտականությունների ծագման մասին:

Պետության և անձի միջև փոխհարաբերությունների իրավաբանական կողմը բացահայտվում է անձի իրավական կարգավիճակում, որի տակ հասկանում են օրենսդրությամբ նախատեսված մարդու և քաղաքացու իրավունքները, ազատությունները և պարտականություններն ամբողջությամբ վերցրած:

Անձի իրավական կարգավիճակն ունի ընդհանուր (վերացական) բնույթ և տարածվում է տվյալ պետության բոլոր քաղաքացիների վրա: Որոշակի անձինք կարող են ունենալ հատուկ իրավական կարգավիճակ, որը կարող է լինել ժամանակավոր և վերաբերում է քաղաքացիների առանձին խմբերի կամ առանձին անհատների: Օրինակ, այդպիսի կարգավիճակ ունեն ներկայացուցչական մարմինների պատգամավորները և այլ պաշտոնատար անձինք (պրեզիդենտը, համայնքի ղեկավարը), զինծառայողները, դիվանագետները և ուրիշներ:

Անձի իրավունքները օրենսդրությամբ նախատեսված և երաշխավորված հնարավորություններն են՝ օգտվել բարիքներից, սեփականության, կրթության, ընտրական, կենսաթոշակ ստանալու և այլ իրավունքներից: Անձի իրավունքները ոչ միայն ընդհանուր վերացական իրավունքներ են, այլ նաև կոնկրետ (սուբյեկտիվ) իրավունքներ, որոնցով օժտված է իրավունքի տեր անձը՝ իրավունքի սուբյեկտը: Անձի սուբյեկտիվ իրավունքների իրականացման համար անհրաժեշտ է այնպես անել, որպեսզի աշխատի այդ իրավունքների իրացման մեխանիզմը, հակառակ դեպքում մարդու շատ իրավունքներ կարող են մնալ միայն թղթի վրա:

Անձի ազատությունները նույնպես իրավունքներ են, որոնք բխում են նրա քաղաքական կարգավիճակից: Ժամանակակից ժողովրդավարական հանրապետություններում, ինչպես նաև սահմանադրական միապետություններում սահմանադրությամբ հռչակվում են մտքի, խղճի, խոսքի, գաղափարներ ունենալու և դրանք տարածելու, քաղաքական միջոցառումների մասնակցելու, քաղաքական կազմակերպությունների անդամ լինելու և այլ ազատություններ, որոնց իրականացումը անմիջականորեն կախված է

պետության քաղաքական ռեժիմից:

Անձի պարտականությունները պետության կողմից սահմանված պաշտոնական պահանջներ են, որոնք պարտադիր են այն քաղաքացիների համար, որոնց համար դրանք նախատեսված են օրենքով: Անձը չի կարող ունենալ իրավունքներ և չկրել պարտականություններ, քանի որ յուրաքանչյուր քաղաքացու կողմից իր պարտականությունների պատշաճ կատարումը անհրաժեշտ պայման է մյուս քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պահպանության համար:

Ինչպես իրավունքներն ու ազատությունները, այնպես էլ քաղաքացու պարտականությունները իրավաբանորեն ձևակերպվում են սահմանադրությունում և այլ նորմատիվ ակտերում: Օրինակ, սահմանադրական պարտականություններ են հարկեր և օրենքով նախատեսված այլ վճարումներ կատարելը, երկրի պաշտպանությանը մասնակցելը, սահմանադրության և այլ օրենքների պահպանումը և այլն:

Իրավաբանական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում անձը կարող է ենթարկվել քրեական, վարչական, քաղաքացիական և կարգապահական պատասխանատվության:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐՑ 49. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պետականորեն կազմակերպված հասարակության պատմությունը բաժանվում է երկու ժամանակահատվածների՝ կաստա-դասային հասարակության դարաշրջանի և քաղաքացիական հասարակության դարաշրջանի:

Կաստա-դասային հասարակությունը բնորոշ էր ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգերին: Այն հիմնված էր հասարակության անդամների իրավական անհավասարության և նույնիսկ լիակատար իրավազրկության վրա (ստրուկները), ուներ հիերարխիական կառուցվածք, բաղկացած էր ազնվականության ստորակարգությունից և կիսաիրավազուրկ և իրավազուրկ կաստաներից ու դասերից: Կաստա-դասային հասարակությունում պետությունն ու հասարակությունը համաձուլված էին: Պետական ապարատը պատկանում էր ազնվականությանը՝ թագավորի գլխավորությամբ, որի կողմից հասարակությունը փաստորեն կլանված էր կախվածությամբ: Մարդիկ գտնվում էին զանազան պետա-իրավական արգելքների և սահմանափակումների ներքո, նրանց անձնական կյանքը և աշխատանքային գործունեությունը վերահսկվում էր ստրկատերերի, ֆեոդալների, եկեղեցու և պետության կողմից:

Կաստային էր հնադարյան և միջնադարյան Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի և այլ արևելյան երկրների հասարակությունը: Դասային կառուցվածքը բնորոշ էր եվրոպական ստրկատիրական և ֆեոդալական հասարակություններին:

Քաղաքացիական հասարակության գաղափարական, տնտեսական և քաղաքական նախադրյալները հասունանում են Արևմտյան Եվրոպայում

ուշ միջնադարում, վերածնության, ռեֆորմացիայի և բուրժուական հեղափոխությունների դարաշրջանում: Քաղաքացիական հասարակության ծնունդը պատմականորեն կապում են այսպես կոչված «Պանծալի հեղափոխության» հետ, որը տեղի է ունեցել Անգլիայում 1640-1649 թվականներին: Պատմաբանությունն այդ հեղափոխական տարեթվի հետ է կապում նաև ***նոր ժամանակի*** սկիզբը: Քաղաքացիական հասարակությունն ընդհանրապես ծագում է այնտեղ և այն ժամանակ, որտեղ և երբ պետությունն անջատվում է հասարակությունից, նրա սոցիալական, քաղաքական և հասարակական կառույցներից և եկեղեցուց ու դրանցից վեր է կանգնում:

Քաղաքացիական հասարակության գաղափարական հիմնադրույթների մշակման գործում մեծ դեր է խաղացել գերմանացի հանճարեղ փիլիսոփա ***Հեգելը:*** Իր «Իրավունքի փիլիսոփայություն» աշխատությունում նա գրում է, որ քաղաքացիական հասարակությունը՝ պետական իշխանությունից ու ապարատից անջատված հասարակություն է, որի իրավական հիմքերն են կազմում մարդկանց իրավահավասարությունը և քաղաքական ազատությունը, անհատական մասնավոր սեփականությունը, պայմանագիրն ու դրա անխախտելիությունը, կանոնակարգված օրենսդրությունը և հնդինակավոր դատարանը:

Քաղաքացիական հասարակության էությունը, ժամանակակից ըմբռնողականությամբ, արտացոլվում է նրա հետևյալ հատկանիշներում.

ԱՌԱՋԻՆ: Քաղաքացիական հասարակությունը կարող է ձևավորվել միայն մարդկանց համընդհանուր իրավահավասարության հիման վրա, որով պայմանավորված է նաև ազատ քաղաքացու իրավական կարգավիճակը հասարակության և պետության մեջ:

ԵՐԿՐՈՐԴ: Քաղաքացիական հասարակությունում մասնավոր և հանրային ընդհանուր շահերը տարանջատված են իրավունքի բաժանումով ***մասնավոր և հանրային*** ինստիտուտների: Քաղաքացիական հասարակության կենսագործունեության հիմքն ու երաշխիքն է հանդիսանում մասնավոր իրավունքը, որի միջոցով իրականացվում է քաղաքացիների իրավահավասարության սկզբունքը, նրանց իրավունքներն ու ազատությունները, մասնավոր սեփականության իրավունքը և այլն:

ԵՐՐՈՐԴ: Քաղաքացիական հասարակության հիմնական օրենքը

սահմանադրությունն է, որը կարելի է համարել պետության և քաղաքացիական հասարակության միջև դաշինք, համաձայն որի պետությունը պատկանում հրապարակային իշխանությունը և ընդհանուր շահերի ոլորտը քաղաքացիական հասարակությանը՝ անհատական իրավունքների և ազատությունների ու մասնավոր շահերի ոլորտը:

ՉՈՐՐՈՐԴ: Քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման երաշխիքը օրինականությունն է, որի պահանջներն առաջին հերթին վերաբերում են պետական մարմիններին և պաշտոնատար անձանց: Եթե այդ մարմինները անվերապահորեն պահպանում են օրինականությունը և թույլ չեն տալիս կամայականություն, ապա քաղաքացիներն ու նրանց կազմակերպությունները հայտնվում են պետության, նրա մարմինների և պաշտոնատար անձանց հետ մեկ իրավական հարթությունում, կարող են անկախ դատական համակարգի միջոցով պաշտպանել իրենց խախտված իրավունքները և մասնավոր շահերը ցանկացած ոտնձգումից:

Քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացը չափազանց բարդ երևույթ է, այն ուղեկցվել է սոցիալ-քաղաքական ցնցումներով, դասակարգային պայքարով և հեղափոխություններով, որոնց արդյունքում արմատական փոփոխություններ են տեղի ունեցել հասարակական գիտակցությունում, սակայն դժվար թե որևէ մեկը պնդի, որ մենք ապրում ենք քաղաքացիական հասարակությունում: Քաղաքացիական հասարակության զարգացումն ընթանում է երեք դարից ավելի, և նրա ձևավորումը վերջնականապես ոչ մի երկրում չի ավարտվել:

ՀԱՐՑ 50. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԱՅԴ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հասարակության քաղաքական համակարգը երկրի քաղաքական կյանքին մասնակցող պետական ապարատի, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների այլ միավորումների ամբողջությունն է: Կախված երկրի քաղաքական կյանքում

իրենց մասնակցության աստիճանից և ակտիվությունից, այդ կազմակերպությունները ընդունված է բաժանել երկու հիմնական խմբերի՝ բուն քաղաքական կազմակերպությունների և ոչ բուն քաղաքական կազմակերպությունների: Առաջին խմբի մեջ են մտնում պետությունը և քաղաքական կուսակցությունները: Երկրորդ խումբը կազմում են հասարակական կազմակերպությունները (արհմիությունները, սոցիալ-տնտեսական, մշակութային, հայրենասիրական և այլն), որոնք քաղաքական նպատակներ չեն հետապնդում, սակայն որոշ չափով ներազդում են քաղաքական գործընթացների վրա:

Հասարակության քաղաքական համակարգում միշտ վճռորոշ դեր է խաղացել պետությունը: Սակայն ճիշտ չէր լինի բացարձակացնել պետության քաղաքական բնույթը և այն համարել «մաքուր» քաղաքական կազմակերպություն, քանի որ պետության գործունեությունն ունի նաև ոչ քաղաքական ուղղվածություն (տնտեսական, ֆինանսական, կազմակերպչական և այլն): Պետության տեղն ու դերը հասարակության քաղաքական համակարգում, այնուամենայնիվ, մնում է շատ բարձր և բնորոշվում է հետևյալով.

ԱՌԱՋԻՆ. Ցանկացած երկրում պետությունը հանդես է գալիս որպես ամենալայնածավալ, խիստ կազմակերպված ու կանոնակարգված քաղաքական կազմակերպություն:

ԵՐԿՐՈՐԴ: Սահմանադրության, օրենսդրության և այլ լծակների միջոցով պետությունը ձգտում է իրեն ներկայացնել որպես ամբողջ ժողովրդի պետություն՝ բոլորի պետություն բոլորի համար: Սակայն շատ հաճախ դա չի համապատասխանում իրականությանը, իսկ սահմանադրություններում հռչակված ժողովրդավարական սկզբունքները մնում են որպես չիրականացված դեկլարացիաներ: Այդ դեկլարացիաները օգտագործվում են որպես քաղաքական վարագույր, որի ետևում թաքնված են իշխող դասակարգերի, իշխանության գլուխ եկած անձանց ու խմբավորումների, այլ ոչ թե ժողովրդի շահերը:

ԵՐՐՈՐԴ: Պետության հատուկ տեղն ու դերը հասարակության քաղաքական համակարգում պայմանավորված է նաև նրանով, որ իր ձեռքի տակ ունի հսկայական նյութական, ֆինանսական և այլ միջոցներ, որոնք

օգտագործվում են նաև քաղաքական նպատակներով:

ՉՈՐՐՈՐԴ: Պետության բացառիկ դերը հասարակության քաղաքական համակարգում կանխորոշված է նրա տրամադրության տակ գտնվող և պետական հարկադրանք իրականացնող ուժային համակարգով և իրավապահ մարմինների ձյուղավորված ցանցով:

ՀԻՆԳԵՐՈՐԴ: Ի տարբերություն բոլոր այլ քաղաքական կազմակերպությունների, պետությունն օժտված է ինքնիշխանությամբ, որը բացառիկ առավելություն է մյուս քաղաքական կազմակերպությունների նկատմամբ:

ՀԱՐՑ 51. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՈՐՄԱՏԻՎ ՀԻՄՔԵՐԸ

Հասարակության քաղաքական համակարգը կառուցված է տնտեսական, սոցիալական, քաղաքական, գաղափարական և նորմատիվ-իրավական հիմքերի վա: Ինչպես բոլոր մյուս հասարակական հարաբերությունները, այնպես էլ քաղաքական հարբերությունները կարգավորվում են սոցիալական նորմերով, որոնց մեջ հատուկ տեղ են գրավում իրավունքի նորմերը:

Հասարակության քաղաքական համակարգի նորմատիվ-իրավական հիմքի կարևորագույն մասն են կազմում սահմանադրություններում ամրագրված քաղաքական բնույթ կրող նորմ-սկզբունքները, նորմ-հռչակումները և այլ նորմերը: Սակայն միայն իրավունքի նորմերով հնարավոր չէ կարգավորել հասարակությունում գործող քաղաքական հարաբերությունները: Հետևաբար, քաղաքական հարաբերությունները կարգավորվում են նաև այլ սոցիալական նորմերով՝ քաղաքական կուսակցությունների և այլ կազմակերպությունների կանոնադրություններով, դրույթներով, համագումարների որոշումներով և ներկուսակցական այլ փաստաթղթերով:

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ 52. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ինչ է իրավական պետությունը: Ե՞րբ է այդ գաղափարը ծագել և ինչպե՞ս է այն զարգացել: Ինչ հատկանիշներ պետք է ունենա: Ո՞րն է իրավական պետության նպատակը: Այս հարցերը միշտ եղել են փիլիսոփաների, պատմաբանների և իրավագետների տեսադաշտում, անկախ նրանից, թե ինչ անվանում էր տրվում այդ պետությանը՝ օրինականության պետություն կամ արդարության պետություն և այլն: Ոմանց մոտ իդեալական պետության գաղափարը կապված էր մասնավոր սեփականության, հարստության, ուրիշների շահագործման հետ: Ոմանք էլ, ընդհակառակը, իդեալականացնում էին պետությունը առանց մասնավոր սեփականության:

Անգլիական միապետության լորդ-կանցլեր, ***«Ուտոպիա»*** վեպի հեղինակ Թոմաս Մորը (1478-1535) գրում է. «Բազմիցս և ուշադիր դիտելով ներկայիս ծաղկող պետությունները, ես կարող եմ երդումնավոր պնդել, որ նրանք իրենցից ներկայացնում են ուրիշ ոչինչ, քան հարուստների դավադրություն, երբ պետության անվան և ցուցանակի տակ մտածում են իրենց անձնական օգուտների մասին»: Մորը խիստ քննադատում էր մասնավոր սեփականության վրա հենվող սոցիալ-քաղաքական կարգը: «Որտեղ կա մասնավոր սեփականությունը,- ասում էր Մորը,- որտեղ ամեն ինչ չափվում է փողով, այնտեղ դժվար թե հնարավոր լինի պետական գործերի հաջող ընթացք»: Մտածողը իր գրքում նկարագրում է այնպիսի հասարակություն, որում մասնավոր սեփականության վերացումը բերում է հավասարության հաստատման: Եթե Մորի նախորդներից շատերը կոմունիզմը պատկերացնում էին որպես սպառման ապրանքների ընդհանրություն, ապա «կոմունիստ» լորդ-կանցլերը խոսում է արտադրության

ընդհանրության մասին: Նրա «Ուտոպիա» պետությունում աշխատանքը համարվում է պարտադիր: Իր իդեալական պետության նկարագրությամբ «Արևի քաղաք» գրքում իտալացի ուտոպիստ-կոմունիստ Թոմմազո Կամպանելլան շարունակում է զարգացնել Մորի գաղափարները և նույնպես գալիս է այն եզրակացության, որ հասարակության բոլոր չարիքների պատճառը մասնավոր սեփականությունն է: Նա հայտարարում է, որ իդեալական հասարակական-քաղաքական կարգը, որը կհամապատասխանի աշխատավորների շահերին, պետք է հիմնված լինի հանրային սեփականության վրա:

Դեռևս անտիկ աշխարհի մտածողները, պետության և իրավունքի հարաբերակցության հարցը քննելիս, այն միտքն էին արտահայտում, որ պետության այն ձևն է արդարացի, որում գերիշխում է օրենքը:

Այսպես, Հնադարյան Հունաստանի մեծ փիլիսոփա-իդեալիստ Պլատոնի «Պետություն», «Օրենքներ» և բազմաթիվ այլ տրամախոսական ստեղծագործություններում անընդհատ այն միտքն է արտահայտվում, որ այնտեղ, որտեղ «օրենքը ուժ չունի և գտնվում է որևէ մեկի իշխանության տակ», անխուսափելի է այդպիսի «պետության մոտակա կործանումը»: Միայն այնտեղ, ասում է Պլատոնը, «որտեղ օրենքն է կառավարիչների տիրակալը, իսկ նրանք՝ նրա ստրուկներն են, ես տեսնում եմ պետության փրկությունը»: Նույնաբնույթ մտքեր էր արտահայտում իր «Պոլիտիկա» աշխատությունում Պլատոնի աշակերտ և մեծագույն մտածող Արիստոտելը: Նա գրում է. «Այնտեղ, որտեղ բացակայում է «օրենքի իշխանությունը», այնտեղ չի կարող լինել պետական կարգի որևէ ձև: Օրենքը պետք է գերիշխի ամեն ինչում»: Իրավական պետության տեսության ակունքում է կանգնած հռոմեական հայտնի հռետոր, պետական գործիչ և մտածող Ցիցերոնը: Այսօր էլ իրենց նշանակությունը չեն կորցրել «Օրենքի մասին», «Պետության մասին», «Պարտականությունների մասին» նրա ստեղծագործություններում բարձրացված հարցերը:

Լինելով բնական իրավունքի և պետության ծագման նահապետական տեսության հետևորդ, Ցիցերոնը համոզում էր, որ մարդու իրավունքներն ու ազատությունները նրան չեն նվիրում և չեն սահմանվում որևէ մեկի կողմից, որևէ մեկի ցանկությամբ կամ կարգադրությամբ, այլ բնածին են, ստացված են բնությունից: Նա ասում էր, որ բնական իրավունքին հակասող օրենքը չի կարող օրենք համարվել և ձևակերպել էր այն դրույթը, որ «Օրենքի գործողության տակ պետք է ընկնեն բոլորը, այլ ոչ միայն ընտրյալ քաղաքացիները»:

Իհարկե, այս բոլորը դեռ իրավական պետության տեսություն չէր: Փիլիսոփայական և քաղաքական միտքը պետք է անցներ բազմադարյա ճանապարհ, մինչև որ իրավական պետության մասին գաղափարները ձևավորում ստանային գիտական ուսմունքում: Իրավական պետության տեսության փիլիսոփայական, քաղաքական և իրավաբանական հիմքերը զարգացրել են Բոդենը, Լոկկը, Մոնտեսքյոն, Հոլբախը և միջնադարի այլ մտածողներ:

Վերոնշված մտածողները համարում էին, որ պոզիտիվ (մարդկային) իրավունքը պետք է իր մեջ կրի բնական իրավունքի հատկանիշները և համապատասխանի դրանց: Պետության դերը տեսնում էին հասարակության ընդհանուր շահերի, մարդու իրավունքների և ազատությունների պահպանության մեջ:

Իրավական պետության տեսության փիլիսոփայական հիմքերը զարգացում են ստացել գերմանացի մեծ փիլիսոփաներ ***Կանտի*** և ***Հեգելի*** աշխատություններում, որոնցում իդեալիստական փիլիսոփայության դիրքերից քննարկվում են քաղաքացիական հասարակության հիմնահարցերը: Ըստ Կանտի, պետությունը հանդես է գալիս որպես բազմաթիվ մարդկանց միավորում, իրավական օրենքներին ենթակա մարդկանց, որում գործում է սկզբունք, համաձայն որի «օրենսդիրը չի կարող ժողովրդի վերաբերյալ որոշել այն, ինչը ժողովուրդը չի կարող որոշել ինքն իր համար»: Եթե պետությունը խուսափում է այս սկզբունքից, իրավունքների և ազատությունների ապահովման երաշխավորողը լինելուց, ապա նա ինքնագահում է կորցնել իր քաղաքացիների հարգանքը և վստահությունը:

Մարքսն իրավական պետությանը մոտենում է դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերից և ապացուցում, որ օրենքներում առաջին հերթին արտացոլվում են արտադրության եղանակի և արտադրական հարաբերությունների պահանջները: Նա գտնում է, որ իրավական պետությունը, որի տակ նկատի ուներ կոմունիստական հասարակարգը, կարող է իրականություն դառնալ, եթե ստեղծվեն դրա տնտեսական հիմքերը, իսկ հասարակությունից վեր կանգնած պետական իշխանությունը վերածվի

հասարակությանը ենթակա կազմակերպության:

Իրավական պետության մասին ժամանակակից Արևմտյան և հայրենական տեսություններում այն տեսակետն է գերակշռում, որ իրավունքը դուրս է պետության հասկացությունից և ոչ թե պետությունը պետք է իր կամքը թելադրի իրավունքին, այլ՝ իրավունքը պետությանը: Սրանով պետությունը դրվում է իրավունքի ենթակայության տակ, որն իրավական պետության կայացման առաջին պայմանն է:

Իրավական պետության գաղափարը առաջին անգամ պետականորեն իրավաբանական մարմնավորում է ստացել ԱՄՆ-ի անկախության հռչակագրում, որի հեղինակն է Թոմաս Ջեֆֆերսոնը (1743-1826): Հասարակական դաշինքի տեսության դիրքերից նա խիստ քննադատության է ենթարկում պետության կառավարման միապետական ձևը և պաշտպանում է ժողովրդաիշխանության գաղափարը: Ջեֆֆերսոնը դեմ էր այն բանին, որ երկիրը կառավարեն հարուստները և մասնավոր սեփականության ծայրահեղություններին: Նա չէր առաջարկում ոչնչացնել կապիտալիստական պետությունը, այլ առաջարկում էր վերացնել այն չարիքները, որոնք բերում է կապիտալիզմը աշխատավորներին:

Ներկայումս իրավական պետության գաղափարը ամրագրվում է ժողովրդավարական հռչակվող պետությունների սահմանադրություններում, որոնց թվում՝ նաև ՀՀ Սահմանադրությունում, որի առաջին հոդվածում Հայաստանը հռչակվում է իրավական պետություն:

ՀԱՐՑ 53. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Իրավական պետության կայացումը շատ բանով կախված է պետության և իրավունքի հարաբերակցությունից, որի վերաբերյալ այսօր էլ ընթանում են ակադեմիական վիճաբանություններ:

Ինչպես արևմտյան երկրների, այնպես էլ հայրենական իրավագիտությունում հակամարտում են երկու հիմնական և տրամագծորեն հակադիր տեսակետներ այն հարցի վերաբերյալ, թե ինչն է առաջնային և ինչն է երկրորդային՝ պետությո՞ւնը, թե՞ իրավունքը: Ինչն է սկզբնապես նախորդում ինչին՝ իրավունքը պետությա՞նը, թե՞ ընդհակառակը:

Նրանք, ովքեր համարում են, որ պետությունը պատմականորեն և ծագումնաբանորեն նախորդում է իրավունքին, կշռադատում են հետևյալ կերպ: Իրավական նորմը միշտ պետության պահանջ է: Պետությունը իրավունքի միակ աղբյուրն է, ուստի ակներև է, որ պետությունը չի կարող պայմանավորված լինել իրավունքով: Այստեղից եզրակացվում է, որ պետական իշխանությունը վեր է իրավունքից, որ պետությունը առաջնային է, իսկ իրավունքը՝ երկրորդական:

Երկրորդ տեսակետի կողմնակիցները պատմական և ծագումնաբանական նախասկզբնականությունը և, հետևաբար, առաջնությունը տալիս են իրավունքին: Նրանց համոզմամբ, այդ տեսակետը հենվում է հետևյալի վրա: Պետական իշխանության հիմքում ընկած է ոչ թե փաստը, այլ՝ իրավունքը: Պետությունը չի կարող լինել իրավունքի աղբյուր, քանի որ հենց ինքն է բխում իրավունքից և փաստորեն իրավական համակարգ է: Իրավունքն առաջնային է և պետությունից վեր է կանգնած, զսպում և սահմանափակում է նրան:

Այս հակադիր տեսակետները միայն ակադեմիական դիսկուսիաների առարկա չեն, այլ ունեն գործնական մեծ նշանակություն: Նայած նրան, թե որ տեսակետն է գերակշռում պետության պաշտոնական քաղաքականությունում և հասարակության քաղաքական համակարգում, կարող են առաջանալ հեռու գնացող գործնական հետևանքներ: Այն դեպքում, երբ առավելությունը տրվում է պետության առաջնությանը, ապա տվյալ պետությունում հնարավոր է ոչ թե իրավական պետության, այլ՝ ավտորիտար կամ տոտալիտար որևէ պետական ռեժիմի հաստատումը:

Եթե պետության հրապարակային իշխանությունում և հասարակության քաղաքական համակարգում գերակշռում է պետության նկատմամբ իրավունքի առաջնության սկզբունքը, ապա մեծ հավանականությամբ կարելի է պնդել, որ տվյալ պետությունում հնարավոր է իրավական պետության ստեղծումը:

Այսպիսով, իրավական պետության և իրավունքի հարաբերակցությունում առավելությունը տրվում է իրավունքին: «Օրենքն ամենից վեր է» սկզբունքի պաշտոնական ճանաչումից սկսվում է իրավական պետության կայացումը:

ՀԱՐՑ 54. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Իրավական պետության տարբերությունը ոչ իրավական պետությունից բացահայտվում է նրա յուրահատուկ հատկանիշներում: Որո՞նք են դրանցից գլխավորները բազմաթիվ և բազմազան հատկանիշների մեջ, որոնց ամբողջությունը հնարավորություն է տալիս պարզել, թե որ պետությունն է իրավական, իսկ որն այդպիսին չէ:

ԱՌԱՋԻՆ: Օրենքի գերակայությունը: Դա նշանակում է, որ բոլորը անկախ որևէ հանգամանքից, պարտավոր են ենթարկվել օրենքին և անվերապահորեն ու անշեղորեն կատարել դրա պահանջները: Պաշտոնատար անձինք պատասխանատու են օրենքի առջև այնպես, ինչպես շարքային քաղաքացին: Օրենքի «դիկտատուրան» հնարավորություն է տալիս քաղաքացուն պաշտպանել իր իրավունքները, ազատությունները և օրինական շահերը ոտնձգություններից, իսկ պաշտոնատար անձանց՝ հեռու մնալ կամայականությունից և օրինազանցությունից:

ԵՐԿՐՈՐԴ: Մարդու անօտարելի իրավունքները և ազատությունները երաշխավորվում և պահպանվում են պետության կողմից:

Նախկին ԽՍՀՄ-ում, չնայած հայտնի թերություններին, սահմանադրությամբ երաշխավորված էին և իրականում իրագործվում էին աշխատանքի, հանգստի, անվճար կրթության ու բուժսպասարկման և այլ իրավունքներ: Դրանք որոշ չափով երաշխավորված են ԽՍՀՄ-ի փլուզումից հետո առաջացած պետությունների սահմանադրություններում: Սակայն ակնհայտ է, որ այդ պետություններում, որոնց թվում նաև Հայաստանում, քաղաքացիների իրավունքների և ազատությունների երաշխավորվածությունը, մեղմ ասած, զգալիորեն նվազել է:

ԵՐՐՈՐԴ: Պետության և քաղաքացու ***փոխադարձ պատասխանատվության*** սկզբունքի իրագործումը:

Ինչպես քաղաքացիները միշտ պատասխանատվություն են կրում պետության առջև, այնպես էլ պետությունը, նրա մարմինները և պաշտոնատար անձինք պետք է պատասխանատվություն կրեն քաղաքացու և

հասարակության առջև: Հակառակ դեպքում՝ խոսք անգամ չի կարող գնալ իրավական պետության մասին:

Իրավական պետության կարևոր հատկանիշներից են նաև ժողովրդավարությունը, իշխանությունների տարանջատումը, դատարանների անկախությունը և այլն:

Իրավական պետության կայացման համար անհրաժեշտ են նաև մի շարք այլ նախադրյալներ, որոնցից կարելի է առանձնացնել. ա) տնտեսական նախադրյալները՝ հիմնված առաջադեմ տեխնոլոգիաների և բնակչության պահանջմունքները լիովին բավարարող ապրանքային արտադրության վրա, բ) սոցիալական նախադրյալները, երբ պետությունը և հասարակությունն իր վրա է վերցնում ծերերի, հաշմանդամների և սոցիալական պաշտպանվածության կարիք զգացող մարդկանց արժանապատիվ կյանքի ապահովման պատասխանատվությունը:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

ՀԱՐՑ 55. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Իրավունքը, ինչպես պետությունը, պատկանում է ոչ միայն առավել կարևոր, այլ նաև չափազանց բարդ հասարակական երևույթների թվին: Իրավաբանական գրականությունում միանշանակ սահմանում չի տրվում իրավունքի հասկացությանը: Գոյություն ունեն իրավունքի բազմաթիվ դարբեր ձևակերպումներ: Դա հասկանալի է, քանի որ չափազանց դժվար է պատմական տիպի բոլոր տեսակի իրավունքների համար ձևակերպել մի ընդհանուր հասկացություն: Իսկ ի՞նչ են ասում հնադարի փիլիսոփաներն ու իրավաբանները:

Ըստ Արիստոտելի, իրավունքը քաղաքական հարաբերությունների կարգավորման միջոց է և պետք է ծառայի որպես «արդարության չափանիշ»: Ի՞նչ է «իսկական օրենքը», հարց է տալիս Ցիցերոնը, և շեշտելով բնական իրավունքի նշանակությունը մադկային իրավունքի համար, պատասխանում է, որ «օրենքը խելամիտ դրույթ է, որը համապատասխանում է բնությանը, տարածվում է բոլոր մարդկանց վրա, մշտական, հավերժ, որը կանչում է պարտքի կատարման»: Ցիցերոնը գրում է, որ իրավունքը «արգելելով, վախեցնում է հանցագործությունից, սակայն նա ոչինչ չի հրամայում ազնիվ մարդկանց և չի ազդում անազնիվների վրա, որևէ բան նրանց հրամայելով կամ արգելելով»:

Իրավունքը, գրում է Պավելը, հռոմեական հինգ հռչակավոր իրավաբաններից մեկը, ունի կրկնակի իմաստ: Մի կողմից դա բնական իրավունքն է, որպես արդարության և բարու չափանիշ, մյուս կողմից՝ իրավունքն այն է, ինչը «օգտակար է բոլորին և շատերին որևէ պետությունում»:

Իմանալու համար, թե ինչ է իրավունքը, գրում է հինգ հռչակավոր հռոմեական իրավաբաններից երկրորդը, հանրահայտ Ուլպիանը, պետք է հասկանալ, թե ինչ երևույթի հետ է այն կապված և որտեղից է այն առաջացել, առաջին հերթին, որ «այն իր անվանումն ստացել է justitia՝ ճշմարտություն, արդարություն», որ իրավունքը «բարու արվեստ է», «հավասարության և արդարության» ուղեցույց:

Իրավագիտությունում ընդունված է այն փաստը, որ իրավունքը վերադասական երևույթ է և միշտ արտահայտում է տնտեսապես և քաղաքականապես գերիշխող դասակարգերի կամքն ու շահերը և իր զարգացման բոլոր փուլերում սրբագրում է մասնավոր սեփականության իրավունքն ու սոցիալական անհավասարությունը:

Մարքսիստական և ոչ մարքսիստական գիտություններում անժխտելի է ճանաչվում «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» Մարքսի և Էնգելսի արտահայտած հետևյալ դրույթը՝ ուղղված բուրժուազիային. «Ձեր իրավունքը օրենքի աստիճանի բարձրացված ձեր դասակարգի կամքն է, կամք, որի բովանդակությունը կանխորոշված է ձեր դասակարգի կյանքի նյութական պայմաններով»: Ցանկացած պետությունում իրավունքը իրոք արտահայտում է իշխող դասակարգի կամքն ու շահերը: Լենինն անկասկած իրավացի էր, երբ գրում էր, որ ցանկացած նորմատիվ-իրավական ակտում պարունակվող կամքը իշխող դասակարգի կամքն է:

Սկզբունքորեն ճիշտ համարելով այդ մարքս-լենինյան թեզիսը, միևնույն ժամանակ չի կարելի անտեսել ժողովրդավարական հասարակություններում տեղի ունեցած փոփոխությունները, որոնք չեն կարող չարտահայտվել իրավունքի բովանդակությունում և ֆունկցիաներում: Բազմակողմանի զարգացած ներկայիս ժողովրդավարական պետություններում ժողովուրդների երկարամյա սոցիալ-քաղաքական պայքարի շնորհիվ ստեղծված դեմոկրատական ինստիտուտները նպաստեցին այն բանին, որ այդ պետություններում իրավունքն արտահայտում է նաև ամբողջ ժողովրդի կամքն ու շահերը:

Բացի այդ, իրավունքը ոչ թե առանձին դասակարգերի ստեղծագործություն է, այլ ամբողջ քաղաքակիրթ մարդկության զարգացման արդյունք և իր մեջ կրում է համամարդկային արժեքներ: Հետևաբար, իրավունքը չի

կարող բացարձակապես արտահայտել միայն ու միայն իշխող դասակարգերի կամքը: Ժողովրդավարական պետություններում հանրաքվեով ընդունված երկրի հիմնական օրենքը փաստորեն արտահայտում է ամբողջ ժողովրդի կամքը: Ուրիշ բան, որ ձևական կամ ոչ լիարժեք ժողովրդավարության պայմաններում հնարավորություններ են ստեղծվում ժողովրդի կամքը շրջանցելու համար:

Արդեն ասվել է իրավունքի հասկացության ձևակերպման բազմազանության մասին, ուստի ստորև տրվում է այդ հասկացության ամենապարզ տարբերակներից մեկը: Իրավունքը պետության կողմից սահմանված և նրա կողմից երաշխավորված, առաջին հերթին իշխող դասակարգի կամքն ու շահերն արտահայտող, համընդհանուր և համապարտադիր նորմերի համակարգ է, որոնցով կարգավորվում են՝ հասարակական հարաբերությունները:

ՀԱՐՑ 56. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Իրավունքի հասկացության բազմազանությունը որոշակի բացասական դեր է խաղում, դժվարություններ առաջացնելով իրավունքի կարևորագույն հարցերի ուսումնասիրման ընթացքում: Հայրենական և օտարերկրյա գիտական-իրավաբանական գրականությունում մեկը մյուսին բացառող հայացքներ են արտահայտվում այդ հարցի վերաբերյալ, ինչն ավելի է խճճում հարցը: Սակայն դժվարությունները հաղթահարվում են, և իրավունքի էությունը բավարար չափով պարզվում է, երբ այդ հասկացությունը ենթարկվում է անալիզի (բաժանվում է բաղադրիչ մասերի) և ուսումնասիրվում է մաս-մաս, իրավունքին բնորոշ հիմնական հատկանիշների վերլուծության միջոցով:

Պատմական տիպի յուրաքանչյուր իրավունք ունի իր յուրահատուկ հատկանիշներն ու տարբերակիչ առանձնահատկությունները, որոնք քննարկվում են պատմական տիպի իրավական համակարգերի ուսումնասիրման ժամանակ: Այստեղ խոսքը գնում է այն հատկանիշների մասին, որոնք բնորոշ են պատմական տիպի իրավունքի բոլոր համակարգերին:

Ամփոփելով տարբեր ժամանակներում և տարբեր մտածողների կողմից արտահայտած դատողությունները իրավունքի վերաբերյալ, մատնանշենք նրա հետևյալ հիմնական հատկանիշները.

1. ***Իրավունքը*** վարքի կանոնների կամ նորմերի միասնական համակարգ է: Դա նորմերի պատահական հավաքածո չէ, այլ պայմանավորված է օբյեկտիվ գործոններով: ***Օբյեկտիվ*** գործոններն են՝ որոշակի տնտեսական, քաղաքական, սոցիալական, գաղափարախոսական և այլ պայմաններն ու գործող հասարակական հարաբերությունները, որոնց պահանջով կառուցվում է իրավական նորմերի համակարգն այս կամ այն հասարակությունում կամ պետությունում: Իրավական նորմերը և դրանց միասնական համակարգը չեն ստեղծվում տարրերային, ինքնակամորեն կամ որևէ մեկի հայեցողությամբ: Նրանցում արտացոլվում են հասարակության և պետության կենսական պահանջմունքները: Անկասկած ճիշտ էր Մարքսը, երբ գրում էր, որ «օրենսդիր իշխանությունը օրենք չի ստեղծում, նա միայն հայտնագործում և ձևակերպում է այն»: ***Սուբյեկտիվ*** գործոնը կայանում է նրանում, որ իրավական նորմերի ձևակերպում կատարվում է պետական մարմինների, մասնագիտացված գիտական ինստիտուտների կողմից՝ իրավագետների, հոգեբանների, սոցիոլոգների, քաղաքագետների և այլ մասնագետների մասնակցությամբ:

Իրավունքի կարևոր հատկություններից մեկը նրա ***նորմատիվությունն*** է: Վարքի կանոնների և նրանց համակարգի նորմատիվ բնույթի վերաբերյալ վիճաբանող իրավագետները բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ իրավունքը ***«նեղ»*** և ***«ընդարձակ»*** իմաստով ըմբռնողների: Առաջինները պնդում են, որ իրավունքը միայն վարքի կանոններ սահմանող նորմերի համակարգ է և ոչ մի կապ չունի այլ երևույթների հետ, կամ ինչպես նորմատիվիստական տեսության հիմնադիր Կելզենն էր ասում՝ «իրավական կարգ է»: Նա ասում էր, որ «իրավական կարգն իրենից ներկայացնում է նորմերի համակարգ»: իրավունքն ընդարձակ իմաստով ըմբռնողներն ապացուցում են, որ բացի վարքի կանոններ սահմանելուց, իրավունքը պետք է իր մեջ ներառի այլ կառուցվածքային տարրեր՝ իրավահարաբերությունները, քաղաքացիների սուբյեկտիվ իրավունքներն ու ազատությունները, իրավագիտակցությունը, իրավական գաղափարախոսությունը և այլն:

2. ***Իրավունքը*** պետության կողմից ստեղծվող, հրապարակվող և վավերացվող նորմերի համակարգ է: Հասարակությունում գործում են բազմաթիվ և բազմազան սոցիալական նորմեր (բարոյականության, տեխնիկական, կուսակցական, հասարակական կազմակերպությունների և այլն), սակայն միայն իրավունքի նորմերն են սահմանվում և երաշխավորվում պետության կողմից:

Նշանակո՞ւմ է դա, արդյոք, թե իրավունքն ամբողջովին կախված է պետությունից և ենթակա է նրան, թե հարաբերաբար ինքնուրույն է: Այդ հարցում օտարերկրյա և հայրենական իրավաբանական գրականությունում կան երեք խմբի տարբեր հայացքներ:

Առաջինը կայանում է նրանում, որ իրավունքը համարվում է երկրորդական, իսկ պետությունը՝ առաջնային: Պետությունն է իրավունքի միակ աղբյուրը, իսկ իրավունքը պետության պահանջն է:

Երկրորդ տեսակետի կողմնակիցները պնդում են, որ պետական իշխանությունը պետք է կրի իրավական բնույթ: Չնայած պետությունն է ստեղծում և հրապարակում իրավունքի նորմերը և նորմատիվ ակտերը, բայց իրավունքի աղբյուր չի հանդիսանում, այլ ինքն է բխում իրավունքից և պետք է գործի նրա շրջանակում: Իրավունքն է վեր պետությունից, այլ ոչ թե հակառակը:

Երրորդ տեսակետի կողմնակիցները հանդես են գալիս հաշտարարների դերում: Նրանք ասում են, որ պետությունն ու իրավունքը այնքան համաձուլված և միասնական են, որ այն հարցը, թե նրանցից որն է առաջնային և որը՝ երկրորդական, անիմաստ է: Իրականում պետությունն ու իրավունքը գտնվում են ֆունկցիոնալ միասնության մեջ:

Սակայն պետք է ասել, որ պետության և իրավունքի հարաբերակցության հարցը չափազանց կարևոր գործնական նշանակություն ունեցող հարց է: Դա կայանում է նրանում, որ անհրաժեշտ է լինում պարզել՝ գործում է, արդյոք, տվյալ պետական իշխանությունը իրավունքի շրջանակում և օրինակա՞ն է այն, թե՞ այդ իշխանությունը խախտում է իր կողմից սահմանված իրավունքի նորմերը և իրեն դնում է անօրինական (ոչ լեգիտիմ) իշխանության վիճակ:

Պետության և իրավունքի հարաբերակցության վերաբերյալ կան

բազմաթիվ հետաքրքիր տեսակետներ: Բերենք դրանցից մի քանիսը:

Լյուդվիգ Գումպլովիչը (1838-1909). պետության ծագման մասին բռնության տեսության հիմնադիրը, գրում է. «Իրավունքին բնորոշ է տենդենց՝ ավելի ու ավելի ազատագրվել իր ստեղծիչ պետությունից, ազատվել նրա ազդեցությունից և, որպես իրավական գաղափարի տեսքով ինքնուրույն ուժ, միտում ունի դուրս գալու նրա դեմ»:

Գեորգ Ելլինեկը (1851-1911), «զուգահեռության» տեսության հիմնադիրը, համաձայն որի պետությունը և իրավունքը զարգանում են զուգահեռաբար: Նա պետական կարգը նույնացնում էր իրավական կարգի հետ և ասում էր, որ «պետության կողմից ստեղծվող իրավունքը պարտավորեցնում է ոչ միայն հպատակ անհատներին, այլ նաև հենց իրեն՝ պետությանը»:

Ճանաչելով պետության չափազանց մեծ տեղն ու դերը օրենսդրության ստեղծման և իրականացման մեջ, այնուամենայնիվ, շատ իրավագետներ համարում են, որ պետական իշխանությունը այն ***«կամքը»*** չէ, որը կարող է իրեն թույլ տալ ամեն ինչ «հենվելով ուժի վրա» և, ինչպես հայտնի իրավագետ ***Լեոն Դյուգին*** էր ասում, «սոլիդարիզմի» (համերաշխության կամ սինդիկալիստական պետության) տեսության հիմնադիրը (1859-1928), «պետության ընդհանուր բարերարության գործում պետական իշխանության կարևորագույն խնդիրը իրավունքին ծառայելն է»: Նա գրում է. «Միանգամայն հնարավոր է ապացուցել, որ բացի նրա ստեղծումից պետության կողմից, իրավունքն ունի պետությանը նախորդած ամուր հիմք, վեր է խոյանում նրանից և, որպես այդպիսին՝ պարտադիր է նրա համար: Պետությունը պետք է ենթարկվի իրավունքի նորմերին, ասում էր Դյուգին: Դա արտացոլվում է «մարդկանց խղճի մեջ, ավելի լիակատար արտահայտվում է սովորույթի և օրենքի մեջ և իրականացվում պետության ֆիզիկական հարկադրանքում, որն այդպիսով դառնում է ոչ այլ ինչ, քան իրավունքին ծառայող ուժ»:

Կան բազմաթիվ այլ տեսակետներ քննարկվող հարցի վերաբերյալ, սակայն բոլոր վիճաբանող կողմերը համամիտ են մի սկզբունքային հարցում, նրանում, որ իրավունքի նորմերի համակարգը պետության օրենսդրական գործունեության արդյունք է և, որ իրավական նորմերը հրապարակվում և վավերացվում են պետության կողմից:

3. ***Իրավունքը*** միշտ արտահայտում է պետության կամքը, որում մարմնավորվում է դասակարգի, իշխող խմբավորման, ազգի կամ ժողովրդի կամքը:

Պատմությունը վկայում է, իսկ ժամանակակից պետությունների փորձը ցույց է տալիս, որ իրավունքում առաջին հերթին մարմնավորվում են իշխողների կամքը, որոնք զգուշանալով սոցիալական ցնցումներից և իշխանությունը կորցնելու հնարավորությունից, հաճախ ստիպված են լինում հաշվի առնել հպատակների կամ քաղաքացիների շահերը:

4. ***Իրավունքը*** իրենից ներկայացնում է նորմերի կամ վարքի կանոնների համակարգ, որն ունի համընդհանուր բնույթ:

Իրավունքի նորմերի համընդհանուր բնույթը նշանակում է, որ հասարակության բոլոր անդամները պարտավոր են կատարել նրանց պահանջները:

Ընդգծելով իրավունքի և նորմերի համընդհանրության միջև անբաժանելի կապը, ***Գ. Կելզոնը*** (1881-1973), նորմատիվիզմի կամ «մաքուր» իրավունքի տեսության հիմնադիրը, իր «Իրավունքի մաքուր տեսություն» հիմնական աշխատությունում գրում է. «Իրավունքի նորմը իրենից ներկայացնում է վարքի կանոն, համաձայն որի այս կամ այն անձը (մի խումբ անձինք, պետք է գործի որոշակի ուղղությամբ, անկախ նրանից՝ ցանկանո՞ւմ է նա իրեն պահել այդպես, թե՞ ոչ»:

Քաղաքակիրթ իրական իրավական պետությունում իշխանությունն անպայման ինքնասահմանափակում, ***«կապում»*** է ինքն իրեն և իր ապարատի բոլոր մարմիններին իրավունքի համընդհանրությամբ, իր գործունեությունը կազմակերպում է բացարձակապես օրենքների շրջանակում:

Իրավունքն առաջին հերթին պետք է պարտադիր լինի իշխանությունների համար: Եթե իշխանավորները համարում են, որ իրավական նորմի պահանջներն իրենց չի վերաբերում և ամեն մի կոնկրետ դեպքում գործում են իրենց ինքնակամությամբ, ապա իրավունքը փոխարինվում է կամայականությամբ:

5. ***Իրավունքը*** երաշխավորվում, ապահովվում և պահպանվում է պետության կողմից: Իրավունքի նորմերի կանոնների խախտման դեպքում պետությունը կիրառում է հարկադրանք: Հարկադրանքը կիրառվում է միայն իրավասու մարմինների կողմից, որոնք պարտավոր են խստորեն գործել իրենց իրավասությունների շրջանակում և օրենքների համապատասխան:

Գերմանացի հայտնի իրավագետ Իերինգը համարում էր, որ առանց հարկադրանքի իրավունքի մասին նույնիսկ իմաստ չունի խոսել, քանի որ «իրավունքը հասարակության կյանքի ապահովումն է հարկադրման ձևով»:

Պետական հարկադրանքը ակտիվորեն կիրառվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում, երբ դա անհրաժեշտ է հասարակության շահերի պաշտպանության համար և պահանջվում է օրենքով: Մյուս բոլոր դեպքերում միայն պահպանվում է հարկադրանքի կիրառման հնարավորությունը:

ՀԱՐՑ 57. ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ, ՆՐԱՆՑ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Իրավունքի և օրենքի հարաբերակցության պրոբլեմը միշտ եղել է սուր վիճաբանությունների առարկա, ինչպես անցյալում, այնպես էլ ժամանակակից արտասահմանյան և հայրենական իրավաբանական գրականությունում և գիտական շրջանակներում: Առաջին հայացքից ակադեմիական թվացող իրավունքի և օրենքի հարաբերակցության հարցը, որն անարդյունավետ դիսկուսիաների օբյեկտ է, ունի ոչ այնքան տեսաբանական, որքան կիրառական կամ գործնական նշանակություն:

Բանը նրանում է, որ ոչ բոլոր օրենքներն են բխում պետությունից և իրավական օրենքներ ճանաչվում և չկան չափանիշներ (բոլորի կողմից ընդունված), որոնք թույլ կտային օրենքը ճանաչել իրավական: Սակայն այդ հարցի շուրջ վիճաբանող կողմերը ներկայացնում են տրամագծորեն միմյանցից տարբերվող չափանիշներ: Հիմնականում բախվում են երկու մոտեցումներ: Առաջինի կողմնակիցները անդում են, որ պետությունն է իրավունքի միակ ստեղծողը կամ աղբյուրը, որ ինչի մասին խոսում է պետությունը օրենքների միջոցով՝ իրավունք է: Երկրորդ մոտեցումը հիմնված է բոլորովին այլ կանխադրույթների վրա: Այստեղ պետությունը և իրավունքը ճանաչվում են ինքնուրույն և միմյանցից հարաբերաբար անկախ հասարակական ինստիտուտներ: Այդ տեսակետի կողմնակիցները պնդում են, որ պետությունն օրենքներ չի ստեղծում և չի կարող ստեղծել,

այլ օբյեկտիվ իրականությունից է դուրս բերում և ամրագրում դրանք: Նրանք համաձայն են, որ պետությունը օրենքների միակ ստեղծողն է, բայց ոչ իրավունքի:

Իսկ ինչպիսի՞ հիմքեր կան մի օրենքը համարել իրավական, իսկ մյուսը՝ ոչ իրավական: Ո՞ր օրենքները կարելի է համարել իրավունքի հետ համընկնող, իսկ որը չի կարելի: Ահա նման և այլ հարցերին փորձում են պատասխանել տարբեր դարաշրջանների մտածողները և այսօրվա իրավական դպրոցների ներկայացուցիչները: 19-20-րդ դարերի իրավագետներից շատերը օրենքը իրավական ճանաչելու համար առաջարկում էին «ընդհանուր կամքի» չափանիշը, այսինքն՝ ամբողջ հասարակության, ազգի կամ ժողովրդի կամքը (օրինակ, հանրաքվեի միջոցով արտահայտված): Հետևաբար, մյուս բոլոր նորմատիվ ակտերը, որոնց թվում նաև օրենքները, այդ սկզբունքի համաձայն, պետք է դասվեն ոչ իրավականների կարգին: Սակայն այստեղ էլ ծագում են բազմաթիվ խոչընդոտներ, որոնք թույլ չեն տալիս իրականացնել հավանության և խրախուսանքի արժանի այդ գաղափարը: Օրինակ, հարց է ծագում, որպես ներկայացուցչական և միակ օրենսդրական մարմին, պառլամենտը, ընդունելով որևէ օրենք, արտահայտում է արդյոք նրանում ընդհանուր կամքը: Շատերը կարծում են, որ չի արտահայտում:

Ֆրանսիական հանրահայտ իրավագետ և պետականագետ Լեոն Դյուգին գրում է. «Օրենքն արտահայտում է ոչ թե ընդհանուր կամքը, որը գոյություն չունի, և ոչ էլ պետության կամքը, որը նույնպես բացակայում է, այլ՝ մի քանի քվեարկող մադկանց կամքը... Դրանից դուրս կան միայն կեղծիք և դատարկ բանաձևեր...»: Գիտնականը պառլամենտի ընդունած բոլոր օրենքները բաժանում էր երկու կատեգորիաների՝ իրավունքի նորմեր բանաձևող օրենքների և այդ օրենքների իրականացման համար միջոցներ նախատեսող օրենքների: «Ես, ասում էր նա, առաջիններն անվանում եմ նորմատիվ օրենքներ, իսկ երկրորդները՝ կառուցվածքային օրենքներ»: Դյուգին իր գաղափարներով միշտ իրավագետների ուշադրության կենտրոնում է եղել: Սակայն նրա հետաքրքիր դատողություններում էլ չի գտնվում այն հարցի պատասխանը, թե ինչ է «իրավական օրենքը»:

Փորձեր են կատարվում իրավունքի և օրենքի հարաբերակցության

հարցին լուծում տալ բարոյականության կատեգորիաների միջոցով: Նման փորձերից է, այսպես կոչված, «իրավական իդեալի» գաղափարը: Հենվելով հռոմեացիների այն ասույթի վրա, որ «արդարությունն ու բարին օրենքների օրենքն է», հետևություն է արվում, որ իրավական իդեալը կազմում է իրավական օրենքների բովանդակությունը: Գիտական գրականությունում «իրավական իդեալը» ներկայացվում է որպես «անհատական և հասարակական գիտակցությունից բխող հասարակության համակեցության խելամիտ կազմակերպման մասին պատկերացումներ, հիմնված արդարության, հումանիզմի, բարու և բնական միջավայրի պահպանման սկզբունքների վրա»: Սակայն ակնհայտ է, որ բարու և չարի հասկացությունները բարոյականության կատեգորիաներ են, այլ ոչ թե իրավունքի, և դա չի նպաստում իրավունքի և օրենքի հարաբերակցությունում պարզություն մտցնելուն:

Պրոբլեմը մնում է չլուծված և ավելի է բարդանում, մասնավորապես բազմաթիվ անցումային պետությունների ծագման պատճառով: Հավանական է, որ հարցի լուծման համար անհրաժեշտ է նոր մեթոդաբանություն և նոր աշխարհայացք, և երևի դա հեռու ապագայի գործ է:

ՀԱՐՑ 58. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Իրավունքի սկզբունքները հասարակական հարաբերությունների օրինաչափություններն են, որոնց վրա հենվում է իրավագիտությունը, օրենսդրությունը և իրավունքի իրականացումը: Իրավունքի սկզբունքներն արտահայտվում են սահմանադրության և այլ օրենքների հոդվածներում, պրեամբուլաներում (ներածական մասերում) նորմ-սկզբունքների, նորմ-նպատակների, նորմ-խնդիրների տեսքով: Օրինակ, ժողովրդաիշխանության, իշխանությունների տարանջատման, բոլոր քաղաքացիների իրավահավասարության և այլ սկզբունքներ հռչակվում և ամրագրվում են սահմանադրություններում և այլ օրենքներում:

Իրավունքի սկզբունքները դասակարգվում են ըստ պատմական տիպե-

ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԱՅԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ

ՀԱՐՑ 59. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մարդկանց, սոցիալական տարբեր խմբերի, կոլեկտիվների, կազմակերպությունների հարաբերությունները կարգավորող նորմերը կոչվում են սոցիալական նորմեր: Ըստ բնույթի սոցիալական նորմերը կարող են լինել տնտեսական, քաղաքական, ավանդույթային և կրոնական: Իրավունքի նորմերը նույնպես սոցիալական նորմեր են, բայց հիմնովին տարբերվում են մյուս սոցիալական նորմերից նրանով, որ բխում են պետությունից, կրում են համընդհանուր բնույթ, երաշխավորվում և պահպանվում են պետության կողմից, անհրաժեշտության դեպքում հարկադրանքի կիրառմամբ: Մյուս բոլոր սոցիալական նորմերը չեն բխում պետությունից և համապարտադիր չեն, հենվում են հասարակական կարծիքի և հասարակական ներգործության միջոցների ազդեցության վրա:

Իրավունքը առավել սերտորեն է կապված բարոյականության և տեխնիկական նորմերի հետ: Եթե ոչ ուղղակի, ապա անուղղակի ձևով այդ սոցիալական նորմերը ներկա են լինում իրավունքում: Օրինակ, քրեական օրենսգրքով նախատեսված արարքների զգալի մասը ոչ միայն հանցագործություններ, այլև անբարոյական արարքներ են: Տեխնիկական նորմերի խախտումը հաճախ իրավական պատասխանատվության հիմք է հանդիսանում: Սոցիալական նորմերի մեջ կարևորագույն տեղ են գրավում տնտեսական նորմերը, որոնց տեղն ու դերը էլ ավելի է կարևորվում տնտեսական ռեֆորմների, սեփականության վերաբաշխման, շուկայական հարաբերությունների զարգացման, տնտեսական հարաբերություններում պետության միջամտության նվազեցման և անցումային պետությանը բնորոշ այլ պայմաններում:

Սոցիալական նորմերի մեջ զգալի տեղ են գրավում քաղաքական նորմերը, որոնցով կարգավորվում են դասակարգերի, սոցիալական այլ խմբերի, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և պետական իշխանության միջև հարաբերությունները: Առավել կարևոր քաղաքական նորմերը կոչվում են քաղաքական սկզբունքներ: Դրանցից են, օրինակ՝ ժողովրդաիշխանության, ժողովրդի սուվերենության, ժողովրդի եղբայրության և համերաշխության և այլ սկզբունքներ: Քաղաքական նորմերը մարմնավորում են ստանում քաղաքական հռչակագրերում, մանիֆեստներում, սահմանադրություններում, կուսակցությունների կանոնադրություններում և ծրագրային փաստաթղթերում: Քաղաքական այն նորմերը, որոնք ամրագրվում են իրավական ակտերում, իրավունքի նորմերի նշանակություն են ստանում: Օրինակ, սահմանադրություններում զետեղված բոլոր քաղաքական նորմերը իրավունքի նորմեր են:

Սոցիալական նորմերի լայնածավալ խումբ են կազմում, այսպես կոչված, կորպորանտական նորմերը, որոնք ընդունվում են հասարակական կազմակերպությունների, ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների կողմից և ամրագրվում են նրանց կանոնադրություններում, ներքին կանոնակարգերում, դրույթներում:

Մարդկանց սոցիալական վարքը կարգավորվում է նաև սովորույթներով և ավանդույթներով: Դրանք առաջին հերթին գործում են կենցաղում, ընտանեկան և այլ հարաբերություններում:

Մարդկանց հոգեկան կյանքում զգալի տեղ են գրավում կրոնական նորմերը: Քրիստոնեական կրոնը մեծ ազդեցություն ունի Եվրոպայի և Ամերիկայի բնակչության վրա: Ժամանակակից իրավական համակարգերից է իսլամի դավանաբանության հիման վրա հիմնված մուսուլմանական իրավունքը: Աստվածաշնչում, Ղուրանում, Թալմուդում (Հին Կտակարանում) և այլ կրոնական աղբյուրներում, բացի կրոնական նորմերից, կան բազմաթիվ համամարդկային սոցիալական նորմեր: Օրինակ, բիբլիական պատմվածքներում ու պատգամներում սահմանված է վեց օր աշխատել և մեկ օր հանգստանալ, հարգել ծնողներին, չսպանել, չգողանալ, կեղծ վկայություն չտալ և այլ սոցիալական վարքի կանոններ:

րի՝ ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական և սոցիալիստական իրավունքի սկզբունքների, որոնցում խտացված ձևով արտահայտվում է այդ հասարակարգերի իրավունքի դասակարգային, սոցիալական և քաղաքական էությունը:

Ըստ բնույթի իրավունքի նորմ-սկզբունքները դասակարգվում են սոցիալ-տնտեսական, քաղաքական, գաղափարական, բարոյականության, կրոնական և հատուկ-իրավաբանական սկզբունքների: Հատուկ-իրավաբանական սկզբունքները նույնպես սոցիալական բնույթ են կրում, բայց ունեն իրավաբանական կառուցվածք և արտահայտվում են իրավաբանական լեզվով:

Ժամանակակից իրավական համակարգերը հենվում են հատուկ իրավաբանական սկզբունքների վրա, որոնք ըստ գործողության և տարածման բնագավառի կարող են լինել ճյուղային, միջճյուղային և ընդհանուր: ***Ճյուղային*** են համարվում միայն տվյալ իրավունքի ճյուղին վերաբերող և առավել մեծ նշանակություն ունեցող սկզբունքները: Օրինակ, հանցագործության համար պատժի անխուսափելիության սկզբունքը քրեական իրավունքում կամ կողմերի հավասարության սկզբունքը քաղաքացիական իրավունքում: ***Միջճյուղային*** սկզբունքները այնպիսի հիմնադրույթներ են, որոնք ընդունված են երկու կամ ավելի իրավունքի ճյուղերում: Օրինակ, կոլեգիալության, բաց դատավարության և հրապարակայնության սկզբունքները քրեական և քաղաքացիական դատավարության ճյուղերի համար: ***Ընդհանուր*** են համարվում իրավունքի ամբողջ համակարգի համար նշանակություն ունեցող սկզբունքները: Օրինակ, իրավահավասարության, օրինականության, արդարության և այլ ընդհանուր սկզբունքները:

Հատուկ իրավաբանական սկզբունքները ուսումնասիրվում և մեկնաբանվում են իրավունքի ճյուղերի տեսություններում: Ստորև մատնանշվում են միայն ընդհանուր բնույթի մի շարք հիմնական սկզբունքներ.

- իրավունքի նորմերի համընդհանուր լինելու և դրանց առաջնության սկզբունքը այլ սոցիալական նորմերի նկատմամբ,
- դասակարգումը մասնավոր և հանրային իրավունքի և հարաբերաբար ինքնուրույն իրավունքի ճյուղերի և ինստիտուտների,
- սոցիալական ազատության սկզբունքը, որն արտահայտվում է անձի սուբյեկտիվ իրավունքների և իրավաբանական պարտականությունների ինստիտուտում,
- օրինականության և իրավակարգի պահպանության, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը,
- արդարության սկզբունքը, որն արտահայտվում է «հավասար իրավունք ոչ հավասար մարդկանց համար» բանաձևում, իրավաբանական պատասխանատվության համապատասխանությունում իրավախախտման բնույթին,
- իրավաբանական պատասխանատվություն միայն մեղավոր հակաիրավական արարքի, այլ ոչ թե մտադրության համար և անմեղության կանխավարկածի պահպանությունը, մինչև որ անձի մեղքը չհաստատվի դատական կարգով,
- օրենքի հակադարձ ուժի անթույլատրելիության սկզբունքը:

ՀԱՐՑ 60. ԻՐԱՎՈՒՆՔԻ և ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Բարոյականությունը՝ պատմական զարգացման ընթացքում մարդու մոտ ձևավորված պատկերացումներն են բարու ու չարի, արդարության և անարդարության, առաքինության և ստորության, մարդասիրության և երջանկության մասին: «Ուրիշների նկատմամբ վարվիր այնպես, ինչպես դու կցանկանայիր, որ նրանք վարվեն քեզ հետ»: Ահա սա է բարոյականության «ոսկի օրենքը»:

Քաղաքակրթության, պետության և իրավունքի զարգացման պատմությունը վկայում է, որ իրավունքը և բարոյականությունը սերտորեն կապված են և համագործակցում են միմյանց հետ: Դրա մասին է խոսում հնադարյան իմաստալից ասույթը՝ «Իրավունքը բարու և արդարության արվեստ է»: Հեգելի «Իրավունքի փիլիսոփայություն» աշխատությունում իրավունքը երկայացվում է որպես վերացական իրավունքի և բարոյականության սրասնություն:

Մեծագույն բարոյական արժեք է իրենից ներկայացնում մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ անձի ազատության և արժանապատվության իրավաբանական արտահայտությունը: Այդ իրավունքների փաստացի իրականացումը մարդու երջանկության անհրաժեշտ պայմանն է, որը ճանաչվում է օրենքով:

Իրավունքի և բարոյականության կապն արտահայտվում է բարոյական հիմքեր ունեցող այնպիսի ընդհանուր սկզբունքներում, ինչպիսիք են արդարության, հումանիզմի, սոցիալական ազատության և նման այլ սկզբունքները: Եթե օրենքը չի համապատասխանում այդ բարոյական կատեգորիաներին, ապա այդպիսի օրենքը չի կարող իրավական օրենք ճանաչվել:

Իրավունքի և բարոյականության տարբերությունը կայանում է հետևյալում: Բարոյականությունը երևան է եկել իրավունքից շատ առաջ՝ նախնադարյան հասարակությունում, միգուցե ավելի վաղ, իսկ իրավունքը ծագել է պետության հետ միասին և միշտ արտահայտել է նրա կամքը: Բարոյականության նորմերը անոնիմ են, այսինքն՝ հեղինակ չունեն: Նրանք

ծագում են հասարակական գիտակցությունում: Ճիշտ է, նախկին ԽՍՀՄ-ում ՍՄԿԿ-ի նախաձեռնությամբ գրվել և հրապարակվել է «Կոմունիզմ կարուցողի բարոյական կոդեքսը», որում կետառկետ թվարկվում էին այդ կառուցողի բարոյական հատկանիշները, հաշվի չառնելով, որ բարոյական նորմերը կատարվում են կամավոր, անձնական համոզմունքների ուժով:

Իրավունքի միջոցով պետությունը ձգտում է մարդկանց գիտակցությունում սերմանել բարձր բարոյական հատկանիշներ. անարդարության և չարի դեմ պայքարելու ցանկություն, քանի որ հանցագործությունն առաջին հերթին անբարոյականություն և չարիք է և դրանից հետո միայն հակաիրավական արարք:

Ներկայումս մի շարք կոլիզիոն հարցեր են ծագել միջազգային իրավունքում՝ կապված մարդու օրգանների փոխպատվաստման, արհեստական բեղմնավորման, մահուսցու հիվանդին նրա համաձայնությամբ մեռցնելու և այլ բժշկական վիրահատումների ու նորույթների կիրառման վերաբերյալ, որոնք իրավաբանական լուծում կարող են ստանալ միայն բարոյականության նորմերն ու սկզբունքները հաշվի առնելով:

ՀԱՐՑ 61. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Տեխնիկական նորմեր» հասկացությունը իր մեջ ներառում է արտադրության հետ կապված բոլոր կանոնները, մեքենաների բնութագրերը, նրանց սպասարկման կանոնները և այլն: Տեխնիկական նորմերի պահանջները հիմնված են բնության օրենքների և գիտության դրույթների վրա, կարգավորում են «մարդ-մեքենա-բնություն» հարաբերությունները: Այդ նորմերի խախտումը արժանանում է համապատասխան վերաբերմունքի ինչպես բնության, այպես էլ հասարակության և պետության կողմից:

Իրավունքը ներազդում է գիտա-տեխնիկական առաջընթացի վրա իրավական ակտերում տեխնիկական նորմերի, աշխատանքի կազմակերպման և անվտանգության կանոններ սահմանելու միջոցով: Սահմանվում է պետական ստանդարտ նյութական կանոնների որակական հատկանիշների նկատմամբ, ընդունվում և հրապարակվում են բազմազան անվտան-

գության կանոններ պարունակող իրավական ակտեր՝ հրահանգներ, ստեղծվում են էկոլոգիական, սանիտարա-համաճարակային անվտանգությունն ապահովող նորմատիվ ակտեր:

Սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ տեխնիկական նորմերի խախտումը կարող է իրավաբանական հետևանքներ ունենալ կամ իրավաբանական կարգավորման առարկա դառնալ: Օրինակ, եթե մեքենայի վարորդը տեխնիկական նորմերի խախտման պատճառով վթարի է ենթարկում իր սեփական մեքենան, նյութական վնաս պատճառելով ինքն իրեն, ապա պետությունն անտարբեր կվերաբերվի դրան, իսկ եթե վթարի պատճառով վնաս է պատճառվել ուրիշ մարդկանց կամ նրանց գույքին, ապա հասարակությունը և պետությունը չեն կարող անտարբեր մնալ և մեղավորը կրում է իրավաբանական պատասխանատվություն:

Հանքերում, պայթյունավտանգ արտադրություններում, ատոմային էլեկտրակայաններում, տրանսպորտում և այլ բնագավառներում տեխնիկական նորմերի խախտման պատճառով աշխարհում ամեն տարի զոհվում են տասնյակ հազարավոր մարդիկ, հսկայական նյութական և բարոյական վնաս է հասցվում հասարակությանն ու պետությանը: Դրանց հիմնական պատճառները կամ տեխնիկական են, կամ կապված են մարդկային գործոնի, այսինքն՝ անվտանգության կանոնների խախտման հետ:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ (ԱՂԲՈՒՐՆԵՐԸ)

ՀԱՐՑ 62. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Իրավունքի համակարգ ասելով հասկանում են նրա ներքին կառուցվածքը: Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը պատկանում է ռոմանա-գերմանական իրավական ընտանիքին, որը բաղկացած է մասնավոր և հանրային իրավունքից: ***Մասնավոր*** իրավունքի նորմերով կարգավորվում են քաղաքացիական (գույքային, առևտրական, ընտանեկան, բնակարանային և այլն) իրավահարաբերությունները մասնավոր անձանց և նրանց միավորումների միջև (իրավաբանական անձանց), առանց պետության և նրա մարմինների միջամտության: Այդ իրավունքի միջոցով է անձն իրականացնում իր սոցիալական ազատության սկզբունքը: ***Հանրային*** իրավունքի նորմերով կարգավորվում են քրեական, վարչական, ուղղիչ աշխատանքային, ֆինանսա-բյուջետային իրավունքի նորմերով լուծում ստացող հասարական հարաբերությունները, որոնց սուբյեկտներից մեկը միշտ պետությունն է:

Իրավունքի համակարգը բաղկացած է իրավունքի նորմերի ամբողջությունից, որոնք համախմբվում են ըստ հասարակական հարաբերությունների կարգավորման առարկայի և կազմում են իրավունքի ճյուղեր՝ քրեական, քաղաքացիական, վարչական և այլն: Իրավունքի ճյուղերն իրենց հերթին բաժանվում են իրավունքի ինստիտուտների, որոնցում համախմբվում են նույնությամբ հասարակական հարաբերության կարգավորող նորմերը (օրինակ, սեփականության, առք ու վաճառքի, պարտավորության, ժառանգության և այլ ինստիտուտները քաղաքացիական իրավունքում):

ՀԱՐՑ 63. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (ՁԵՎԸ)

Որպեսզի իրավունքն իրականացնի իր ֆունկցիաները, պետք է արտահայտված լինի արտաքին աշխարհում, այսինքն՝ ունենա արտահայտման ձև: Իրավաբանական գրականությունում «իրավունքի աղբյուր» և «իրավունքի ձև» հասկացությունները նույնացնում են: Սակայն ոչ բոլոր հեղինակներն են դրա հետ համաձայն, քանի որ իրավունքի աղբյուրի տակ կարելի է հասկանալ Աստծուն, ժողովրդի կամքը, արդարության գաղափարը, պետական իշխանությունը և այլն: Քանի որ պետական իշխանության օրենքներն ու այլ նորմատիվ ակտերը նույնպես իրավունքի աղբյուր են ճանաչվում, ապա անիմաստ է մեծ նշանակություն տալը տեսական վիճաբանություններին տվյալ հարցում:

Այսպիսով, իրավունքի ձև ասելով հասկանում են նրա աղբյուրները, իսկ այդ աղբյուրն է համարվում օրենսդրությունն ամբողջովին:

Իրավունքի հիմնական աղբյուրներն են.

ա) օրենքները, որոնք ընդունվում են պետական իշխանության բարձրագույն օրենսդրական մարմնի կողմից, հաստատվում են պետության գլխի ստորագրությամբ, ունեն բարձրագույն իրավաբանական ուժ.

բ) ենթաօրենսդրական ակտերը, որոնք ընդունվում են պետական իշխանության և կառավարման մարմինների կողմից, կրում են կատարողական-կարգադրողական բնույթ և պետք է համապատասխանեն օրենքների պահանջներին,

գ) դատական և վարչական նախադեպը՝ կոնկրետ գործով որոշումներն ու դատավճիռները, որոնք հատուկ կարգով ճանաչվում են որպես նախադեպ և չափանմուշ են ծառայում նույնաբնույթ դատական և վարչական գործերի լուծման համար հետագայում: Նախադեպերի իրավունքը կիրառվում է Անգլիայում, ԱՄՆ-ում և անգլո-սաքսոնական իրավական ընտանիքի մեջ մտնող այլ երկրներում,

դ) Կրոնական իրավունքի նորմերը, որոնք գործում են իսլամական կոչվող մուսուլմանական երկրներում (Իրան, Պակիստան, Աֆղանստան և այլն): Մուսուլմանական իրավունքի աղբյուրներն են. ***Ղուրանը***՝ իսլամի սուրբ գիրքը, ***Սունան***՝ Ղուրանի մեկնաբանությունները, ***Իջման***՝ իմամների

միաձայն որոշումները, ***կիյասը***՝ համանմանությունից բխող դատողություններ: Ղուրանի հիման վրա ստեղծվել է ***Շարիաթը***՝ մուսուլմանական օրենքների ժողովածուն, որի մշակումը տևել է երեք դար, ավարտվել է 10-րդ դարում և դրանից հետո նրանում ոչ մի փոփոխություն չի մտցվել.

ե) իրավական սովորույթները, որոնք վավերացված են պետության կողմից որպես վարքի կանոններ: Պետությունը վավերացնում է միայն այն սովորույթները, որոնք տվյալ հասարակության համար արժեք են ներկայացնում: Որոշ երկրներում իրավական սովորույթներին նույնիսկ առաջատար տեղ է հատկացվում, Սովորույթի դերն առանձնապես գերագնահատում են իրավունքի պատմական և սոցիոլոգիական դպրոցների ներկայացուցիչները, որոնք իրավունքը դիտում են որպես ժողովրդական գիտակցության արդյունք:

Իրավական ընտանիքներում, առանձին պետությունների իրավական համակարգերում իրավունքի աղբյուրները ստորակարգվում են ըստ դրանց կարևորության աստիճանի: Որոշ երկրներում առաջնությունը տրվում է օրենքին, մյուսներում՝ իրավական նախադեպին, երրորդներում՝ իրավական սովորույթին կամ կրոնական իրավունքին:

Անգլիայում իրավունքի հիմնական աղբյուրներ են համարվում (ըստ ստորադասության). ա) նախադեպերը, բ) ստատուտները (օրենքները), որոնք ընդունվում են պառլամենտի կողմից, գ) «պատվիրակված օրենսդրությունը, որը բխում է իշխանության երեք թևերի մարմիններից՝ պառլամենտի պատվերով կամ հանձնարարությամբ, դ) իրավական սովորույթները, եթե ճանաչվում են հնագույն: Համաձայն 1265 թ. ընդունած օրենքի (ստատուտի), որն այսօր էլ ուժի մեջ է, հնագույն են համարվում բոլոր այն սովորույթները, որոնք գործել են Անգլիայում մինչև 1189 թ., երբ ստեղծվեցին Անգլիայի թագավորական և լորդ-կանցլերի դատարանները և սկսեց գործել նախադեպերի իրավունքը:

Ավստրալիայում, որի պետական իրավունքը պատկանում է անգլո-սաքսոնական իրավական ընտանիքին, առանձնացվում են իրավունքի չորս հիմնական աղբյուրներ, որոնց մեջ առաջին տեղն է գրավում «սովորույթների իրավունքը», այնուհետև «ստատուտային իրավունքը», «պատվիրակված իրավունքը» և սովորույթները: Այդ երկրի իրավագետները բացատրում են,

պետական միավորի սահմաններում:

Նորմատիվ-իրավական ակտերը անհրաժեշտ է տարբերել անհատական-իրավական ակտերից, որոնք նույնպես իրավաբանական ուժ ունեցող ակտեր են, բայց սկզբունքորեն տարբերվում են առաջիններից: Այդ տարբերությունը կայանում է հետևյալում.

- նորմատիվ-իրավական ակտերը պարունակում են ընդհանուր նորմեր, որոնք նախատեսված են բազմակի կիրառման համար (օրինակ, ճյուղային օրենսգրքերը), իսկ անհատական-իրավական ակտերը ընդհանուր նորմեր չեն պարունակում և նախատեսված են միանգամյա կիրառման համար,

- նորմատիվ-իրավական ակտերը հասցեագրված են անորոշ անձանց, իսկ անհատական ակտերը վերաբերում են կոնկրետ անձանց: Օրինակ, անհատական ակտեր են քրեական և քաղաքացիական գործերով դատավճիռները, վճիռներն ու որոշումները, դատախազի (քննիչի) որոշումները (սանկցիաները) ձերբակալման, կալանավորման, խուզարկության և այլ դատաքննչական գործողությունների վերաբերյալ, աշխատանքի ընդունելու կամ աշխատանքից ազատելու հրամանները և այլն,

- նորմատիվ-իրավական ակտերով կարգավորվում է հասարակական հարաբերությունների լայն շրջանակ: Նրանք գործում են անընդհատ, անկախ նրանից՝ կան, թե՞ չկան իրականում նրա նորմերով կարգավորվող հարաբերությունները: Անհատական ակտի գործողությունը դադարում է անմիջապես կոնկրետ իրավահարաբերության ավարտի հետ միաժամանակ: Օրինակ, քրեական գործով դատավճռի ի կատար ածումը դադարեցնում է այդ դատավճռի գործողությունը, սակայն դա չի նշանակում, որ դադարում է քրեական օրենքի համապատասխան հոդվածի գործողությունը:

ՀԱՐՑ 65. ՕՐԵՆՔՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կան օրենքի հասկացության տարբեր սահմանումներ, որոնք չեն բավարարում իրավագիտության պահանջներին և վիճաբանությունների առարկա են հանդիսանում: Սակայն դա չի կարևորը: Կարևոր է պարզել, թե ինչով է օրենքը տարբերվում այլ նորմատիվ ակտերից և ինչ տարբերակիչ հատկանիշներ են նրան բնորոշ:

1. Օրենքներ կարող է ընդունել միայն պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ պառլամենտը: Տվյալ հատկանիշը բնորոշ է ինչպես սահմանադրական միապետություններին, այնպես էլ հանրապետություններին: Սակայն պառլամենտի այդ ֆունկցիան բացարձակ չէ: Կան պետություններ, որոնցում օրենսդրական ֆունկցիաներ են կատարում նաև դատական մարմինները: Օրինակ, ԱՄՆ-ի կոնգրեսի հետ միասին, որպես փաստացի իրավաստեղծագործող մարմին է հանդիսանում Գերագույն դատարանը: Նույնը կարելի է ասել Անգլիայի և ընդհանուր իրավունքի ընտանիքի երկրների մասին, որոնցում դատական պրակտիկայով ստեղծված նախադեպերը փաստորեն օրենքի ուժ են ստանում:

2. Օրենքը իրավունքի գլխավոր ձևն է և ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Մի շարք երկրներում օրենքի գերակայության սկզբունքը կասկածի տակ է վերցվում: Ընդհանուր իրավունքի երկրներից շատերում առաջատար տեղը տրվում է նախադեպերին, իսկ իսլամական պետություններում Շարիաթն է գերակայում պետական օրենսդրության նկատմամբ: Որոշ երկրներում իրավունքի աղբյուրների մեջ առաջին տեղում է սովորույթների իրավունքը:

3. Օրենքը, տեսաբանորեն արտահայտում է ժողովրդի կամքը, ինչպես անմիջականորեն՝ հանրաքվեի միջոցով, այնպես էլ միջնորդավորված՝ պառլամենտի պատգամավորների, պրեզիդենտի, տեղական իշխանության ներկայացուցչական մարմինների միջոցով:

Այս տեսակետը, որը բխում է ժողովրդավարական կամ քաղաքակիրթ համարվող երկրների սահմանադրությունների համապատասխան սկզբունքներից, ունի շատ հակառակորդներ գրեթե բոլոր երկրներում: Ոմանք համարում են, որ օրենքն արտահայտում է ոչ թե ժողովրդի, այլ մի խումբ պատգամավորների կամքը, որն իր հերթին բխում է իշխող դասակարգի կամ իշխող խմբավորման շահերից: Մյուսներն այն կարծիքն են արտահայտում, որ ժողովրդի կամ «ընդհանուր կամքի» մասին կարելի է խոսել ոչ թե որպես փաստի, այլ՝ պոտենցիալ հնարավորության, որի իրականացումը կախված է ժողովրդավարության զարգացման աստիճանից և

որ իրենց մոտ ամենատարածվածը սովորույթների իրավունքն է, որը ձևավորվում է նախադեպերից, այսինքն՝ առանձին դատավորների և տարբեր դատական մարմինների, առավելապես Գերագույն դատարանի որոշումներից (վճիռներից և դատավճիռներից): Նրանք ասում են նաև, որ «սովորույթների իրավունքը» ոչ այնքան կոնկրետ գործերով որոշումներ են, որքան սկզբունքներ, որոնց հիման վրա կայացվում են կոնկրետ որոշումներ:

Ճապոնիայի իրավական համակարգում, որը մտնում է ռոմանական իրավունքի ընտանիքի մեջ, իրավունքի աղբյուրներ են հանդիսանում. ա) 1947 թ. Սահմանադրությունը, որով փոխարինվեց «Մեյջի» կոչված 1889 թ. սահմանադրությունը, բ) պառլամենտի օրենքներն ու այլ իրավական ակտերը, գ) օրդոնանսները, որոնք ընդունվում են տեղական ներկայացուցչական (տեղական պառլամենտի) կողմից, որոնք իրավունք ունեն սանկցիաներ կիրառել դրանց պահանջների խախտման համար (տուգանք, բանտարկություն), դ) Ընթացակարգային օրենսդրությունը, որը Սահմանադրության 77 հոդվածի համաձայն գործունեության կարգ է սահմանում դատավարության մասնակիցների, փաստաբանների և նրանց կազմակերպությունների, դատական մարմինների և նրանց ծառայողների համար, ե) Գերագույն դատարանի համար միայն իրավունքի աղբյուրներ են հանդիսանում նաև սովորույթը և «իրավաբանական նախադեպը»:

Իրավաբանական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր իրավական համակարգում, առավել ևս իրավական ընտանիքում, կան զգալի տարբերություններ իրավունքի ձևերի, այսինքն՝ նրա աղբյուրների միջև: Համեմատելով ռոմանական և ընդհանուր իրավունքի ընտանիքները, հայտնի ֆրանսիական իրավաբան-տեսաբան ***Ռենե Դավիդը*** շատ տեղին ու դիպուկ մատնանշում է, որ եթե ռոմանա-գերմանական ընտանիքում ձգտում են գտնել արդարացի իրավաբանական որոշումներ, օգտագործելով իրավական տեխնիկան, որի հիմքում ընկած է ***«օրենքը»***, ապա անգլո-սաքսոնական կամ ընդհանուր իրավունքի երկրներում «ձգտում են նույն նպատակին, հիմնվելով առաջին հերթին դատական որոշումների վրա»: Ընդ որում, նախադեպերը, որպես իրավունքի աղբյուր, պետական իշխանության իրավունքի աղբյուրներից ավելի վեր են դասվում: Եթե որևէ գործով չկա նախադեպ, ապա անգլիացի իրավաբանը կասի. «այս հարցում օրենքը լռում է»:

Այսպիսով, տարբեր իրավական համակարգերում իրավունքի աղբյուրները տարբերվում են միմյանցից ինչպես տեղով աղբյուրների ստորակարգությունում, այնպես էլ նշանակությամբ: Սակայն, չնայած դրան, իրավունքի աղբյուրները միշտ եղել և մնում են հասարակական հարաբերությունների կարգավորման և այդ հարաբերությունների վրա ներազդման հիմնական միջոց:

ՀԱՐՑ 64. ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

Իրավունքի աղբյուրների մեջ կարևոր տեղ են գրավում նորմատիվ-իրավական ակտերը (համառոտության համար հաճախ ասում են նորմատիվ ակտեր): Դրանք իրավունքի նորմեր պարունակող պետական իշխանության և կառավարման մարմինների գրավոր ձև ունեցող ակտերն են, որոնց միջոցով արտահայտվում է պետության կամքը: Նորմատիվ-իրավական ակտերի թվին են պատկանում.

1. Օրենքները (ստատուտները, դեկրետները), որոնք ընդունվում են պետական իշխանության բարձրագույն օրենսդրական մարմնի (պառլամենտի, ազգային ժողովի, կոնգրեսի, դումայի և այլն) կողմից և ունեն բարձրագույն իրավաբանական ուժ:

2. Ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը, որոնք ընդունվում են գործադիր իշխանության մարմինների կողմից: Դրանք պրեզիդենտի հրամանագրերն են, կառավարության որոշումները:

3. Գերատեսչությունների (նախարարությունների, պետական կոմիտեների, վարչությունների) հրամանները, հրահանգները, դրույթները, որոնց իրավաբանական ուժը տարածվում է միայն այդ գերատեսչությունների ենթակայության գործող մարմինների և նրանց ծառայողների և այլ աշխատակազմի վրա:

4. Տեղական իշխանության մարմինների որոշումները, որոնք գործում են համապատասխան վարչա-տարածքային կամ ազգա-տարածքային

բազմաթիվ սոցիալ-քաղաքական ուտնտեսական պրոբլեմների լուծումից:

4. Օրենքներում արտացոլվում է հասարակական կյանքի առավել կարևոր հարցերը: Նրանցով են սահմանվում երկրի սահմանադրական կարգը, պետության կառավարման ձևը, կառուցվածքը, պետական մարմինների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց լիազորությունները և այլն:

5. Օրենքն ընդունվում և փոփոխությունների է ենթարկվում խիստ կարգով: Յուրաքանչյուր պետություն ունի օրենքների ընդունման իր կարգը, սակայն բոլոր երկրների պառլամենտներում օրենքի ընդունումը անցնում է նույն փուլերը՝ օրենսդրական նախաձեռնության, օրինագծի քննարկման, օրենքի ընդունման և հրապարակման:

Ըստ սոցիալական արժեքականության, օրենքները դասակարգվում են սահմանադրական, սովորական (ընթացիկ) օրենքների: Սահմանադրական օրենքների թվին են պատկանում. նախ ինքը՝ սահմանադրությունը, այնուհետև այն օրենքները, որոնց միջոցով փոփոխություններ են կատարվում սահմանադրությունում և այն օրենքները, որոնք նախատեսված են սահմանադրությամբ:

Սովորական կամ ընթացիկ օրենքները կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները տարբեր ոլորտներում: Եթե սահմանադրական օրենքների ընդունման համար բոլոր երկրներում սահմանված է բարդ ընթացակարգ և պահանջվում է պատգամավորների ձայների որակավորված մեծամասնություն, ապա սովորական օրենքներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀԱՐՑ 66. ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՈՒ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ԸՍՏ ԱՆՁԱՆՑ

Ժամանակի մեջ: Նորմատիվ ակտերի գործողությունը ժամանակի մեջ սկսվում է նրանց ուժի մեջ մտնելու պահից և դադարում են գործել իրավաբանական ուժը կորցնելու պահից: Նորմատիվ-իրավական ակտերը ուժի մեջ են մտնում ա) ընդունման պահից (արտակարգ դեպքերում),

բ) նորմատիվ ակտի հրապարակումից հետո որոշակի ժամանակ անց (օրինակ, տասը օր հետո), գ) նորմատիվ ակտում նշված պահից:

Օրենքը ժամանակի մեջ հետադարձ ուժ չունի: Դա ընդհանուր սկզբունք է և նշանակում է, որ նրա ուժը տարածվում է միայն օրենքը ուժի մեջ մտնելու պահից հետո տեղի ունեցած դեպքերի վրա ու չի տարածվում դրանից առաջ տեղի ունեցածի վրա: Բացառություն է կազմում քրեական իրավունքում գործող ծյուղային սկզբունքը, համաձայն որի «պատիժը վերացնող կամ մեղմացնող օրենքը հետադարձ ուժ ունի, իսկ պատիժ սահմանող կամ պատիժը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

Տարածության մեջ: Տարածքային չափանիշով բոլոր նորմատիվ-իրավական ակտերը դասակարգվում են երեք տեսակի. ա) ակտերի, որոնց գործողությունը տարածվում է պետության ամբողջ տարածքում: Դրանք կարող են լինել պետության բարձրագույն մարմինների նորմատիվ ակտերը (օրենքները, պրեզիդենտի հրամանագրերը, կառավարության որոշումները), բ) ակտեր, որոնց գործողությունը սահմանափակվում է պետության որոշակի տարածքով կամ տարածքներով և գ) ակտեր, որոնց գործողությունը դուրս է գալիս տվյալ պետության սահմաններից: Սովորական կամ ընթացիկ օրենքներն ու այլ նորմատիվ ակտերը վերաբերում են ավելի «նեղ» խնդիրների, լինում են ժամանակավոր կամ երկարաժամկետ, սովորաբար լուծում են մասնավոր խնդիրներ: Օրինակ, օրենքները, որոնք վերաբերում են Սևանի պրոբլեմին, գործում են Սևանի ավազանի մարզերում կամ սահմանամերձ գոտիների մասին նորմատիվ ակտերը, որոնք գործում են սահմանամերձ համարվող վայրերում և այլն:

Առանձին նորմատիվ-ակտերի գործողությունը կարող է տարածվել տվյալ պետության սահմաններից դուրս կամ, ընդհակառակը, տվյալ պետության տարածքում կարող են գործել այլ պետությունների նորմատիվ ակտերը կամ դրանց առանձին նորմերը: Դա առաջին հերթին վերաբերում է երկկողմանի և բազմակողմանի պայմանագրերին, կոնվենցիաներին, դեկլարացիաներին, ինչպես նաև ֆինանսական, առևտրական և օտարերկրյա պետությունների հետ կապերի այլ բնագավառներին:

Ըստ անձանց: Նորմատիվ-իրավական ակտերի գործողությունը տարածվում է երկրի բոլոր քաղաքացիների, օտարերկրացիների և քաղա-

քացիություն չունեցող անձանց (ապատրիդների) վրա: Օտարերկրացիներն ու ապատրիդները հավասարեցվում են տվյալ պետության քաղաքացիներին միայն որոշակի հարցերում, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին և ազատություններին: Ընդհանրապես օտարերկրացիների և ապատրիդների կարգավիճակը սահմանվում է օրենքով, որը Հայաստանի Հանրապետությունում դեռևս ընդունված չէ: Ռուսաստանի Դաշնության օրենքով օտարերկրացիները և ապատրիդները օգտվում են որոշակի իրավունքներից, սակայն զրկված են ընտրելու և ընտրվելու իրավունքից, չեն կարող գրավել պետական ծառայողի պաշտոն, լինել դատախազ, դատավոր և ընդհանրապես աշխատել իրավապահ մարմիններում և այլն: Մոտավորապես նման կարգավիճակ ունեն օտարերկրացիները նաև Հայաստանի Հանրապետությունում:

Օտարերկրյա դեսպանատների, հյուպատոսությունների և այլ դիվանագիտական պաշտոնական կազմակերպությունների օտարերկրացի քաղաքացիներն օգտվում են, այսպես կոչված, դիվանագիտական իմունիտետից (անձեռնմխելիության իրավունքից): Նրանց վրա չեն տարածվում քրեական, վարչական օրենքները: Նրանք չեն կարող կալանավորվել կամ ձերբակալվել, ենթարկվել պատասխանատվության: Նրանց կողմից կատարված հանցագործությունների հարցը լուծվում է դիվանագիտական ճանապարհով:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԸ

ՀԱՐՑ 67. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Նորմ ասելով հասկանում ենք վարքի կանոններ: Վարքի այն կանոնները, որոնք սահմանվում են պետության կողմից և գրավոր ձևակերպվում են նորմատիվ ակտերում, կոչվում են իրավունքի կամ իրավական նորմեր:

Իրավական նորմերը օժտված են մի շարք յուրահատուկ հատկանիշներով, որոնցով նրանք տարբերվում են այլ սոցիալական նորմերից: Իրավական նորմի հիմնական հատկանիշներն են.

1. Իրավական նորմը կրում է ***ընդհանուր*** բնույթ. նախատեսված է ոչ թե առանձին հարաբերությունների կարգավորման, այլ հասարակական հարաբերությունների որևէ տեսակ անորոշ անգամ կարգավորելու համար:

Իրավական նորմերը հասցեագրված են տեսակային հատկանիշներ կրող ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ սեփականատերերին, ամուսիններին, ծնողներին ու որդիներին, հանցագործներին և պաշտոնատար անձանց և այլն:

2. Իրավական նորմերը կրում են կամային բնույթ: Նրանք հասցեագրված են ազատ կամքի տեր անձանց և իմաստ ունեն միայն այն դեպքում, եթե նորմի հասցեատիրոջը (իրավունքի սուբյեկտներին) առաջադրվում է վարքի տարբերակների ընտրություն: Այդ ընտրության ուղղությունն ու տարբերակները սահմանում է պետությունը, որոնց շրջանակում էլ առաջարկվում է գործել իրավահարաբերությունների սուբյեկտներին: Դա չի նշանակում, որ յուրաքանչյուր կոնկրետ իրավական նորմ արտահայտում է կոնկրետ դասակարգի կամ իշխող խմբավորման կամքը: Առանձին իրավական նորմեր կարող են արտահայտել տարբեր սոցիալական խմբերի կամքն ու շահերը կամ ոչ մեկի կամքն էլ չարտահայտեն, այլ լինեն սխալի

կամ մոլորության արդյունք: Օրինակ, միջին դարերում գործող կրոնական ու աշխարհիկ իրավական նորմերով մարդկանց մահապատժի էին ենթարկում «անմաքուր ուժի», «հերետիկոսության», «վհուկության» և նման այլ նորմերով:

3. Կարևոր հատկանիշ է իրավական նորմերի ***համակարգությունը:*** Իրավունքը իրավական նորմերի ամբողջական համակարգն է, բայց դա իրավական նորմերի հասարակ միասնություն չէ, այլ՝ այդ նորմերի կանոնակարգված համակարգ, որում իրավական նորմերը համախմբված և դասակարգված են ըստ կարգավորման առարկայի և կազմում են իրավունքի ճյուղեր: Իրավունքի ճյուղերն իրենց հերթին բաժանվում են իրավական ինստիտուտների, որոնցում համախմբվում են տվյալ ճյուղի այն նորմերը, որոնք կարգավորում են նույնաբնույթ իրավահարաբերություններ: Հենց այդ կարևոր հատկանիշի շնորհիվ իրավական նորմերը կատարում են իրենց սոցիալ-քաղաքական դերը հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում:

4. Իրավական նորմերն օրգանապես կապված են պետության հետ: Նրանք սահմանվում կամ վավերացվում են իրավասու պետական մարմինների կողմից: Պետությունն իր կողմից առաջարկվող վարքի կանոնները երաշխավորում է և խախտումից պահպանելու համար նախատեսում է հարկադրական միջոցների կիրառում, որոնց սպառնալիքի ներքո անձն ընտրում է իր վարքագծի ձևը: Դա անհրաժեշտ է խախտված իրավունքը վերականգնելու, վնասի փոխհատուցման, հանցագործներին պատժելու, հասարակությունից մեկուսացնելու և ընդհանրապես իրավունքի կարգավորիչ և պահպանական ֆունկցիաների կատարման համար:

5. Իրավական նորմերը կարգավորում են մարդկանց վարքը ոչ թե ընդհանրապես, այլ՝ միայն իրավահարաբերությունների միջոցով, որոնց սուբյեկտները իրավահավասար են, կապված են փոխադարձ իրավունքներով և իրավաբանական հարաբերություններով: Նորմը որպես իրավահարաբերությունների մոդել նկարագրում է մի կողմի հնարավորությունը իրականացնել իրավունքներ (ստանալ աշխատավարձ, պահանջել արձակուրդ, ներել կամ պահանջել պարտքը և այլն), իսկ մյուս կողմին՝ կատարել համապատասխան իրավաբանական գործողություններ կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություններից:

6. Վերջապես, իրավական նորմերի կարևոր հատկանիշներից է նրա ձևական որոշակիությունը: Իրավական նորմը կարող է ունենալ միայն գրավոր ձև: Նրանում պետք է հստակորեն նշված լինեն այն հանգամանքները, որոնցից կարող են իրավաբանական հետևանքներ բխել, պատասխանատվության տեսակը, չափը և ձևը:

Իրավունքի նորմը և նրանով կարգավորվող իրավահարաբերությունը իրավունքի ընդհանուր տեսության հիմնական կատեգորիաներն են, որոնց սահմաններում տեղավորված է փաստորեն նրա ամբողջ իմացական ապարատը:

ՀԱՐՑ 68. ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դեոնտալոգիայում (նորմի տրամաբանությունում) տարբերում են իրավական նորմի բուն բովանդակությունը կամ սահմանվող վարքի կանոնները և աղբյուրը, որից նորմը բխում է և որով այն պահպանվում է խախտումից: Դրան համապատասխանում է իրավական նորմի եռանդամ կառուցվածքը, որը ներկայացվում է տրամաբանական բանաձևով՝ «Եթե - ապա -հակառակ դեպքում», որի տարրերին համապատասխանում են նորմի հիպոթեզը, դիսպոզիցիան և սանկցիան:

Այդ բանաձևը կիրառելի է ցանկացած նորմի նկատմամբ և կնշանակի հետևյալը. «Գտնվելով տվյալ պետությունում կամ հանդիսանալով այդ պետության քաղաքացի (հիպոթեզ), անհրաժեշտ է պահպանել այդ պետության օրենքները (դիսպոզիցիա), հակառակ դեպքում նորմը խախտողի նկատմամբ կիրառվելու են հարկադրական միջոցներ»:

Առանձին կոնկրետ նորմերի նկատմամբ կիրարկման առումով այդ բանաձևը թույլ է տալիս պարզել. ովքեր և ինչ պարագաներում պետք է հետևեն նորմի պահանջներին, ինչ պետք է արվի նորմի իրականացման համար, պետական հարկադրանքի ինչ միջոցներով է այն պահպանվելու խախտումից:

Իրավական նորմերը զետեղվում են ճյուղային օրենսգրքերի և այլ

օրենքների հոդվածներում: Մեկ հոդվածը կարող է պարունակել մեկ և ավելի նորմեր: Նորմը կարող է բաղկացած լինել միայն հիպոթեզից (օրինակ՝ սահմանադրությունների նորմ-հռչակումները, նորմ-սկզբունքները, ծրագրային օրենսգրքերում տրվող սահմանումները և այլն) կամ բաղկացած լինել երկու տարրից: Օրինակ, քրեական օրենսգրքի հատուկ մասի բոլոր նորմերը բաղկացած են դիսպոզիցիայից և սանկցիայից, իսկ ընդհանուր մասի նորմերը չունեն սանկցիա, բաղկացած են մեկ կամ երկու տարրից: Իրավական նորմը կարող է ունենալ եռանդամ կառուցվածք: Այդ դեպքում ասում են «օրենքի տառն ու ոգին համընկնում են»: Չափազանց կարևոր է որպեսզի իրավաբանը, մասնավորապես իրավունքը կիրառող անձը կարողանա տարբերել նորմի տարրերը, ճիշտ մեկնաբանել նրանց բովանդակությունը, ինչը թույլ կտա խուսափել սխալներից և ճիշտ որոշումներ ընդունել:

Հիպոթեզը նորմի այն մասն է, որում նշվում են այն պայմանները, որոնց առկայությունն արտաքին աշխարհում հիմք է ծառայում նորմի կիրառման համար: Նրանում կարող է մատնանշվել նաև իրավահարաբերության մասնակիցների շրջանակը:

Դիսպոզիցիայում նշվում են իրավահարաբերությունների սուբյեկտների իրավասությունները, պահանջվում է նրանցից կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ գործողություններից: Դիսպոզիցիայում նշվում են նաև հանցագործության կամ այլ իրավախախտման հիմնական հատկանիշները, որոնց առկայությունն անձի արարքում թույլ է տալիս այն որակավորել որպես հանցագործություն կամ վարչական զանցանք:

Սանկցիան նորմի այն մասն է, որում նշվում են իրավաբանական ներգործության տեսակները, պատժի (տույժի, քաղաքացիական պատասխանատվության) չափն ու ձևը:

ՀԱՐՑ 69. ԻՐԱՎԱԶՈՐՈՂ, ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՂ ԵՎ ԱՐԳԵԼՈՂ ՆՈՐՄԵՐԸ

Ըստ վարքի կանոնների բնույթի՝ իրավական նորմերը դասակարգվում են իրավազորող, պարտավորեցնող և արգելող նորմերի:

Իրավազորող նորմերով սահմանվում են որոշակի իրավասություններ, որոնք երաշխավորվում են ուրիշ անձանց՝ համապատասխան պարտավորություններով: Դրանց թվին են պատկանում գույքային, աշխատանքային, կրթության, կենսաթոշակի և բազմաթիվ այլ իրավունքներ սահմանող նորմերը:

Պարտավորեցնող են այն նորմերը, որոնցում պահանջվում է դրսևորել պատշաճ վարք: Օրինակ, վերադարձնել պարտքը, փոխհատուցել պատճառած վնասը, աշխատավորին վերականգնել պաշտոնում, կատարած աշխատանքի համար վճարել և այլն: Պարտավորեցնող են պարտականություններ սահմանող բոլոր քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան, վարչական և այլ օրենքների նորմերը:

Արգելող են այն նորմերը, որոնք պարունակում են հանցակազմ կամ այլ իրավախախտման կազմ և համապատասխան սանկցիաներ դրանց կատարման համար: Այդ տեսակի նորմերը իրավունքի համակարգում հատուկ տեղ են գրավում, քանի որ դրանց միջոցով են ապահովվում օրինականության և իրավակարգի պահպանությունը, հասարակության համար վտանգ ներկայացնող արարքների կանխարգելումը և խափանումը: Արգելող նորմերը հասցեագրված են բոլոր մեղսունակ (գործունակ) անձանց և կրում են բացարձակ բնույթ: Արգելող նորմերի գլխավոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ իրավունքը ձգտում է ոչ թե կարգավորել, այլ՝ կանխարգելել և խափանել դրանցով նախատեսված արարքները:

ՀԱՐՑ 70. ՈՐՈՇԱԿԻ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԲԱՐ-ՈՐՈՇԱԿԻ, ԻՄՊԵՐԱՏԻՎ ԵՎ ԴԻՍՊՈԶԻՏԻՎ ՆՈՐՄԵՐԸ

Իրավունքի նորմերի դասակարգման մեջ, որոշակի և հարաբերաբար-որոշակի նորմերի, արտահայտվում է իրավական կարգավորման հստակու-

թյան աստիճանը: Հստակության աստիճանի տարբերությունները բնորոշ են նորմի հիպոթեզին և դիսպոզիցիային: Որոշակի հիպոթեզում հստակորեն մատնանշվում են նորմի կիրառման սպառիչ պայմանները, իսկ հարաբերաբար-որոշակի հիպոթեզում նորմի կիրառման պայմանները հստակորեն չեն նշվում: Այդ պայմանների առկայության կամ բացակայության հարցը լուծում են իրավակիրառող մարմինը կամ իրավահարաբերության սուբյեկտները: Որոշակի դիսպոզիցիայում հստակորեն նշվում են իրավահարաբերության սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները, նրանց գործողությունների բնույթը կամ իրավախախտման հիմնական հատկանիշները: Հարաբերաբար-որոշակի դիսպոզիցիայում հստակորեն չեն մատնանշվում իրավահարաբերության սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները կամ իրավախախտման կոնկրետ հատկանիշները: Այդ հատկանիշների առկայության կամ բացակայության հարցը լուծում է իրավակիրառող մարմինը: Օրինակ՝ ՀՀ ՔՕ 103 հոդվածի դիսպոզիցիան շարադրված է այսպես. «Անզգուշությամբ կատարված սպանություն», առանց անզգուշության հատկանիշները մատնանշելու: Այդ հատկանիշների հարցը պետք է լուծի իրավակիրառող մարմինը:

Նորմի հստակության աստիճանից է կախված նաև դասակարգումը իմպերատիվ (կատեգորիկ, անպայմանական) և դիսպոզիտիվ նորմերի: Եթե իրավահարաբերության հիմքերը և բովանդակությունը հստակորեն, սպառիչ և կատեգորիկ ձևով են արտահայտված, ապա նման նորմերը իմպերատիվ են: Եթե նորմի դիսպոզիցիան իրավունքի սուբյեկտներին թույլ է տալիս ճշտել, կոնկրետացնել կամ վերանայել իրենց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, ապա նման նորմերը դիսպոզիտիվ են: Իմպերատիվ են, օրինակ, քրեական օրենսգրքի հատուկ մասի բոլոր արգելող նորմերը, իսկ դիսպոզիտիվ են այն իրավազորող նորմերը, որոնք թույլ են տալիս օգտվել կամ չօգտվել իր իրավունքից: Օրինակ, ներել պարտքը կամ վնասի արժեքը և այլն:

ՀԱՐՑ 71. ՎԿԱՅԱԿՈՂՈՂ ԵՎ ԲԼԱՆԿԵՏԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԸ

Ըստ շարադրման եղանակի՝ իրավական նորմերը դասակարգվում են վկայակոչող և բլանկետային նորմերի:

Վկայակոչող նորմում նշվում են վարքի ոչ բոլոր կանոնները կամ ոչ բոլոր տեղեկությունները: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար վկայակոչվում են նույն նորմատիվ-իրավական ակտի այլ հոդվածների նորմերը, որոնցում գտնվում են բացակայող տեղեկությունները: Վկայակոչող նորմերը զգալի տեղ են գրավում ճյուղային օրենսգրքում և կարևոր նշանակություն ունեն գործերի բազմակողմանի ուսումնասիրման և ճիշտ որոշումներ կայացնելու համար:

Բլանկետային նորմերի անհրաժեշտությունը բխում է նրանից, որ հնարավոր չէ նրանում որևէ աստիճանի հստակությամբ ձևակերպել նորմի հիպոթեզը կամ դիսպոզիցիան: Այդ պատճառով օրենսդիրը վարքի կանոնը շարադրում է ընդհանուր ձևով: Հստակորեն սահմանում է միայն սանկցիան, այսինքն՝ միայն պատասխանատվությունը այդ ընդհանուր ձևով արտահայտված կանոնի խախտման համար: Քանի որ կոնկրետ վարքի կանոնները չեն նշվում, ապա դրանք գտնվում են այլ նորմատիվ ակտում կամ ակտերում:

Բլանկետային նորմերը, որպես կանոն, իմպերատիվ են, սակայն կանոնները, որոնց խստացման համար մեղավորը պատասխանատվություն է կրելու, չեն նշվում և նույն նորմատիվ ակտի այլ հոդվածներ չեն վկայակոչվում: Այսպես ՀՀ ՔՕ 235 հոդ. սահմանում է. «Շինարարության և հանքագործական աշխատանքներ կատարելու վերաբերյալ սահմանած կանոնները, ինչպես նաև շինանարարական և հանքագործական աշխատանքներ կատարելիս անվտանգության կանոնները խախտելը, եթե դա մարդկանց հետ դժբախտ դեպքեր է առաջացրել կամ այլ ծանր հետևանքներ է ունեցել՝ պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև հինգ տարի ժամանակով»: Այս հոդվածում հստակ շարադրված է միայն սանկցիան, իսկ թե ինչ կոնկրետ կանոններ են խախտվել՝ նորմը լռում է: Որպեսզի տվյալ նորմը գործի, անհրաժեշտ է, որպեսզի քննիչը, դատախազը, փորձագետները, դատա-

վորը դիմեն այլ իրավական ակտերի (հրահանգների, դրույթների, հրա-
մանների և այլն), որոնցում ամրագրված են կոնկրետ վարքի կանոններ, որի համար պատասխանատու են որոշակի անձինք:

Այսպիսով, եթե նորմը բլանկետային է, ապա պակասող տեղեկություն-
ները պետք է փնտրել տվյալ բնագավառը կարգավորող այլ նորմատիվ ակտերում: Բլանկետային եղանակով են շարադրված բոլոր այն նորմերը, որոնք քրեական կամ վարչական պատասխանատվություն են սահմանում տնտեսության տարբեր բնագավառներում, տրանսպորտի բոլոր տեսակներում և այլ ոլորտներում անվտանգության կանոնների խախտման համար, որոնց պատճառով ամեն տարի տասնյակ հազարավոր մարդիկ են զոհվում, իսկ պետությունները կրում են հսկայական նյութական վնաս:

ՀԱՐՑ 72. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԻ ՍԱՆԿՑԻԱՆ ԵՎ ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Եթե նորմի հիպոթեզը մատնանշում է նրա կիրառման սահմանները կամ պայմանները, իսկ դիսպոզիցիան՝ իրավահարաբերությունների սուբյեկտների վարքի ձևերն ու եղանակները, ապա սանկցիայում նախատեսվում են պետական հարկադրանքի այն միջոցները, որոնք կիրառվում են նորմը խախտող անձի նկատմամբ:

Իրավական նորմերի սանկցիաները դասակարգվում են երեք տեսակների՝ որոշակի, հարաբերաբար-որոշակի և այլընտրանքային:

Որոշակի սանկցիաները կրում են բացարձակ բնույթ և նախատեսում իրավաբանական պատասխանատվության մեկ կոնկրետ միջոց: Այդպիսի սանկցիաները բնորոշ են քաղաքացիական օրենքի նորմերին, որոնցում խոսքը գնում է սեփականատիրոջ բացարձակ իրավունքների, գործարքների, չեղյալ ճանաչելու, որևէ իրավունքի դադարեցման, վնասի փոխհատուցման մասին և այն:

Հարաբերաբար-որոշակի սանկցիաները առավել բնորոշ են քրեական և վարչական իրավունքի նորմերին, որոնցում նշվում են պատիժների (տույժերի) նվազագույն և առավելագույն չափերը: Բացի այդ, նախատեսվում են լրացուցիչ պատժամիջոցներ, որոնց կիրառումը նախատեսվում է

նորմով կամ թողնվում է դատարանի հայեցողությանը:

Այլընտրանքային սանկցիայում նախատեսվում է մի քանի պատժամիջոց, որոնցից պետք է ընտրվի մեկը: Այդ ընտրության իրավունքը տրվում է, հանցագործության դեպքում՝ դատարանին, վարչական զանցանքի դեպքում՝ դատարանին և այլ իրավապահ ու վերահսկիչ մարմիններին:

ՀԱՐՑ 73. ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԸ

Իրավունքի այն նորմերը, որոնցում նախատեսված են սանկցիաներ, կիրառվում են հատուկ ընթացակարգով, որով ապահովվում է քրեական և քաղաքացիական գործերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ու ճշմարտության բացահայտումը: Այդ կապակցությամբ իրավական նորմերը դասակարգվում են նյութական (մատերիալ) և ընթացակարգային (պրոցեսուալ) նորմերի:

Նյութական իրավունքի նորմերը այն նորմերն են, որոնք բնորոշում են իրավունքների, պարտականությունների և արգելքների բովանդակությունը: Նյութական իրավունքի նորմեր են բովանդակում քրեական, քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան և այլ օրենսգրքերի հոդվածները և այլ օրենքներն ու ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը:

Ընթացակարգային նորմերը այն նորմերն են, որոնցով սահմանվում է նյութական իրավունքի նորմերի իրացման ընթացակարգը: Ընթացակարգային նորմերից են բաղկացած քրեական դատավարության, քաղաքացիական դատավարության օրենսգրքերը և այլ նորմատիվ-իրավական ակտեր (օրինակ, ՀՀ և այլ պառլամենտների կանոնակարգերը և այլն):

Նյութական իրավունքի նորմերը սահմանում են իրավունքներ և պարտականություններ, որոնք անհրաժեշտ են մարդկանց, նրանց միավորումների, պետական իշխանության մարմինների միջև հարաբերությունների կարգավորման համար: Նյութական իրավունքի նորմերով են սահմանվում պետական իշխանության կառուցվածքը, նրա ապարատի մարմինների իրազորություններն ու ֆունկցիաները, մարդու և քաղաքացու իրավունքները, ազատությունները և պարտականությունները:

Ընթացակարգային նորմերը սահմանում են նյութական իրավունքի

նորմերի իրացման համար անհրաժեշտ հետաքննության, նախաքննության, դատաքննության և այլ գործողությունների ընթացակարգը, իրավակիրառող մարմինների գործունեության կարգը, դատաքննչական պրոցեսի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Այսպիսով, նյութական իրավունքի նորմերը կազմում են օրենսդրության առաջին շերտը և մատնացույց են անում, թե «ինչ անել»: Ընթացակարգային նորմերը կարծես թե կազմում են օրենսդրության երկրորդ շերտը և մատնանշում են, թե ինչ իրավաբանական եղանակներով է իրականացվում նյութական իրավունքի պաշտպանությունը, նրանց վերականգնումը և ցույց են տալիս «ինչպես դա անել»:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «ընթացակարգ» հասկացությունը բնորոշ է ոչ միայն քրեական կամ քաղաքացիական գործերով ընթացակարգին, այլ տարածվում է նաև պետական մարմինների գործունեության որոշակի կողմերի վրա: Օրինակ, հաճախ պառլամենտի գործունեությունը բնորոշվում է որպես «օրենսդրական պրոցես», իսկ վարչական մարմինները՝ «վարչական պրոցես»:

ՀԱՐՑ 74. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԻ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԻ ՏԵՔՍՏԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր իրավական համակարգում (ռոմանա-գերմանական ընտանիքի) իրավունքի հիմնական աղբյուրներն են համարվում նորմատիվ-իրավական ակտերը, որոնց տեքստերում՝ բաժիններում, մասերում, գլուխներում, հոդվածներում զետեղվում են իրավական նորմերը: Սակայն իրավական նորմը և նորմատիվ ակտի հոդվածը նույնական չեն: Հոդվածի կառուցվածքը բոլորովին չի համընկնում նորմի տրամաբանական կառուցվածքի հետ: Դա արտահայտվում է մասնավորապես նրանում, որ իրավական նորմը կարող է պարունակվել մի քանի հոդվածում: Օրինակ, ՀՀ ՔՕ 99,100,101 հոդվածներում խոսքը գնում է դիտավորյալ սպանության մասին: Օրենքի մի հոդվածում կարող են զետեղվել մեկ, երկու և ավելի իրավական նորմեր: Օրինակ, սահմանադրությունների շատ հոդվածներ կամ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածների մասերն ու կետերը և այլն: Օրենքի

հոդվածը կարող է բաղկացած լինել նաև մեկ նորմից: Օրինակ, ՀՀ ՔՕ 103 հոդվածը՝ անզգույշ սպանություն:

Նորմատիվ ակտի մի հոդվածում, նույնիսկ մեկ նորմատիվ ակտում, չեն կարող լրիվ ծավալով արտահայտվել իրավական նորմի բոլոր տարրերը այնպես, որպեսզի այն ծառայի վարքագծի էտալոն: Շատ օրենսգրքերի ընդհանուր մասերում շարադրված են հոդվածների տեսքով ձևակերպված դրույթներ, որոնք վերաբերում են բոլոր հաջորդ բաժիններում և գլուխներում զետեղված նորմերին, կապված են նրանց հետ: Օրինակ, հնարավոր չէ կիրառել քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերը առանց հաշվի առնելու ընդհանուր մասի նորմերի պահանջները:

Իրավական նորմերի տարրերը արտահայտվում են հոդվածներում, դրանց մասերում և կետերում: Այն նորմերը, որոնք տրամաբանորեն ավարտված են և համապատասխանում են «եթե-ապա-հակառակ դեպքում» բանաձևին, կոչվում են նորմատիվ կարգադրագրեր: Նույնիսկ այդ ամբողջական նորմերը չեն կարող լիակատար վարքի կանոն հանդիսանալ առանց տվյալ օրենսդրության հիմունքային սկզբունքներն ու դրույթները հաշվի առնելու:

Իրավական նորմերի մեծ մասը բաղկացած են երկու տրամաբանական տարրերից՝ «Եթե-ապա» կամ ունեն միայն քերականական կառուցվածք: Օրինակ, նորմ հռչակումները, հասկացությունների սահմանումները և այլն:

Իրավունքի նորմը և օրենքի հոդվածը ոչ միշտ են նույնական նաև այն պատճառով, որ նորմատիվ ակտերին, ինչպես գեղարվեստական ստեղծագործությանը, բնորոշ է որոշ պատկերավորություն և կողմնորոշում դեպի հասարակական իրազեկվածությունը: Այսպես, քրեական օրենսդրությունում կարելի է հայտնաբերել տրաֆիցիոն և կարծես թե սխալ ձևակերպումներ. «հանցագործություն՝ հափշտակում, շորթում, սպանություն, խուլիգանություն, բանդիտիզմ և այլն՝ պատժվում է...», չնայած իրականում ոչ թե հանցագործություններն են պատժվում, այլ հանցագործները՝ գողը, մարդասպանը, խուլիգանը, բանդիտը և այլն:

Նորմատիվ ակտերի տեքստերում կարող են պարունակվել ոչ միայն նորմատիվ կարգադրագրեր, այլ նաև քաղաքական բնույթի հիմնավորումներ, կոչեր, հաղիսավոր հռչակումներ, սկզբունքներ, բարոյա-քաղաքական

դրույթներ և այլն: Իհարկե, օրենքի կամ այլ ակտի տեքստին գաղափարական ուղղվածություն տալու ձգտումը կարելի է հասկանալ, բայց դժվար թե դա արժանի է խրախուսանքի, քանի որ այդպես իրավունքը կարելի է վերածել «քաղաքական դեկլարացիայի»:

Գործող սահմանադրություններում հանդիպում են նորմեր, որոնց իրականացումը հնարավոր չէ առանց լրացուցիչ օրենքի կամ այլ նորմատիվ ակտի ընդունման: Օրինակ, ՌԴ Սահմանադրությունում (հոդ. 59) շարադրված է դրույթ այլընտրանքային զինվորական ծառայության վերաբերյալ, որից Ռուսաստանի քաղաքացիները մինչև 2002թ. չէին կարող օգտվել օրենքի բացակայության պատճառով:

Տեսական վիճաբանություններ են ընթանում ուսումնական և գիտական գրականության մեջ իրավունքի և օրենքի հարաբերակցության մասին, որոնց ընթացքում իրավունքն ու օրենքը հակադրվում են միմյանց: Ոմանք վերացական դատողությունների հիման վրա համարում են, որ իրավունքը ազատության չափանիշ է և միշտ լավ ու արդարացի է, իսկ օրենքը՝ հաճախ անարդարացի և վատ է: Նման բանավեճերը մեղմացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի վերացական բնույթ կրող դատողությունները օրենսդիրը կարողանա վերածել հստակ նորմատիվ կարգադրագրերի, որոնց էֆեկտիվությունը պետք է արտահայտվի հասարակական հարաբերությունների կարգավորման պրոցեսում և բավարարի քաղաքացիների և նրանց կազմակերպությունների, այլ ոչ թե առանձին անձանց կամ խմբավորումների շահերը: Բացի այդ, օրենսդիրը պետք է այնպես ստեղծագործի, որպեսզի պոզիտիվ նորմերի հիմքում ընկած լինեն բնական իրավունքի և իրավական պետության սկզբունքների պահանջները, որպեսզի չծագի հակադրությունը իրավունքի և օրենքի միջև:

Բոլոր այն երկրներում, որոնցում իրավունքի հիմնական աղբյուրը նորմատիվ ակտերն են, գոյություն ունի «օրենքի տառի» և «օրենքի ոգու» հարաբերակցություն, պայմանավորված նրանով, որ օրենսդրի միտքը ոչ միշտ է բավականաչափ ճիշտ արտահայտվում նորմատիվ ակտի տեքստում: Դա կարող է բացառվի, եթե նորմերը ստեղծագործվեն, և ոչ թե միայն ձևակերպվեն: Նախ, անհրաժեշտ է պատասխանել, թե ով, երբ, ինչ պարագաներում ինչ իրավունք ունի և ինչ պարտականություններ է կրում,

պետական հարկադրանքի ինչպիսի միջոցներ են կիրառվում նորմի խախտման դեպքում: Ապա, նորմը նախագծելիս պետք է որոշվի, թե նրա որ դրույթներն ունեն իրավաբանական նշանակություն: Վերջապես, կարող է այնպես պատահել, որ իրավական նորմը օրենքի կամ այլ նորմատիվ ակտի տեքստում ճիշտ չի շարադրվել, որի հետևանքով նորմի տեքստը ճիշտ չի ընկալվում և ենթակա է սահմանափակ կամ տարածական մեկնաբանման, ինչը բոլորովին ցանկալի չէ:

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՐՑ 75. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Իրավահարաբերությունները հասարակական կյանքի առավել կարևոր երևույթներից են: Իրավունքի նորմերը, որպես վարքի կարգավորման միջոց, հանդես են գալիս որպես ինչ-որ արտաքին միջավայր մարդկանց համար: Իրավունքը և նրա նորմերը ոչ մի սուբյեկտի չեն պատկանում, այսինքն՝ կրում են օբյեկտիվ բնույթ: Այդ պատճառով իրավունքի նորմերի ամակարգը անվանում են ***օբյեկտիվ իրավունք:***

Սակայն իրավական նորմերն ունեն նաև սուբյեկտիվ բնույթ, այսինքն՝ գոյություն ունեն մարդկանց, նրանց կազմակերպությունների, որոնց թվում, նաև պետական իշխանության համար: Իրավունքը, որպես անձի ազատության չափանիշ, նախատեսում է վարքագծի հարաբերաբար ազատ դռսևորման, բնական և հոգեկան պահանջմունքների բավարարման հնարավորություն, որն իրականացվում է օրենքով նախատեսված սահմանափակումներով: Անձի վարքի դռսևորման հնարավորությունը իրավագիտության մեջ կոչվում է ***սուբյեկտիվ իրավունք***:

Իրավական նորմերի կարգադրագրերին պետք է հետևի յուրաքանչյուր անձ, քանի որ դրանով պաշտպանվում են ուրիշների և ամբողջ հասարակության ազատությունը և շահերը: Վարքի այդպիսի պատշաճ դռսևորումը իրավագիտության մեջ կոչվում է ***իրավաբանական պարտականություն***:

Օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքը և իրավաբանական պարտականությունը միասին կազմում են իրավական հարաբերությունների հիմքը: Իրավաբանական գրականության մեջ տրվում են իրավահարաբերության կարճ և ծավալուն սահմանումներ: Ստորև տրվում են այդ սահմանումներից երկուսը:

Իրավահարաբերությունը իրավական նորմերով կարգավորվող հարաբերություններ են, որոնց մասնակիցները հանդես են գալիս որպես սուբյեկտիվ իրավունքների և իրավաբանական պարտականությունների սուբյեկտներ: Կամ այսպես: ***Իրավահարաբերությունները*** հարաբերություններ են մարդկանց և նրանց կազմակերպությունների միջև որևէ առարկայի վերաբերյալ, որոնք կարգավորվում են օբյեկտիվ իրավունքի նորմերով և պայմանավորված են իրավահարաբերության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքներով ու իրավաբանական պարտականություններով:

Իրավահարաբերությունը հասարակական կյանքի չափազանց կարևոր կողմերից է: Հասարակության կենսագործունեությունն ապահովվում է տնտեսական, քաղաքական, աշխատանքային, ընտանեկան և բազմաթիվ այլ հարաբերությունների շնորհիվ, որոնցից յուրաքանչյուրում ներկա են իրավական հարաբերությունները: Այդ առումով իրավահարաբերությունները եզակի հասարակական երևույթներից են:

ՀԱՐՑ 76. ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Իրավահարաբերությունների միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են իրականացնել իրենց իրավունքները, պաշտպանել իրենց օրինական շահերը, իսկ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք կատարում են իրենց պարտականությունները պետության և հասարակության առջև: Օրինակ, հանցագործության դեպքում քրեական գործը ոչ թե կարող է, այլ պարտավոր է հարուցել պետության համապատասխան մարմինը, իսկ հանցագործության կապակցությամբ ծագած իրավահարաբերության մի կողմը հանցագործն է, իսկ մյուսը՝ պետությունը:

Իրավահարաբերությունները դինամիկ են, նրանք ծագում, փոփոխվում, դադարում և նորից են վերսկսվում նույն կամ այլ անձանց միջև: Իրավահարաբերության ծագման համար անհրաժեշտ է երեք պարտադիր պայման.

-իրավահարաբերությունների ծագման համար հիմք հանդիսացող

իրավական նորմի առկայություն,

-իրավահարաբերության ծագման համար անհրաժեշտ իրավական փաստի առկայություն,

-իրավահարաբերության մասնակիցների իրավասուբյեկտիվությունը:

Իրավահարաբերությունները դասակարգվում են երկու հիմնական տեսակների՝ երկկողմանի և միակողմանի իրավահարաբերությունների:

Երկկողմանի իրավահարաբերությունները ամենապարզ և առավել տարածվածներն են: Այն ենթադրում է իրավահարաբերության երկու մասնակիցների իրավունքների փոխկապվածություն և փոխադարձություն: Օրինակ, գնորդի իրավունքին համապատասխանում է վաճառողի պարտականությունը գնողին փոխանցել գնած իրը, իսկ գնորդը պարտավոր է վճարել իրի արժեքը: Աշխատանքային պայմանագրով գործատուն իրավունք ունի պահանջել, որպեսզի աշխատավորը կատարի իր աշխատանքը, իսկ աշխատավորը պարտավոր է կատարել այդ պահանջը: Փոխադարձությունը այստեղ կայանում է նրանում, որ աշխատավորն իրավունք ունի իր կատարած աշխատանքի համար պահանջելու աշխատավարձ, իսկ գործատուն պարտավոր է ժամանակին վճարել այն:

Միակողմանի իրավահարաբերության ծագման համար բավական է մի կողմի կամքի արտահայտությունը: Դրանք հիմնականում վերաբերում են մի քանի քաղաքացիական գործարքների՝ ժառանգությանը, նվիրատվությանը, հեղինակային իրավունքի փոխանցմանը: Միակողմանի ծագում ունեն քրեական և վարչական ոլորտների իրավահարաբերությունները, որոնք ծագում և դադարեցվում են պետական մարմինների նախաձեռնությամբ:

Սկզբունքորեն այլ կառուցվածք ունի այն իրավահարաբերությունը, որում հայտնի է միայն մի կողմը՝ իրավատերը: Օրինակ, սեփականատիրոջ իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ չխախտել այդ իրավունքը: Նման կապը «իրավահարաբերությունների մասնակիցների» միջև աննկատելի է, սակայն հենց որ սեփականության իրավունքը խախտված է, մեղավորը և նրա պատասխանատվությունը սեփականատիրոջ առջև անմիջապես երևան են գալիս:

Այդպիսի հարաբերությունները, որոնք պարտավորեցնում են բոլորին

և յուրաքանչյուրին, կոչվում են ***բացարձակ*** իրավահարաբերություններ: Քաղաքացիական իրավունքում բացարձակ են նաև հեղինակների իրավունքները, վարչական իրավունքում՝ պետական մարմնի (պաշտոնատար անձի) իրավունքը՝ խափանել հասարակական կարգի խախտումը: Բացարձակ իրավունքներ կարող են ունենալ վերահսկիչ մարմինները (մաքսային, հարկային, հակահրդեհային, սանիտարա-համաճարակային, էկոլոգիական և այլն):

Կան իրավահարաբերություններ, որոնցում մասնակցում են ոչ թե երկու, այլ՝ ավելի կողմեր: Օրինակ կարող է ծառայել շինարարական կապալը, որի կողմերն են պատվիրատուն և գլխավոր կապալառուն: Վերջինի կողմից շինարարությանը կարող են մասնակցել ենթակապալառուներ, հաճախ բազմաթիվ: Սակայն դա չի ազդում իրավահարաբերության երկկողմ կառուցվածքի վրա, քանի որ մասնակիցները երկուսն են: Դրանք են միայն օժտված փոխադարձ իրավունքներով:

Իրավահարաբերությունները կարող են լինել հասարակ և բարդ: Հասարակ իրավահարաբերությունը ենթադրում է մեկ փոխադարձ իրավունք ու պարտականություն: Օրինակ, մանրածախ առք ու վաճառքի պայմանագիրը: Բարդ են այն իրավահարաբերությունները, երբ կողմերը կապված են մի քանի փոխադարձ իրավունքներով և պարտականություններով:

ՀԱՐՑ 77. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Իրավունքի սուբյեկտներ են հանդիսանում ֆիզիկական անձինք և կազմակերպություններ (իրավաբանական անձինք), որոնք օժտված են հատուկ իրավաբանական հատկությունով՝ իրավասուբյեկտությունով, որը հնարավորություն է տալիս իրավունքի սուբյեկտներին՝ մասնակցել տարբեր իրավահարաբերությունների:

Իրավասուբյեկտությունը բաղկացած է երկու տարրից՝ իրավաունակությունից և գործունակությունից: Իրավաունակությունը օրենքով նախա-